201
7-23

ՍՏՈՒԳՎԱԾ Է
1952 թ.

281
Դ-23

# ԱՂԱՆԴԱՒՈՐՔ

## ԵՒ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԱ
## Ի ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՍ
## ՀԱՒԱՏՈՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԴԱՒԹԵԱՆ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1891—ՌՅԽ

1-40

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ**

ՎԵՀԱՓԱՌ ՆԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ․

1547

4649

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ առաքելոց խմբի մէջ՝ Թէպէտ եւ զանազանուած էին քարոզող անձինք, բայց վարդապետութիւնը նոյնն էր, ըստ որում մի էր եւ նոցա հոգին շարժող ճարտարը-սուրբ Հոգին Աստուած. զորս համար՝ քարոզն հեթանոսաց Պօղոս առաքեալ կասէր. Արդ եթէ ես՝ եւ եթէ նոքա՝ այսպէս քարոզեմք[1]:

Թէ նոյն իսկ առաջին դարերուն մէջ՝ եւ Թէ յետոյ, սրբազան առաքելոց յաջորդաց՝

---

[1] Ա. Կորն. ԺԵ. 11.

ի վնաս եկեղեցւոյ, փոխանակեցին այնպիսիներ՝ առաքելական անուան տակ քողարկուած, որոնք թէ պատւոյ եւ մեծութեան ձգտումն ունենալէն յափշտակուած, եւ թէ ժամանակին ոգւոյ բռնակալեալ քմահաճութիւնէն ստիպուած, ինչպէս պատմութիւնէն կստուգուի՝ շեղուեցան առաքելական սուրբ եկեղեցւոյ ուղիղ վարդապետութիւնէն, եւ այլ եւ այլ մոլորութեամբ զանազան աղանդներու բաժանուեցան, որով դարձան առիթ գայթակղութեանց, երկպառակութեանց եւ ազգի ազգի դժտութեանց:

Արդարեւ ըստ առաքելոյն Պօղոսի, Ունայնացան ի խորհուրդս իւրեանց, եւ խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա: Զանձինս առ իմաստունս ունէին եւ յիմարեցան [1]:

Ահա այսպէս աղանդաւորք դարերու ընթացքում շարունակ, աստուածամարդն Քր-

---

[1] Հռովմ. Ա. 21. 22.

րիստոսի սուրբ աւետարանի սիրոյ դասերուն տակ՝ տակաւին Թաղցրած աշխարհային փառաց եւ մեծութեան ապազան, փոխանակ՝ այս է պատուէր իմ զի սիրեսջիք զմիմեանս, կենսատու խօսքերը քարոզելու, մարդկանց իրարու դէմ յաղթութիւն կը կրթեն եւ Քըրիստոսի սուրբ եկեղեցւոյ անդամները գըրգռելէ թշնամութեամբ իրարու դէմ զինելով՝ կը յափշտակեն զնոսա իրանց տիրական գըրկէն եւ այնուհետեւ փրկչական սիրոյ կապը մոռացնել տալով՝ քանսարկութիւն նախանձը կըսերմանեն սրտերնուն մէջ:

Տեսնալով որ հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ պարզամիտ ժողովըրդէն ևս՝ ոմանք տկարամտութեամբ կխաբուին աղանդաւորաց մոլորեցուցիչ հրճուածոց հետեւելով, ձեռնարկեցի այն փոքրիկ աշխատութեամբ ակներեւ կացուցանել սուրբ եկեղեցւոյ ուղիղ վարդապետութիւնը, եւ աղանդաւորաց զեղծումները եւ նոցա թշուառ մոլորութիւնները հակառակ վարդապետութեան

մէջ. որպէս զի իւրաքանչիւր որ աչքի առաջ ունենալով նոցա սխալ ըմբռնումը, չը հրապուրուի կեղծաւորաց պատիր շողոքորթութեամբ՝ եւ ճգէ ճանաչել իւր մայրենի եկեղեցին, որ իւր հիմն զՔրիստոս ունենալով՝ առաքելոց քարոզութեամբ հաստատութիւն գտած է եւ սրբուած է նահատակաց արեամբ:

# ԱՂԱՆԴԱՒՈՐՔ

## ԵՒ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԱ Ի ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՍ ՀԱՒԱՏՈՑ.

### ԳԼՈՒԽ Ա.

[illegible] եկեղեցւոյ [illegible] և նոյն [illegible]

ՔՐԻՍՏՈՍԻ սուրբ եկեղեցին՝ իւր սկզբնաւորութեան օրէն, սկսած առաջին դարէն մինչև այժմ, միշտ ունեցած է իւր հակառակորդները. Սուր, հալածանք չեն պակսած նորա բարոյական լոյսը մարելու, սակայն սուրբ եկեղեցին իւր լոյսը ի Հօրէ լուսոյ ունենալով և իւր հիմը

հաստատուն հիման՝ Յիսուսի Քրիստոսի վերայ դրուած լինելով՝ հաստատ քայլերով յառաջ գնաց։

Որքան թշնամիք ճիգն թափեցին նորա հաստատութիւնը խախտել, առաւել եւս ամրապնդուեցաւ եւ տարածուեցաւ. որովհետեւ Յիսուս Քրիստոս՝ անբաժան իւր եկեղեցուց՝ ինքն կը հաստատէր, եւ ինքն էր որ միշտ կը զօրացնէր եւ կը քաջալերէր սրբազան առաքելոց սուրբ աւետարանի քարոզութեան մէջ՝ ըստ իւր խոստման. «Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի»[1]։

Մինչդեռ քրիստոնէութիւնը քայլ առ քայլ յառաջ կերթար, եւ երկրի վերայ դեռ եւս տիրող կրօն չէր դարձած, իսկզբան 35—43 Թ. Երուսաղէմի մէջ Հրէից ազգի՝ Հերովդէս Ագրիպպասի եւ ապա Հեթանոս կայսերաց հալածանաց

[1] Մատ. ԻԸ. 20.

հանդիպեց. 64 Թ. որ շուրջ 300 տարի տեւեց Ներոնէն սկսած մինչեւ Մեծն Կոստանդիանոս.

Այս միջոց սակաւաթիւ քրիստոնեայք գրեթէ աւանդութեամբ ընդունած քրիստոսական հաւատոյ ճշմարիտ վարդապետութիւնը, միամիտ սրտով և անկեղծ մտօք այդ աստուածային գանձը գաղտնի կը պահպանէին իրենց մէջ. Զի թէև նոյն միջոցներ եւս գտնուեցան մոլորութիւններ, հեթանոս մատենագիրները՝ Կելսոս 150 Թ. Լուկիանոս 200 Թ., Պորփիւր ասորի 250 Թ. և Հերոկղէս 300 Թ. զինուեցան քրիստոնէութեան դէմ գրչով, որոց նպատակն էր քրիստոնէութիւնը բառնալ աշխարհի երեսէն, բայց ընդհանուր ընդունելութեան չարժանացան. զի մի մի հերքուեցան քրիստոնէութեան ջատագով ժամանակակից եկեղեցւոյ սուրբ հայրերէն.

Իսկ երբ կրօնական հալածանքներ դա-

գարեցան, և քրիստոնէութիւն իւր ազատութիւնը ունեցաւ, և երկրի վերայ համաշխարհային կրօն դարձաւ, այնուհետև մոլորամիտք ոմանք մարդկային իմն մնաց գործ համարելով և ոչ աստուածային, սկսան իրենց մոլորութիւնը յառաջ վարել ընդդէմ սուրբ եկեղեցւոյ ուղիղ վարդապետութեան և քրիստոնէական սուրբ կրօնի.

Եկեղեցւոյ արտաքին զօրեղ հալածանաց ոչ սակաւ նպաստեցին նաև բարոյական ներքին հալածանքներ, նոյն իսկ առաջին երեք դարերուն մէջ: Սիմոնեանք և Երինթեանք, Մանիքեցիք, Ենկրատեանք և Գնոստիկեանք և ուրիշներ, թողած քրիստոնէական սուրբ կրօնը, փիլիսոփայ Պիւթագորասի մոլար աղանդին հետևելով, սկսան աւետարանական ճշմարտութեան, փրկչի հրաշից, և նորա աստուածութեան դէմ գինուել, իրենց մոլորութիւնը տարածելու նպատակաւ, սա-

կայն ի դժուր, իրենց ստութիւն հիմք չունենալով խայտառակեցան և ընկճեցան սուրբ աւետարանի վարդապետութեան առաջ, որոյ ծագումը խնդրան առաքեալք յայտնել էին հաւատացելոց ի զգուշութիւն. Բայց և հերձուածոց լինելոց են ի ձեզ, զի որ ընտիրքն իցեն ի ձեզ, երևեսցին [1].

Այս աղանդաւորներ կը մերժէին խապատ օրինօք ամուսնութիւնը, և կը քարոզէին հասարակաց լինել ամենայն ինչ. նոյնպէս կարգելէին մսեղէն կերակուր ուտելը՝ հոգեփոխութեան աղանդին յարելով. սոցա նման պակաս միշտ և տառապանք չհասցրին Քրիստոսի սուրբ եկեղեցւոյն աղանդապետներ և աղանդաւորներ, որոնք մին միւսի յետևից յերևան եկան, Ցիմենոս, Փելիքսոս, Ցիմենեանք և Փելիքսեանք, որոնք կուրանային Յիսուսի Քրիստոսի վերջին դատաստանը

---

[1] Ա. Կոր. ԺԱ. 19.

և մեռելոց ընդհանրական յարութիւնը, զորս Պօղոս առաքեալ մերժեց եկեղեցւոյ հաղորդութենէն [1]։

Երիոնեանք Քրիստոսի գերբնական ծնունդը կուրանային և նորա աշխարհ գալը վերջացած համարելով՝ կը կամենային հրէական կրօնը մասնաւոր փոփոխութեամբ ընդունիլ տալ հեթանոսաց և փրկութեան միակ աղբիւր ճանաչել։ Իսկ Գնոստիկեանք նիւթի յաւիտենական լինելը կը պաշտպանէին, և աշխարհի ըստեղծագործութիւնը Աստուծոյ չէին տալ։ Քրիստոսի իսկապէս մարմին առածն կուրանային և ըստ Մանիքեցւոց առաջօք իմն կը համարէին, և սորա նման տարբեր աղանդներ ծնեցին, որոնք նոր կտակարանի գրքերէն շատերը չընդունելով՝ կրճատեցին և ի թիւրն մեկնելով՝ սկան թանձր մոլորութեան մէջ խարխափել։

---

[1] Ա. Տիմ. Ա. 20. Բ. Տիմ. Բ. 17. 18.

Գնոստիկեանց գլխաւոր աղանդաւորներէն՝ կախարդ Սիմոն և Սիմոնեանք, կամեցան Աստուծոյ ճշմարտութիւնը և ամենակարողութիւնը դիւական հնարքներով մերժել. որպէս զի հաւատացեալք իրենց մոլորութիւնը պաշտեն, և միայն իրենց մոլար վարդապետութեան հետևին։ Սիմոն մոգ, որ Փիլիպպոս առաքելոյն քարոզութեամբ հաւատացած և ի Քրիստոս Յիսուս մկրտուած էր, տեսնելով առաքելոց արած հրաշքները, կամեցաւ Աստուծոյ շնորհաց պարգևը ընչիւք իրեն սեպհականել՝ հակառակ քրիստոնէական հաւատոյ ճշմարտութեան, և մօտենալով սրբազան առաքելոց՝ ասաց, «Տուք ինձ զիշխանութիւնդ զայդ, զի յոր վերայ դնիցեմ զձեռս, առցէ զՀոգին Սուրբ»[1]։

Պետրոս առաքեալ նորա այս անարժան վարմունքը յանդիմանեց ասելով, «Արծաթդ

---

[1] Գործ. Ը. 19։

քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպարգեւն Ա-ստուծոյ համարեցար ընչիւք ստանալ. ոչ գոյ մասն և վիճակ ի բանիդ յայսմիկ. քանզի սիրտ քո ոչ է ուղիղ առաջի Աստուծոյ [1]:

*Հերետիկոսութեան գլուխ Սիմոն՝ առաքելըներէն արժանապէս յանդիմանուելէն զկնի՝ գնաց Հռոմ, և սկսեց իւր մոլորութիւնը ընդարձակել, իւր անձն աստուածացուցանելով. մինչ զի Կղօդիոս թագաւոր անդրի* (պատկեր), *կանգնեց յանուն Սիմոնի և գրեց պատկերի վերայ,* Սիմոնի դէօ սանքթօ, *այն է՝ Սիմոնի սրբոյ աստուծոյ. բայց այս իւր մոլար խաբէութեան համար սրբազան առաքելոյ աղօթիւք մահու պատժի արժանացաւ:* Կոչման ընծայութեան. *գլ.* Զ. 113.

*Կերենթոս, Մենանդրոս, Կարպոկրատէս և Մարկէոն միայն Աստուծոյ արդարութիւնը և բարերարութիւնը խանգա-*

---

[1] Գործ. Ը. 19. 20.

րել և եղծանել յանդգնեցան և քրիստոսական հաւատոյ ճշմարտութիւնը խափանել և անարգել ջանացին. և յայտնապէս հակառակելով աստուածաշունչ սուրբ գրոց՝ համարձակ անկրօնութիւն սկսան քարոզել։ Իսկ Բասիլիդէս և Վաղենտինոս հերետիկոսապետներ մոլեգնաբար բազմաստուածութիւն հնարեցին. երեսուն յաւիտենականներ սահմանելով. երեսուն աստուածներ շաղփաղփեցին. և ուրիշներ. որոց համար գեղեցիկ կը գրէ սուրբ Կիւրեղ Երուսաղէմայ հայրապետը իւր Կոչումն ընծայութեան գրքին մէջ. Գլ. Զ. Երես 110—123. Ժ.Գ. 299—302.

## ԳԼՈՒԽ Բ.

Չորրորդ դարու աղանդաւորք և նոցա մոլորութիւնք։ Ջատագովք սուրբ եկեղեցւոյ ուղիղ վարդապետութեան։

ԱՅՍ աղանդաւորներէն յետոյ հետզհետէ ի վեր երևեցան Արիոս, Նեստոր, Եւտիքէս, Մակեդոնիոս, Սաբէլ լիբէացին և սոցա հետևողներ այլ և այլ աղանդներով, որոնք նորանոր և անլուր մոլորութիւններ տարածելով. պատճառ եղան հաւատացելոց պառակտման և եկեղեցւոյ դառն հալածանաց, և այնքան մեծ տագնապ յարուցին սուրբ եկեղեցւոյ դէմ. մինչև ժամանակի սուրբ հարք՝ հարկեցան ժողովոյ միաձայն հաւանութեամբ իբրև հերձուածող և հերետիկոս մերժել զնոսա սուրբ եկեղեցւոյ ծոցէն, և կանոնիւք՝ քրիստոնէից միաբանութեան և յարաբերութեան կապը իսպառ խզել

նոցա հետ։ Այստեղ հարկ կը համարիմ ուրոյն ուրոյն ծանօթացնել այս աղանդապետաց անձնաւորութեանց, և նոցա մոլորութեանց հետ՝ խօսելով իւրաքանչիւրի վերայ,

Արիոս լիբէացի աղանդապետ, հերձուածող և հերետիկոս կուրանար Յիսուսի Քրիստոսի համագոյ - Հօր՝ աստուածութիւնը, յաւիտենական ծնունդը, և չէր դաւանէր զՅիսուս Քրիստոս՝ Որդի Աստուծոյ հաւասար և համագոյակից Հօր և Սուրբ Հոգւոյն, այլ զՔրիստոս ստեղծական կը համարէր՝ միայն գեր ի վերոյ քան զարարածս· բայց ոչ Աստուած և Արարիչ, այլ օտար ոմն և արարած:

Այս մոլորութեան համար Արիոս և Արիոսեանք, իբրև հերձուածող և հերետիկոս վճռուեցան Նիկիոյ տիեզերական սուրբ ժողովոյ մէջ և երեք հարիւր տասն ութ հայրապետք նզովիւք դատապարտեցին 325 թ. Սոցա դէմ մեծ ախոյեան

կանգնեցան Բարսեղ Կեսարիոյ արքեպիսկոպոս, Գրիգոր Նիւսացի, Գրիգոր Նազիանզացի և Աթանաս Աղեքսանդրացի չորրորդ դարուն մէջ, որ հերքեց այն հին մոլորութիւնը, զոր միապետականք կը խորհէին Յիսուսի աստուածութեան և սուրբ երրորդութեան վարդապետութեան դէմ, որով խմորուած էին Արիոսեանք։

Արիոսականաց աղանդէն յետոյ Մակեդոնեանց աղանդը ծագեց Կ. Պոլսոյ Մակեդոնիոս պատրիարքի առաջնորդութեամբ, և այս աղանդ Արիոսի մոլորութեան մի խառնուրդ կը համարուէր։ Հոգեմարտն Մակեդոն կուրանար սուրբ Հոգւոյ աստուածութիւնը, և Հօր և Որդւոյ համագոյակից չէր խոստովանիր զՀոգին սուրբ Աստուած. այլ կը պնդէր թէ՝ Հոգին սուրբ՝ օտար է աստուածային բնութենէն և է ստացական, և ծառայ և պաշտօնեայ, և թէ՝ երկրպագելի չէ Հօր և Որդւոյ հետ. ուստի ըստ վճռոյ Կ. Պո-

սում՝ զու մարուած տիեզերական սուրբ ժողովոյ Հարիւր յիսուն Հայրապետաց միաձայն Հաւանութեամբ դատապարտուեց 381 թուին. որպէս Հերձուածող և Հերետիկոս, և նոյն ինքն Մակեդոն և նորա մոլորութեան Հետեւողներ եկեղեցուց դուրս ձգուեցան:

Նոյա Նեստոր Հերձուածող Կ. Պոլսոյ պատրիարք. սա խորամանկութեամբ ժողովրդոց Համարումն և վստահութիւնը ձեռք բերելով իրեն Հետեւողներ գտաւ, և սկսեց իւր մոլորութիւնը մինչև Եգիպտոսի անապատները Հասցնել. որի մոլորութեան դիմադրեց սուրբ Կիւրեղ Աղեքսանդրիոյ պատրիարք, որ առաջին և գլխաւոր Հերքողն եղաւ Նեստորական աղանդին, երեսուն երկու տարի պաշտպանելով եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութիւնը Հալածանօք և տքնութեամբ.

Նեստոր կուրանար Յիսուսի Քրիստոսի իսկապէս Աստուծոյ Որդի և մարդոյ որ-

դի լինելը՝ և զՅիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուած և Որդի Աստուծոյ չէր խոստովանիր. այլ Յիսուսի աստուածային մարմինը՝ նորա աստուածութեան բնակարան կը քարոզէր յանդգնութեամբ. սորան դատապարտեց Եփեսոսում գումարուած տիեզերական սուրբ ժողովը 431 թուին։

Նեստոր իւր այս մոլորութեանց վերայ յաւելցուց մի այլ մոլորութիւն. Ս. կոյս Մարիամը՝ չէր խոստովանիր Ա-ս----ծ-ծին. Ա-ս----ծ-մ-յր. և Տէր-մ-յր. այլ քրիստոսածին կամ մարդածին. և այժմեան բողոքականք խմորուած Նեստորական աղանդով. սուրբ կոյսը՝ Աստուածածին ասելու կը դժուարանան. որով կը ստուգուի թէ՝ իրենք Նեստորական աղանդին հետևող և համամիտ են։

Հայաստանեայց սուրբ եկեղեցին կընդունի զՔրիստոս միանգամայն մարդ յերկրի և Աստուած յերկինս. յարգանդ կու-

սի և բազմեալ ի քրովբէս՝ անբովանդակելին տիեզերաց՝ ի խանձարուրս մարմնով բովանդակեալ՝ նոյն աստուածային մարմնով ի խաչին և յերկինս ընդ Հօր և սուրբ Հոգւոյ փառաւորեալ և նստեալ ընդ աջմէ Հօր, և զսուրբ կոյսն Մարիամ ըստ վճռոյ երրորդ տիեզերական սուրբ ժողովոյն կանուանէ Ա—ս———ծ—ծին, Ա—ս———ծ—մ—յր և Տէր—մ—յր, որին Համամիտ են բոլոր ուղղափառ եկեղեցիք քրիստոնէից, և կը մերժէ իսպառ այն մոլորութիւնը, որոնք կը յանդգնին ասելու թէ՝ սուրբ կուսէն ծնուածը լոկ մարդ էր և ոչ Աստուած,

Նոյնպէս կը մերժէ և ամբարիշտ Եւտիքէսի մոլորութիւնը, որ կուրանար Յիսուսի Քրիստոսի աստուածային և մարդկային բնութիւնը և անշփոթ և անբաժանելի միաւորութիւնը, որ ի Քրիստոս Յիսուս, և կասէր թէ՝ Յիսուս Քրիստոս մեզ բնակից չէ ըստ մարմնոյ, այն է մարդ-

կային բնութիւնք սուրբ կոյս Աստուածածնէն չէ առած, այլ երկնքէն է բերած, և սորանով կը ժխտէր Աստուածածնայ աստուածամայրութիւնը: Նա և Սաբէլ լիբէացւոյ աղանդը կը մերժէ, որ կուրանար սուրբ Երրորդութեան անբաժանելի երեքանձնեայ միութիւնը, և կասէր թէ՝ աստուածային անձն մի է, մի Աստուած է միայն, որ նոյն անձն միանգամայն կասուի՝ թէ Հայր, թէ Որդի և թէ Հոգի, որով կուրանար Հօր, Որդւոյ և սուրբ Հոգւոյ որոշ անձնաւորութիւնն, բաց որում՝ և կասէր՝ աշխարհ ստեղծելով կոչեցաւ Հայր, կուսէն ծնանելով՝ կոչեցաւ Որդի, առաքելոց վերայ իջնալով՝ կոչեցաւ Հոգի, սուրբ աւետարանի այս խօսքը ի չարն մեկնելով Ես և Հայր մի եմք, և թէ՝ Ես ի Հայր և Հայր յիս[1]. ուստի կոչուեցան Հայրաչարչարք:

---

[1] Յովհ. Ժ. 30. ԺԴ. 10, 11.

Սարէլ և Սարէլեանք դատապարտուե- ցան 318 Թուին Աղէքսանդրիոյ Սինհո- դոսին մէջ։ Մակեդոն և Սարէլ Հերետի- կոսապետաց մոլորութիւնները գեղեցիկ կերպով կը հերքուի սուրբ Գրիգոր Լու- սաւորչի այս գրուածքով. Չէ [illegible]

[illegible] Ագամթ։

Քրիստոնէական սուրբ եկեղեցին սուրբ Հարց հետ ի միասին՝ կը հերքէ և կը մեր- ժէ ամեն հերձուածները, հերետիկոս- ները, աղանդապետները, նոցա աղանդ- ները և հետևողները, և կընդունի միայն

ԹԱՆԳԱՐԱՆ ԳՐԱԿԱՆ ...
БИБЛИОТЕКА

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

տիեզերական երեք սուրբ ժողովոց հաստատած ուղղափառութիւնը, որոնք աստուածաշունչ սուրբ գիրքը հիմն ունելով հակառակ կացին մոլորութեանց.

## ԳԼՈՒԽ Գ.

### Լուտէրէ և նորա հետևողաց մոլորութիւնը.

Այն ինչ նախնի սուրբ հարք և վարդապետք եկեղեցւոյ՝ ամեն ճիգն ու ջանք կը թափէին ուղղափառ վարդապետութեան դէմ ծագած մոլորութիւնները հերքել թէ գրով, թէ բանիւ, և թէ ժողովներով, և իսպառ արմատախիլ անելով եկեղեցին իւր նախնական վարդապետութեանց և աւանդութեանց մէջ

հաստատ պահել՝ ահա յանակնկալս վերջին դարերուն մէջ երևեցան Լուտեր, Կալուին, Զուինկլիանոս և ունեցան իրենց հետևողներ և նմաններ, և մինչև այսօր բողոքական անուան տակ կը շարունակուի սոցա աղանդ։

Արդարև բողոքականք արտաքուստ մեծ սէր կարտայայտեն դէպի Աստուծոյ խօսքը, կը սիրեն նոյնը քարոզել, և զԱստուած պատուելու փափագ կը յայտնեն· սակայն ի ներքուստ թշնամի սուրբ եկեղեցւոյ կը հանդիսանան՝ արհամարհելով աստուածային սուրբ պաշտամունքը, Կը համբաւեն իրենց անձն իբրև ջերմ քարոզիչ սուրբ աւետարանի և հետևող նորա ճշմարիտ ոգւոյն· ունկնդրաց առաջ խոնարհ և հեզ կը ձևանան· կը քարոզեն թէ մարդիկ մոլորութեանց մէջ ընկղմած են, և Աստուած իրենց հաւատացած է, զնոսա ի փրկութիւն դարձնել և ուղիղ ճանապարհի վերայ հաստատել, բայց

մխանգամայն կը մոռանան՝ որ Աստուած ամպարշտաց և խաբեբայից ձեռքով չի հոգար մարդկային ազգի փրկութիւնը, այլ միայն նոցա յատկապէս, որոնք վկայուած են սրբութեամբ և միշտ նշանաւոր եղած են բարութեամբ։

Հին կտակարանի մէջ կը կարդանք, որ Աստուած ուղարկած է իւր մարգարէները, որոնք թագաւորաց, ժողովրդոց և իշխանաց առաջ համարձակ քարոզեցին աստուածային պատգամները· գուշակեցին նոր եկեղեցւոյ կազմակերպութիւնը, որոյ հիմնադիր լինելու էր ինքն Յիսուս Քրիստոս, նորա փառաւորութիւնը աշխարհի վերայ, և փրկութիւն և մեծամեծ բարիքներ նպաստելը մարդկային ազգին։ Իսկ նոր կտակարանի մէջ առաքեալները և նոցա յաջորդները, որոնք իրենց անձն աւետարանի քարոզութեան նուիրելով, քաջութեամբ տարան ամեն նեղութեանց, սորվեցնելով մարդկանց՝ առաքինու-

թեամբ՝ սրբութեամբ և քրիստոնէական կատարելութեամբ հաճոյ լինել Աստուծոյ, հետանալով այն ամեն մոլորութիւններէն՝ որ հակառակ է աւետարանական ճշմարտութեան և քարոզութեան։

Լուտէր-Մարտին աստուածաբանական գիտութեան հմտանալէն յետոյ՝ ձեռնադրուեց քահանայ և կարգուեց փիլիսոփայութեան դասատու Վիրտէմբերգի համալսարանի մէջ, և 1510 թ. աստուածաբանութեան ուսուցիչ անուանելով՝ սկսաւ հրապարակաւ վարդապետել և սուրբ գիրքը սխալ մեկնելով մոլորութեան մէջ գլորել իրան հետեւողները։

Լուտէր իւր թիւր կարծիքները պաշտպանելով կը քարոզէր թէ՝ քրիստոնեան [illegible] համար պէտք է մարդ միայն հաւատայ Քրիստոսին և Նորա [illegible] մահուան, և բարեգործութիւնք ի փրկութիւն անօգուտ կը համարէր, մանաւանդ իւր մոլար կարծիքները կաշխատէր Պօղոս առա-

քելյն առ Հռովմայեցիս գրած (գլ. Գ. 28)․ Թղթերով հաստատել, որոնց՝ իւր հակացածին պէս մեկնութիւն կը տար կրճատելով և խարդախելով սուրբ գիրքը։

Եսկզբան Լուտէրի մոլորութիւնը սահմանափակ վիճակի մէջ էր․ բայց յետոյ Յուլիոս Բ․ պապի և նորա յաջորդ Լեոն Ժ-ի ժամանակ, աւելի ընդարձակութիւն գտաւ։ Լեոն Ժ․ զգալով իւր՝ և իւր նախորդի սխալ ընթացք, աշխատեց աղանդին առաջն առնուլ՝ բայց արած ջանքը ի զուր անցաւ, ուստի 1521 Թ․ Նզովիւք դատապարտեց զԼուտէր և նորա հետևողները, այնուհետև Հռովմայ եկեղեցիէն բաժանուելով Լուտէր, աւելի յառաջ տարաւ իւր մոլորութիւնը, և առիթ տուաւ երկպառակութեանց և արիւնհեղութեանց 1618—1648 Թ․ և դարերէ ի վեր հաստատուած կրօնական ուխտերը խանգարեց և եղծեց, կուսակրօնութիւնը արհամարհելու՝ օրինակը նախ ինքն լինելով,

Լուտէրի ընթացից և մոլորութեանց խիստ հեռաւոր էր և նորա աշակերտ Զուինկլիանոս չարամիտ, որ կուսակրօնութեան վիճակը ձգելով՝ աշխարհականի վիճակ մտաւ, և ամուսնացաւ։ Սա ձեռնարկեց եղծել և խանգարել սուրբ գիրքը՝ որոյ համար՝ նոյն իսկ իրեն հետևող բողոքականներէն անարգուեց և նախատուեց։

Զուինկլիանոս իւր բոլոր կեանքը աշխարհասիրութեան տալով՝ ապականուած վարքով ու բարքով գերազանցեց քան զԼուտէր և իւր մոլար վարդապետութիւնը կը ջանար զէնքի ուժով յառաջ տանել՝ և միանգամայն զզուելի դարձած էր՝ թէ ինքն և թէ իւր նմանները, որոնք վարուց մաքրութիւնը մերժելով՝ ժողովրդոց առաջ անարգ և անուանարկ եղան, մինչև անգամ Զուինկլի ինքն կը խոստովանէր ասելով՝ [illegible]
[illegible]

[illegible]

Կալուին՝ բողոքականաց գլուխներէն մին՝ Հակառակ աւետարանական ճշմարտութեան խիստ կերպով կը պաշտպանէր աղանդապետաց մոլար սկզբունքները, իր անձն տալով ամեն տեսակ մոլութեանց, որի ժանտութիւնը տեսնելով իր Հետեւողներ կասէին լաւ էր որ՝ մարդ Թէոդորոս Պեզայի Հետ դատապարտուէր, քան թէ Կալուինի Հետ արքայութիւն երթար,

Կալուին իր գործած ամօթալի յանցանքին Համար անարգանօք դատապարտուեցաւ, սարկաւագութեան միջոց ամուսնացաւ, և իր կինը աքսորել տալով կենդանի այրեց, և ամենուն Հետ կը վարուէր նոյն եղանակաւ, որոնք իր մտքին և գաղափարին կը Հակառակէին. սա ի պատիժ իր անարժան գործոց և վարմանց դառն մաՀուամբ մեռաւ, փթութիւն և գարշաՀոտութիւն տիրեց մարմ-

նոյն՝ մինչև անգամ՝ տեսանողներ կը սոսկային և կը զզուէին։

Սոցա նման էին նաև Յուստոս՝ Յովնաս՝ Ամսդորֆ՝ Մելանքտոն՝ Կարլոս-Դատիոս Նիկոլամպատիոս բողոքականաց գրչուխ՝ կարծուածներ՝ որոնք մին միւսէն աւելի էին անարժան՝ փառասէր՝ անգութ և անպարկեշտ՝ ինչպէս որ իրենց գործերը և մոլորութիւններ ցոյց կը տան՝ յորոց պէտքէ զգուշանալ՝ իբրև ոչխարազգեստ գայլերէ՝ զի թէև մարդկանց առաջ խոնարհ և բարի կերևան՝ բայց նոյն չեն՝ խաբէական մեկնութեամբ սուրբ գրքի միտքը կայլայլեն՝ հաւատոյ ճշմարտութիւնը կը խանգարեն՝ որով մարդկային միտքը տկարացնելով ի հաւատս՝ կը մոլորեցնեն և թերահաւատութեան մէջ կը ձգեն։ Այսպիսի մոլորեցուցիչներէն զգուշանալու համար Յիսուս այս խրատը կը տայ մեզ․ զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչ-

խարաց. և ի ներքոյ են գայլք յափշտակողք [1]։

Սրբազան Պօղոս առաքեալ՝ երբ լսեց թէ քրիստոնէից մէջ կը շրջին այնպիսի մարդիկ, որոնք աւետարանի քարոզչի և առաքելական պաշտօնէի անուն կրելով, չարամտութեամբ կաշխատեն քրիստոնէից մէջ հերձուածներ, երկպառակութիւններ ձրգել, և մոլար վարդապետութեամբ գայթակղեցնել. միայն իրանց հետևողներ գտնելու համար. որպէս զի զգուշանան և ճանաչեն թէ՝ այդպիսիները Յիսուսի Քրիստոսի ծառայ և պաշտօնեայ չեն, այլ խաբեբաներ և ծառայ իրանց կամաց, յորդորանօք գրեց այս խօսքերը Հռովմայեցի քրիստոնեաներուն, աղաչեմ զձեզ եղբարք, դիտել զայնոսիկ՝ որ հերձուածս և գայթագղութիւնս առնեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր դուք ուսայք, և խոտորեսջիք ի նոցանէ, զի այնպիսիքն Տեառն մերում Քրիս-

[1] Մատ. Է. 15.

այնպիսիք ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնի և քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զսիրտս անմեղաց'[1]։

Շատ անգամ՝ տգէտները որ աւետարանի վարդապետութեան վրայ ոչ գաղափար ունին և ոչ հմտութիւն, հաւատոյ վարդապետութեան քարոզիչ կը ներկայանան. ո՞յք են այդ վարդապետներ, բայց եթէ մեծ մասամբ՝ մի շարք անուս կօշկակարներ, դերձակներ, վարսաւիրներ, քարակոփներ, որմնադիրներ և գիւղացիներ, որոնք թիւրիմացութեամբ սուրբ գիրքը կաղաւաղեն և մի քանի կտորներ սուրբ գրքէն, և այն խանգարուած և ապականուած աղանդաւորաց գրուածներէն բերան սորված, վարդապետներ կը ձեւանան և աստուածաբանից կարգը կանցնին. մի գուցէ՞ իրենց կը հաւասարին առաքելոց, որոնք աստուածային հոգին ունենալով,

---

[1] Հռովմ. Զ. 17. 18.

այն է՝ ներշնչուած սուրբ Հոգւոյն ազատ համարձակ կաւետարանէին Փրկչի խօսքերը և ոչ մի երկիւղ նոցա յետս չէր կասեր՝ իրենց ստանձնած աստուածային սուրբ պաշտօնէն։ Սակայն պիտի գիտնան՝ որ իրանք բնաւ չեն կարող հաւատալ նոցա՝ և ոչ իսկ նոցա յաջորդաց՝ որոնք եկեղեցւոյ վերայ նահատակուեցան՝ քարոզեցին անվեհեր՝ և հրաշքներով հաւատք հաստատեցին. բայց իրանք չունին այն սրբութիւնք և կատարելութիւնք և սուրբ Հոգին Աստուած իւր շնորհաց պարգեւութիւնք չտար այն առաքելական մարդերուն և սրբերուն՝ որոնք խմբուած էն աղանդաւոր ուսմամբք. վասն զի ճըշմարտութիւնք յայտնի կը տեսնէ և սուտթիւնք կը ճշմարտաբանէն՝ մինչև մոլորեցուցանել, եթէ հնար ինչ էր և զընտրեալսն [1]։

Աղանդաւորաց գրքեր որքան և գեղե-

[1] Մատ. ԻԴ. 24.

ցիկ ոճով գրուած և արտաքուստ փայլունութեամբ գրաւիչ լինին՝ դարձեալ իրենց փառքը ունին ընթերցողի համար· որովհետև մարդոյ բարոյականը կը խանգարեն և հաւատոյ ճշմարտութեան հիմը խախտ վեր ի վայր կը շրջեն՝ որով քրիստոնէական սէրը յանդգնութիւն կը փոխուի՝ մարդ կը խոտորի ուղիղ շաւղէն և մոլորութեան մէջ կը գահավիժի· այսպիսի գրքերի վնասներուն համար էր՝ որ առաքեալներ ժողովել տալով հրապարակաւ կայրէին· Եւ բազումք ի կախարդացն բերէին զգիրսն՝ այրէին առաջի ամենեցուն, և համարեցան զգինս նոցա, և գտանէին արծաթոյ բիւրս հինգ[1]։

Այդ մոլորեցուցիչներ թէև իրանք իրանց բարձր կը համարեն՝ բայց այն չեն՝ ինչ որ իրանք կը կարծեն՝ և կարհամարհեն եկեղեցւոյ պաշտօնեաները՝ որպէս

---

[1] Գործ. ԺԹ. 19.

*թէ զուտ աւետարանին կը հետեւին, աւետարանի վարդապետութիւնը առաջնորդ ունին իրանց. Փրկչի ետեւէն կերթան. Նա մանաւանդ կը պնդեն թէ իրանք աւելի լաւ կը հասկանան աւետարանի միտքը՝ քան թէ սուրբ եկեղեցին, որ իրանց կամեցածին պէս չի մնար. Ահա այսպիսի մոլորեցուցիչներէն կը խրատէ մեզ Յիսուս հեռի փախչել, և Պօղոս առաքեալ կը գրէր յԵփեսոս, և Յիսուսի սիրով կը զգուշացուցանէր հաւատացելոց, որ աղանդաւորներէն հեռի մնան, և փոփոխամիտ տղայոց նման՝ նոցա ծուղակը չը մտանուին.* Մի յայսմհետէ իցեմք տղայք խռովեալք և տատանեալք յամենայն հողմոյ վարդապետութեան, խաբէութեամբ մարդկան, խորամանկութեամբ ի խաբէութիւն մոլորութեան. այլ ճշմարտեալք սիրով աճեսցուք ի նա զամենայն, որ է գլուխն Քրիստոս[1].

---

[1] Եփես. Դ. 14. 15.

Բողոքականք նաև իրենց մէջ հաստատած ընկերութեանց միջոցաւ մոլորութիւնը տարածելու համար մեծ փոյթ ունին, դրամ՝ կը ժողովեն և այդ դրամով կապրին նոցա քարոզիչներ, այդ դրամով կըթակարդուին շատ անմեղ հոգիներ բողոքականութեան մէջ, և այդ դրամ՝ կըհամարուի նոցա համար ուրացութեան գին, դատապարտելի գործ, որ քրիստոնէութեան մէջ սնուած և զարգացած մարդկանց կը տանի ի հոգեկործանութիւն և ի հաւատուրացութիւն։

Նորահնար մոլար վարդապետութեամբ շարադրած գրքեր կը տարածեն ամեն տեղ· ձրի կը բաժանեն և շատերին աննշան գնով կը տան· քրիստոնեայ ազգաց մէջ մտնելով ժողովուրդը կը խռովեն և կը յուզեն· ի՞նչ գեղեցիկ ընթացք· աւետարանի խաղաղարար հոգւոյն համապատասխան գործ։

Այսպիսի ճանապարհաւ կը ցրուեն ե-

կեղեցիները՝ և ժողովուրդը մոլորեցնելով իրանց կը սեպհականեն. ժողովարաններ կը հաստատեն և ազգի և եկեղեցւոյ ուրացեալ անդամները՝ նոյն ժողովարանի գլուխ և քարոզիչ կարգելով առատ թոշակ կը տան. որպէս զի խարդախութեամբ և նենգութեամբ իրենց համազգայինները որսան, գայթակղեցնելով նոցա ցրուեն և բաժանեն իրանց ուղղափառ եկեղեցիէն. [illegible] [1].

[1] Մատթ. ԺԸ. 17.

## ԳԼՈՒԽ Դ.

Եկեղեցին և կրօնը։ Եկեղեցւոյ սրբութիւնը և անսխալականութիւնը։ Կրօնք նորա։ Աւան-դական հաստատութիւնը երկրորդ դէմ։

ՃՇՄԱՐԻՏ *եկեղեցին և կրօնը Յիսուս Քրիստոսէն սկիզբն առնելով առաքելոց քարոզութեամբ տարածուեց ընդ ամենայն աշխարհ. դարերէ ի վեր անաղարտ պահուեցաւ և կը պահուի մինչև այսօր, և կը պարծի իւր հնութեամբ և հիմնադրով։*

*Քրիստոսի եկեղեցին իւր գերագոյն գլխոյն հետ կապուած լինելուն համար՝ սուրբ է, սուրբ է՝ թէ՛ կոչմամբ, որի նպատակն է սրբել և արդարացնել, թէ վարդապետութեամբ՝ որ սրբութիւն և հաւատոյ ճշմարտութիւն կը քարոզէ. կը սիրէ սրբութիւն և կենաց մաքրութիւն և ընդ միշտ կը դատապարտէ այն*

ամենայն ինչ՝ որ արատ կը բերէ իւր սրբութեան, թէ մոլութիւնք լինին նոքա, և թէ մոլորութիւնք. նոյնպէս սուրբ է՝ փրկարար խորհուրդներով, պատուիրաններով և արարողութիւններով, որոնք ի սրբութիւն կառաջնորդեն մեզ.

Բողոքականութիւնը վերջին դարերու ծնունդ լինելով, նոր է, և չէ կարող ասուիլ հին, մանաւանդ Յիսուս Քրիստոսէն յառաջ չի գար և չունի առաքելութիւն և առաքելական յաջորդութիւն՝ սկսած Քրիստոսէն մինչև այժմ. [illegible] [1].

Նախ ինքն Յիսուս իւր աստուածային առաքելութիւնը կատարեց երկրի վերայ ասելով. [illegible] [2], և ապա նոյնը տալով սրբ-

[1] Հռովմ. Ժ. 15.
[2] Մատ. ԻԲ. 15.

բաղան առաքելոց՝ Հաստատեց առաքելական գերագոյն պաշտօնը իւր այս խօսքերով. Երթայք յաշխարհ ամենայն և քարոզեցէք զաւետարանն արարչութեան ամենայն արարածոց[1]. և Թէ՝ որպէս առաքեաց զիս Հայր իմ և ես առաքեմ զձեզ. և զայս իբրև ասաց՝ փչեաց ի նոսա և ասէ առէք Հոգի սուրբ. ԵԹէ ումեք Թողուցուք զմեղս, Թողեալ լիցին նոցա, ԵԹէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի[2].

Բողոքականաց ոմանց Հայրը Լուտէրն էր, ոմանց՝ Կալուինն, և ոմանց Զուինկլի. Գուէյքըրներըը Գէորգ Ֆօքսէն յառաջ եկան, Մորմոններըը Յովսէփ Սմիտէն, և այս ամեն աղանդաւորներ երբէք միութիւն չունին նոյն անձանց հետ և ոչ նոցա վարդապետութիւնը. եթէ ունենային, պէտք է որ անբաժան մնային, ուստի Յիսուս Քրիստոսէն չունին իրանց առաքելութիւնը և

[1] Մարկ. ԺԶ. 15.
[2] Յովհ. ԺԶ. 15, Ի. 21.

կարող չեն առաքելական ճշմարիտ պաշտօնեաներ կոչուիլ։

Զի որքան առաքելական պաշտօնեայ ձևանալ նկրտին և պարծենան՝ այնու ամենայնիւ, աւետարանի վարդապետութեան համեմատ գործք չունին. վասն զի Յիսուս կը պատուիրէր իւր առաքելոց՝ չը սիրել աշխարհը և աշխարհային փառքերը և մեծութիւնները, մինչև իսկ իւրեանց անձը ոչ աւելի քան զինքն, Եթէ ոք գայ առիս, և ոչ ատեայ զհայր իւր և զմայր և զկին և զորդիս և զեղբարս և զքորս. նաև զանձն իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել[1]։

Սուրբ եկեղեցին ինչ որ այժմ ունի, նոյնը ունէր և ի նախընթաց դարս անփոփոխ՝ առաքելոց քարոզութեանց վերայ հաստատուած, և որոնք կը շեղուէին սուրբ եկեղեցւոյ ուղիղ վարդապետու-

[1] Ղուկ. ԺԴ. 26. Մատ. ԺԹ. 22.

թենէն և մի նորը սորվեցնել կը ջանային. իբրև հերետիկոսք և հերձուածողք կը կտրուէին և կը ձգուէին եկեղեցւոյ դուրս։ Ճշմարիտ կրօնը ինքն Յիսուս Քրիստոս հաստատեց, և յայտնեց մեզ այն ամեն ճշմարտութիւնները, որոնք միանգամայն կը յատկանան Աստուծոյ անհուն մեծութեան. նորա գերագոյն փառաց. Յիսուսի Քրիստոսի կատարած մեծագործ փրկութեան և եկեղեցւոյ սուրբ խորհրդոց, որոնք շնորհաց աղբիւրներ կը համարուին. և այն ամեն բաներուն, որոնց պէտք է հաւատալ, յուսալ և սիրել, զորս Յիսուս սահմանեց հաւատացելոց փրկութեան համար։

Կրօնն մի գեղեցիկ հանգոյց է, որով Աստուած և մարդ իրարու հետ սքանչելի հաղորդակցութեամբ կը կապուին, և զայն պահպանելով միայն մարդ կրնայ Աստուծոյ շնորհաց արժանանալ։ Այն ժամանակ կրօնը ճշմարիտ է՝ երբ Աս-

տուծոյ յայտնած ճշմարտութեանց վը-րայ է հիմնած․ և իր մէջ միութեան կատարելութիւն կը բովանդակէ, և ա-մենքը ի միասին նոյն սէրը և միութիւնը ունին․ ինչպէս կը գրէր սրբազան առա-քեալն Պօղոս, զի ոչ եթէ խռովութեան է Աստուած, այլ խաղաղութեան, որպէս յամե-նայն եկեղեցիս սրբոց[1], և թէ՝ մի է Տէր, մի հաւատ, մի մկրտութիւն, մի Աստուած, և Հայր ամենեցուն[2]։ Ահա այս է ճշմարիտ կրօնի նշանը, հաւատալ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, սէր և խաղաղութիւն ունենալ, մի մարմին և մի հոգի լինել, մի Աս-տուած ճանաչել, մի հաւատք մի մկր-տութիւն, մի Հայր և մի Տէր յերկինս։ Այսպէս կընդունի Հայաստանեայց սուրբ եկեղեցին, և ամէն քրիստոնէից եկե-ղեցիք, որոնք Քրիստոսէն մինչև այժմ ընդունուած և պահուած են։

---

[1] Ա․ Կորն․ ԺԴ․ 33։
[2] Եփես․ Դ․ 6։

Աղանդաւորք մէջերնին միութիւն չունին. զանազան աղանդներու կը բաժանուին և միշտ կը հակառին իրարու. վասն զի չունին քրիստոնէական ճշմարիտ վարդապետութիւնը և իւրաքանչիւր ոք իւր քմաց համեմատ նոր վարդապետութիւն կը քարոզէ. և եկեղեցւոյ սրբարար խորհրդոց և վարդապետութեանց մեծ մասը կը ժխտէ և կուրանայ. Բողոքականք Հռովմայ եկեղեցւոյ հետեւալ անդամներն են, որոց պատճառ տուին Հռովմայ պապերը, քաւարանի, ներողութեան, սիմոնականութեան մոլորութիւնները ստեղծելով. և սուրբ եկեղեցւոյ խորհրդոց ոմանց մէջ մոլար վարդապետութիւններ և սովորութիւններ մտցնելով.

Մարտին—Լուտէր, որ բողոքականութեան առաջին հիմնադիրն եղաւ, արհամարհեցաւ իւր հետեւողներէն և դատապարտեցաւ, որի հակառակորդներն և դատապարտողներ էին Զուինկլի. Կար-

լոս-Դատիոս, և այլք. նոյն հակառակութիւնը կրեց և Կալուին իւր հետևողներէն։

Այս աղանդաւորաց գլխաւորներ սկսան նորանոր վարդապետութիւններ հնարել. միմեանցից բաժանուելով առանձին ժողովներ կազմել, և քարոզել իրենց մտացածին վարդապետութիւնը և ամեն մի ժողով իւր հեղինակի անունը կը կրէր։

Լուտէրի վարդապետութեան հետևողք՝ Լուտերականք կոչուեցան, Կալուինինը՝ Կալուինականք, Զուինկլիանոսինը Զուինկլեանք, և այսպէս միմեանց հակառակ ստեղծեցին իրենց ախորժակին համեմատ տեսակ տեսակ վարդապետութիւններ և բաժանուեցան այլ և այլ աղանդներու, մինչև որ մէկին ընդունածը միւսը կը դատապարտէր, միմեանց կը նզովէին. հերձուածող և հերետիկոս կանուանէին, կը հալածէին և կը վիրաւորէին. որով կը յայտնէին օ-

տարաձայն լինելնին ուղիղ վարդապետութեան. Հակառակ Պօղոս առաքելոյն, որ յանուն Յիսուսի Քրիստոսի կը խրատէր և կը յորդորէր ամեն քրիստոնէից, որ քրիստոնէական ճշմարիտ վարդապետութեան մէջ անմիաբանութիւն և տարաձայնութիւն չունենան. Աղաչեմ զձեզ եղբարք, անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զնոյն բան ասասջիք ամենեքեան, եւ մի՛ իցեն ի ձեզ հերձուածք. այլ լինիջիք հաստատեալք ի նմին մտի եւ ի նմին հանճարս[1]։

Բողոքականաց մէջ որչափ գլուխներ, նոյնչափ և աղանդներ կը գտնուին. իւրաքանչիւր ոք իւր անձն վարդապետ կը համարէ և իրանից սորրը աշակերտ. մինչև անգամ մի ընտանիքի մէջ. ամեն մին՝ առանձին առանձին իւր կրօնն ունի հնարած ըստ քմաց, այս բանը սովորա-

---

[1] Ա. Կորն. Ա. 10.

կան է Ամերիկայի Միացեալ Նահանգաց բողոքականաց մէջ։

Ազանդաւորք ի հաւատս ունեցած նորաձեւութեանց շնորհիւ, այլ և այլ ազանդներու բաժանուած ըսաւ միմեանց հետ միաբան չեն. Կրկնակնուքները տասն և չորս աղանդներ ունին, Խորհրդապաշտները՝ ինն, Համակերպողք՝ քսան և չորս, և Աւստուրդեայք—խոստովանութեան հակառակները՝ եօթն. և այսպէս հաւատոյ վարդապետութեանց մէջ, ամեն մին իւր կարծիքն ունենալով հողմակոծեալ կը ծփին այս ու այն կողմն։

Լուտէր՝ սուրբ հաղորդութեան խորհրդոյ մէջ ինքն իրան կը հակառակէր, այս աւուր ընդունածը միւս օրը կը մերժէր, և կրկին կընդունէր, և ճշմարտութենէն բոլորովին հեռանալով կը յայտնէր իւր մոլորութիւնը. որի համար կասէ Պօղոս առաքեալ՝ [illegible]

[illegible]: Ապացոյց կրօնի. հատ. Դ. Գլ. ԽԴ.

Յիսուս Քրիստոս խոստացաւ եկեղեցւոյ անբաժան մնալ մինչև աշխարհի վերջ՝ որը պիտի միշտ անշարժ և անխախտ մնայ. ոչինչ պիտի համարուին ամեն ջանք, ամեն մոլորութիւնք և նենգութիւնք, մինչև անգամ նորա դէմ յարուցած հալածողաց բռնութիւնք չպիտի կարողանան վնասել եկեղեցւոյ հաստատութեան ըստ բանին Փրկչի, [illegible] [1]: Աղանդաւորքը թող այլապէս իմանան. միայն այսքանը գիտեմ, որ եկեղեցին ուղղափառ վարդապետութեամբ է միայն եկեղեցի, որի հետ Յիսուս կապուած է ցկատարած աշխարհի. [illegible]

---

[1] Մատ. ԺԶ. 18.

նոյն, զոր ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւա-սիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև ի կատարած աշխարհի[1]։

Այս խօսքով Յիսուս յայտնեց, որ ինքն անբաժան է թէ եկեղեցուց, թէ առաքեալներէն և թէ նոցա յաջորդնե-րէն, և իւր ներկայութեամբ խրախու-սեց, որ նոքա անախալ պէտք է մնան վար-դապետութեան մէջ. վասն զի՝ ոչ թէ իրենք էին որ կը խօսէին, այլ Յիսուս էր, որ ասաց, ես տաց ձեզ բերան և իմաստութիւն և այլն, կամ թէ՝ ոչ թէ դուք էք, որ խօսիք, այլ Հոգին սուրբ[2]։ Պօղոս առաքեալ իւր Տիմոթէոս աշակերտին գրելով սիւն և հաստատութիւն ճշմարտութեան կը կոչէ եկեղեցին[3]. որ դարերէ ի վեր հաստատ հիման վերայ դրած լինելով պիտի տևէ

[1] Մատ. ԻԸ. 18–20.
[2] Մարկ. ԺԳ. 11.
[3] Ա. Տիմ. Գ. 15.

անսխալ վարդապետութեամբ, անպակա-
սելի և անյաղթելի մնալով. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] Եղիշէ յեղանակ. Բ.

Ուրեմն ի զուր կը ջանան աղանդաւորք
հաւատացեալները մոլորեցնել եկեղեցւոյ
ծոցէն հեռացնելու դիտմամբ. ի զուր
կարհամարհեն եկեղեցւոյ պաշտամունքը,
սրբութիւնը և աւանդութիւնը, և եկե-
ղեցւոյ անունը արատաւորել կամենալով
կասեն, աւելորդապաշտութիւններ, կռա-
պաշտութիւններ կը սովորեցնէ ժողովր-
դոց. և այսպէս աւելորդապաշտութիւն
կը համարեն քրիստոնէից առ Աստուած
ունեցած ջերմեռանդութիւնը և բարե-
պաշտական արարողութիւնները, որոնք
Աստուծոյ և աստուածայնոց կը մատու-
ցուին. ուրեմն աւելորդապաշտութիւն

պիտի երեւնար իւղաբեր կանանց առաջը, որոնք ջերմեռանդութեամբ խունկ եւ օծելիք առած գնացին Փրկչի գերեզմանը, չյիշելով բնաւ նորա անմահութիւնը եւ յարութեան խոստմունքը[1]: Բայց այնքան հաճելի էր Աստուծոյ այս գեղեցիկ գործը, մինչեւ անգամ լսեցին յարութեան աւետումը հրեշտակէն, տեսան զՅիսուս եւ նորա աստուածային ոտները համբուրեցին[2]:

Քրիստոսի եկեղեցին հաստատութիւն գտաւ երկրի վերայ առաքելոց քարոզութեամբ, որոնք իրանց երկնաւոր վարդապետէն առնելով պահպանեցին եւ նոյնութեամբ աւանդեցին եկեղեցւոյն, որ բնաւ չէր շեղուած ուղիղ վարդապետութենէն, այլ նզովիւք հերքել է միշտ մոլորեցուցչաց սխալ վարդապետութիւնները:

---

[1] Մատ. ԺԵ. 22.
[2] Մատ. ԻԸ. 9. Ղուկ. ԻԴ. 9.

## ԳԼՈՒԽ Ե.

Եկեղեցւոյ և կրօնէ միութեանը և սրբու-
թեանը. Եկեղեցին է ընդհանրական ու ա-
ռաքելական. Եկեղեցւոյ պաշտօնը. Առաք-
ելական յաջորդութեանը.

ՔՐԻՍՏՈՍԻ եկեղեցւոյ գոյութիւնը կախուած է Ճշմարիտ կրօնէն, որ մարդկանց կը մօտեցնէ Աստուծոյ և կը կապէ իրարու հետ հաւատովք հոգւով և մկրտութեամբ իբրև ի մի միաբանութիւն. ուստի է միշտ երևելի, միակ երկրի վերայ իւր բարձր յատկութեամբ, և ըստ աղանդաւորաց անտեսանելի ասուած եկեղեցւոյն չի նմանիր. վասն զի մի է, սուրբ է՝ ընդհանրական և առաքելական է. մի է, որովհետև հոգւոր և ներքին միութեամբ՝ հաւատոյ, յուսոյ և սիրոյ, կապուած է իւր գլխոյն Յիսուսի Քրիստո-

մի հետ[1]. սուրբ է՝ զի սրբութիւն կը քարոզէ և իսպառ ազատ է ամեն տեսակ մոլար վարդապետութենէ. ընդհանրական է՝ վասն զի տարածուած է ամեն տեղ, և պիտի տևէ մինչև աշխարհի վերջը. իրան դիմողները կընդունէ սիրով, կը սրբէ մկրտութեամբ և կը միացնէ իր հետ[2]. առաքելական կը կոչուի, ըստ որում՝ իր հաստատութեան հիմն առաքելոց գրուածքը և աւանդութիւնքը կը սեպէ[3]. միայն թէ վարչականին մէջ կը տարբերի. զի իւրաքանչիւր՝ իւր առաքելական յաջորդը ունենալով, ի Քրիստոս Յիսուս մի հօտ և մի հովիւ կը համարուի։

Աղանդաւորք ըստ որում՝ եկեղեցւոյ

---

[1] Յովհ. Ժ. 16. Ա. Կորն. ԺԲ. 17.

[2] Մատ. ԻԴ. 14. Գաղատ. Դ. 27. 28.

[3] Եփես. Բ. 10. 19. 20. Սաղմ. ՀԱ. 8. Եսայ. Բ. 2. 3. 8. ԿԱ. 8. 9.

ուղիղ վարդապետութիւնէն շեղուած են. սրբազան խորհուրդներէն հինգը ուրանալէն զատ՝ երկուքը ևս մոլար վարդապետութեան յենուելով կաղաւաղեն. ուստի Քրիստոսի եկեղեցւոյ հեռանալ և հերձեալ անդամները կը համարուին։

Եկեղեցւոյ բովանդակ աշխարհի վերայ տարածուած լինելը՝ ինքն Յիսուս ևս կը հաստատէ ասելով՝ պարտ է զաւետարանն քարոզել, և թէ՝ [illegible] [1], կամ՝ թէ՝ [illegible] [2], և եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ և յամենայն Հրէաստանի և ի Սամարիայ և մինչև ի ծագս երկրի [3]. Եկեղեցին հին և նոր կտակարանաց բոլոր մարգարէութիւնները իւր վերայ կատարած կը տեսնէ. և ամեն կրօններէ բարձր

---

[1] Մարկ. ԺԳ. 10.

[2] Ղուկ. ԻԴ. 47.

[3] Գործ. Ա. 8.

համարուելով ամենի վերայ սուտեր կը ձգէ իւր սրբութեամբ, առաքելականութեամբ և ընդհանրականութեամբ. ոչ մի կրօն այնպէս ճշմարիտ բարոյականի սկզբունք և հոգի չի ներշնչէր իւր անդամոց մէջ, ինչպէս քրիստոնէական եկեղեցին, որ իրան առաջնորդ ունի աւետարանը և որի քարոզած բարոյականի վարդապետութիւնը նոր ապացոյցի և փաստի կարօտ չէ, և միանգամայն սուրբ գիրքն իբրև կանոն հաւատոյ՝ կը բովանդակէ իւր մէջ հաւատոյ մասունքը և կառաջնորդէ մարդկանց ի փրկութիւն.

Ո՞յք էին այս եկեղեցւոյ տարածման նպաստողները, ոչ այլ ոք, բայց միայն առաքեալք ի Հոգւոյն սրբոյ ներշնչուած և Փրկչի զօրութեամբ զօրացած. նա իսկ՝ և նոցա յաջորդները, սկսած առաջին դարէն մինչև վեցերորդ դարի վերջերը. որոնք իրենց առաքելանման տոկունութեամբ յաղթեցին աշխարհի ամեն դը-

ժուարութեանց, և պահպանելով եկեղեցին, իրենց յաջորդաց աւանդեցին՝ այդ շնորհաց և բարութեանց աղբիւրը։

Սրբազան առաքեալք կը քարոզէին սուրբ աւետարանը վստահացած Հոգւոյն սրբոյ ամենակարողութեան վերայ, [illegible][1], և Փրկչի սիրով վառուած կասէին, [illegible][2], նոյն արիութիւնը ունեցան և նոցա յաջորդները աւետարանի քարոզութեան մէջ։ Իսկ որոնք կասեն թէ աւետարանը կը քարոզեմք, և աւետարանի քարոզած ընթացքը չունին, սիրոյ և խաղաղութեան տեղ, ատելութիւն և

---

[1] Ա. Կորն. Ը. 12։

[2] Հռոմ. Ը. 35։

խռովութիւն կը սերմանեն և բանակռու-
ութիւն կը յարուցանեն. Նոքա իսկապէս
կը հակառակին աւետարանի հոգուն և
ուղղութեանը։

Բողոքականութիւնը զանազան աղանդ-
ներու բաժանուած լինելով՝ չունի իւր
մէջ ճշմարիտ եկեղեցւոյ խորհրդաւոր
նշանները և միշտ իրարու կը հակառա-
կին, ինչպէս են՝ անմիաբանները, երի-
ցականները, քուէյքերները, մեթոդիստ-
ները, ուէսլիէնները, սկովտականները, և
սոցա նման շատ աղանդաւորներ, որ մի-
մեանց կը դատապարտեն։ Նոյնպէս են
Լուտերականք և Կալուինականք, որ ըն-
նաւ իրարու հետ կապ չունին։ Մանա-
ւանդ Ամերիկայի Միացեալ Նահանգաց
մէջ գտնուող բողոքականք, այնքան զա-
նազանութեանց բաժանուած են, որ մի մի
համարել անկարելի է, զոր բողոքականք
գիտեն, կը վկայեն և կը խոստովանին,
ահա այսպիսիք են, որ աշխարհի լուսա-

ւորէչ կը հանդիսանան․ մինչդեռ իրենց մէջ դաւանութեանց պառակտումն և բարոյականութեան անկումն կը տիրէ։

Քրիստոնէական կրօնը աւետարանի անխախտ վարդապետութեան վերայ հիմնուած լինելով սուրբ է և անարատ, զի եթէ մին սուրբ եկեղեցւոյ օրինադրեալ աստուածային պատուիրանները․ հրամանները և օրէնքները սրբութեամբ կատարէ և պահէ, յաւիտեան երջանիկ լինելու արժանաւորութիւնը կունենայ․ վասն զի՝ մարդոյ երջանկութիւնը հաստատուած է միմիայն ճշմարիտ կրօնի և առաքինութեանց մէջ։

Առաջին դարերու մէջ շատ հաւատացեալներ առաքինութեամբ և սրբութեամբ գերազանցեցին, յորոց շատերը անտանելի ճիգն և աշխատութիւն յանձն առին և հրեշտակ ի մարմնի հռչակեցան իրանց բարձրագոյն առաքինութեամբ, ոչ միայն այր՝ այլ և կանայք․ որոնցից շա-

տերը նաև հրաշքներ գործեցին որը մի առանձնաշնորհութիւն է և հաւատոյ հաստատութիւն. ինչպէս որ Յիսուս ասաց [1]։

Աղանդաւորք չունին այս առանձնաշնորհութիւնը, զոր իրանք ևս կը խոստովանին. այլ որովհետև այս շնորհէն զուրկ են, կը սկսին ուրանալ ճշմարիտ հրաշքները, որ երբեմն նոյն իսկ հերետիկոսները չկարողացան ուրանալ. զի եթէ մտաւորութեամբ կարդան սուրբ գիրքը, առանց այս և այն կողմը խոտորելու՝ Յիսուսէն յետոյ կը տեսնեն նոյն հրաշքները գործած առաքեալներէն և եկեղեցւոյ սուրբերէն, որոնք հաւատով յանուն Յիսուսի կը դիմէին նոցա, Եւ [illegible] Եւ [illegible] [illegible] է Տէր, [illegible] [illegible] և [illegible], [illegible] է [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible]

[1] Յովհ. ԺԴ. 10.

ցանօք և մահճօք երեանց, զի ընդ անցանելն Պետրոսի՝ գոնէ հովանի նորա հասցէ ումեք ի նոցանէ, և ժողովէր բազմութիւն շուրջ է քաղաքաց անտի յԵրուսաղէմ, բերէին զհիւանդս և զչարչարեալս յայսոց պղծոց, որք և բժշկէին ամենեքեան[1].

Այս այսպիսի թերահաւատ և թիւր միտք ունեցողներէն հեռանալ կը պատուիրէ Պօղոս առաքեալ, յորժամ հերձուածողէ յետ միանգամ և երկիցս խրատելոյ հրաժարեա զեր· գիտասջիր զի թիւրեալ է այնպիսին և մեղանչէ անձամբ զանձն դատապարտեալ[2]. Աղանդաւորք հակառակ ճշմարտութեան այս շնորհները կուրանան, առարկելով թէ Աստուած մարդկանցէն անհնարին բաներ կը պահանջէ. այսպիսի առարկութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ մեղանչել Աստուծոյ դէմ. Աստուծոյ գթու-

---

[1] Գործ. Ե. 14. 16. ԺԹ. 11. 12.

[2] Տիտ. Գ. 10.

թիւնը ի չարն գործածելով. մինչդեռ Աստուած ողորմութեան և գթութեան Հայր լինելով միայն այն կը հրամայէ, որ կարելի է կատարել Աստուծոյ օգնութեամբ. կը քարոզեն թէ՝ միայն հաւատքը բաւական է ի փրկութիւն և բարի գործերը անօգուտ են, որով ամեն չարիք գործելու դուռը կը բանան մարդկանց առաջ, և Աստուծոյ և մարդկանց մէջ եղած սիրոյ կապը կը խզեն. Աստուածային պատուիրանաց պահպանութեան անկարելիութիւն կը յայտնեն, որ Աստուծոյ դէմ մեղանչելու մի յատուկ նշան է. ոչինչ կը համարեն մեղաց խոստովանութիւնը, և առիթ կը տան մարդկանց սանձարձակ ամեն տեսակ մոլութեանց անձնատուր լինել. Արհամարհանօք կը նայեն ծոմապահութեան և ապաշխարութեան վերայ, որով մոլութիւնք կաճեցնեն և կը բորբոքեն մարմնական հեշտութիւնները. Արդէն դրուած հոգո-

ցունել նոցա օգնութեան դիմելը ընդու-նայն կը քարոզեն, որով կուրանան Ա-ստուծոյ նոցա տուած շնորհը, նոյնպէս կը վարուին և ննջեցելոց համար աղօթք մատուցանելու դէմ, որով կը մերժեն կրօնական սովորութիւնները և կարգա-դրութիւնները, որոնք իրանց սկիզբը քը-րիստոնէութեան ծագմանէն ունին. այն է՝ սրբոց և նշխարաց յարգութիւնը, բարեխօսութիւնը, խաչակնքելը, օրհ-նութիւնը, հանդիսաւոր թաղումը և պահքը, որոց հետքը բնաւ չկային հե-թանոսութեան մէջ.

## ԳԼՈՒԽ Զ.

[illegible]

**Քրիստոնէական** *եկեղեցին աղօթք, հոգեհանգիստ կատարել, ողորմութիւն տալ, պատարագ մատուցանելը ննջեցելոց համար, մի հոգևոր բարիք կը համարէ, որ իրարու կընծայեն յաղթական և զինուորեալ եկեղեցիք իբրև մի եկեղեցւոյ անդամներ. որ միմեանց հետ կապուած լինելով՝ մին միւսոյն կը հաղորդէ իւր հոգևոր բարիքը, յաղթականը կը բարեխօսէ և զինուորեալը կաղօթէ, և այսպէս միմեանց փոխադարձ օգնութիւն կը հասցնեն. ինչպէս Պօղոս կը գրէ,* [illegible]

[illegible]
[illegible]
[illegible] և թէ՛
[illegible]
[illegible]

Այս Հոգևոր և սուրբ պարտականու-
թիւնը ինչպէս Նոր եկեղեցին, նոյնպէս և
Հին եկեղեցին կը կատարէր. Յուդա
Մակաբէ ննջեցելոց համար այս գեղեցիկ
յոյսը կը տածէր իւր սրտի մէջ, [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] և թէ՛ [illegible]
[illegible]
[illegible]

[1] Ժողով. Թ. 10.

[2] Հռոմ. ԺԴ. 9. Բ. Կորն. ԺԴ. 9. Բ. Թեսաղ. Ա. 11. Յակ. Ե. 14–16.

[illegible] Զի [illegible] [1]: Եւ Սողոմոն իւր Դաւիթ Հօր համար կաղաչէր զԱստուած, որ քաղցրութեամբ նայի նորա վերայ, Տէր [illegible] [2]:

*Աղօթք, պատարագ մատուցանելը, ողորմութիւն տալը նոյն իսկ սրբազան առաքելոց ժամանակ ևս կը պաշտուէր* [3]:

---

[1] Բ. Մակ. ԺԲ. 45.
[2] Բ. Մնաց. Զ. 42.
[3] Ա. Կորն. ԺԵ. 29.

ուստի և եկեղեցին Քրիստոսի Հին և Նոր կտակարանը իրան առաջնորդ ունենալով կը պաշտէ ամենայն ջերմեռանդութեամբ այս արարողութիւնները, վստահելով Աստուծոյ գթութեան և մարդասիրութեան վերայ.

Աղանդաւորք եկեղեցւոյ սուրբ արարողութիւնները մերժելէն յետոյ կանարգեն նաև կուսութիւնը, ոչինչ համարելով Յիսուս Քրիստոսի բազմաթիւ սըրբոց օրինակը, որոնք առաքինութեամբ և սրբութեամբ անցուցին իրենց բոլոր կեանքը, նոյն իսկ առաքելոց համար երբեք ոչ մի յիշատակութիւն չը կայ սուրբ գրքի և եկեղեցական պատմութեանց մէջ, թէ արդարև առաքեալք կին, որդիք կամ թոռունք ունեցած են, բայց աղանդաւորք՝ որ աւետարանի քարոզիչ և առաքելական պաշտօնեայ լինել կը ձգտին, կուսակրօնութեան վիճակը կարհամարհեն, իրենց անձը աշխարհային

իրաց տալով՝ վարքով և գործքով կը հակառակին Յիսուսի Քրիստոսի հրամանաց և սուրբ կամաց՝ «ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել[1]»։

Պօղոս առաքեալ Կորնթացի քրիստոնէից տարակուսութիւնը լուծելու համար, որոնք կուսակրօնութեան վիճակը իրանց խորհրդածութեանց առարկայ դարձրած էին, կը գրէ՝ «կամիմ զի դուք անհոգք լինել, զի որ անկինն է՝ հոգայ զՏեառն, թէ որպէս հաճոյ լինի Տեառն, և որ կնաւորն է՝ հոգայ զաշխարհէ, թէ որպէս հաճոյ լինի կնոջ իւրում[2]»։ Աղանդաւորք իրանց աշխարհասէր և մարմնասէր լինելը կամենալով ծածկել՝ և կուսակրօնութիւնը պահեցողութեան հետ ի միասին հերքել, մոլորեցուցչաց համար Պօղոս առաքելոյն սուրբ Հոգւոյ ազդմամբ ասած այս խօս-

[1] Մատ. Զ. 24։

[2] Ա. Կորն. Է. 32. 33։

քը՝ Որ տրտելլոսոյն յառաջաբանութեանց. և մէջ-
նէջէն է յետոյ ըստ Աւգոստինոս հաստատեալ
է փոխել հաստատելոց՝ ի չարն մեկնելով
Քրիստոսից սահմանած կուսակրօնութեան
վիճակը և պահեցողութեան օրէնքը մոլո-
րութիւն կը քարոզեն. սրբազան առաքե-
լոյն ի հոգւոյն սրբոյ եղած այս յայտնու-
թիւնը՝ կուսակրօնութեան, պահեցողու-
թեան և ամուսնութեան օրէնքը խափանե-
լու համար չէր, այլ աղանդաւոր մոլորե-
ցուցիչներուն համար, որոնք քրիստոնեայ
անունը կրելով Պիւթագորաս փիլիսոփա-
յի հնարած աղանդին յարած՝ պիտի ու-
րանային աւետարանական ճշմարտութիւ-
նը. Թէոդորէտ. Երեւ. 573. Հատ. Խօս.
113—117. զի եթէ աղանդաւորք սուրբ
գրքի ուղիղ վարդապետութենէն շրջե-
ղուէին, երբէք Պիւթագորեան այս մո-
լորութիւնը, չէին շրջեր քրիստոնէից
վերայ. մինչդեռ Քրիստոսի սուրբ եկե-
ղեցին կուսակրօնութեան վիճակը կըն-

գունի և ամուսնութեան խորհուրդը իբրև աստուածային օրէնք կը ճանաչէ, որոյ Աստուծոյ հաճելի լինելը Պօղոս ինքնին կը խոստովանի. [illegible] ¹։

Սուրբ գիրք՝ կուսութեան վիճակը բարի համարելով՝ ամուսնութեան ևս արգելք չը դներ. ինչպէս աղանդաւորք մոլորութեամբ կուսութեան վիճակը կը մերժեն, և [illegible] քարոզող Պիւթագորեան մոլար աղանդին կը հետևին, յորմէ կը ծագի չնութիւն և

---

¹ Ա. Կորն. Ե. 28–37. Ոսկեբ. Գլ. ԺԴ.

պոռնկութիւն. այս բարոյականութեան ապականիչ ախտերը։ Ահա թէ ինչպէս Պօղոս առաքեալ կուսութեան վիճակը անմուսնութեան հետ՝ և ժուժկալութիւնը՝ անժուժկալութեան հետ բաղդատելով կը գրէ. Բարւոք է առն ի կին մի մերձենալ. Բայց վասն պոռնկութեան իւրաքանչիւր ոք զիւր կին ունիցի, և իւրաքանչիւր ոք զիւր այր ունիցի[1], այս խօսքերով սրբազան առաքեալը նախ կը յայտնէ հրաժարիլ շնութենէն և պոռնկութենէն. երկրորդ կուսութեան վիճակը յարգել ժուժկալութեամբ։

Յիսուս յայտնեց իւր աշակերտաց. որ աշխարհի սէրը միանգամայն հակառակ է աւետարանի քարոզութեան և առաքելական պաշտօնէութեան. կամ պէտք աշխարհը սիրել և աւետարանի քարոզութեան ասպարիզէն հեռանալ, և կամ

[1] Ա. Կորն. Է. 1. 2.

առաքելական պաշտօնը ստանձնելով աշխարհը ձգել[1]։ Եւ որպէս զի կուսակրօնութիւնը բռնական համարելով անփոյթ չը գտնուին վարուց և բարուց սրբութեան և մաքրութեան վերայ, պատուիրեց որ գործերնուն միտ դարձնեն, բարի անուն ունենան, անբամբաս կեանք վարեն, որ աւետարանի խօսքերը լսողաց սրտի մէջ արմատ գտնէ, և Աստուծոյ անունը հանապազ փառաւորուի, այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է[2]։

Առաջին դարերու հաւատացեալք այնքան սիրող և հեռեւող էին առաքինութեանց և զգաստութեանց, որ ամուրի կեանքը և կուսութիւնը իրանց մէջ մեծ յարգանք ունէր, որի համար Յուստի-

---

[1] Մատթ. ԺԹ. 12, Ղուկ. ԺԴ. 26։

[2] Մատթ. Ե. 16։

նոս՝ իբր ի ջատագովութիւն քրիստոնէութեան գրած թղթի մէջ կը վկայէ։ Թ--ղՆ Հ--ռ--ք։ Ա. 15։

Իւ որչափ հեթանոսաց մէջ անժուժկալութիւնը, հեշտախտութիւնը և տեսակ տեսակ մոլութիւնները կը շատնային, առաւել ևս քրիստոնէից մէջ առաքինութիւնը և ժուժկալութեամբ կուսութիւնը կը փայլէր, և մեծ պատուար կը կանգնէր հեթանոսական մոլութեանց դէմ, և այսպիսի առաքինութեամբ քրիստոնէական կրօնը յաղթող գտաւ աշխարհի վերայ, հեթանոսաց աղտեղութիւնք տեղի տուին առաքինական կենաց, և մարդկային բնութիւնը ազնուացաւ աւետարանի շնորհաց լուսով։

## ԳԼՈՒԽ Է.

### Աստուածութիւն Յիսուսի

ՅԻՍՈՒՍ Աստուծոյ որդին՝ սուրբ Երրորդութեան անձանց մին․ մարդկային մարմին և բնութիւն առնելով՝ միանգամայն իբրև կատարեալ Աստուած և կատարեալ մարդ երևեցաւ երկրի վերայ․ և մեր նմանութեան և կարեաց հաղորդ եղաւ։ Աստուածորդւոյ մարդեղութեան խորհուրդը մարդկային մտաց հասողութեան անըմբռնելի լինելով՝ կը պահուի միմիայն նորա աստուածային գիտութեան մէջ․ ինչպէս որ անհնարին է հասու լինել բնութեամբ՝ մարդկային հոգւոյ ընդ մարմնոյն միաւորութեան․ նոյնպէս և անհասանելի է մտաց․ աստուածային և մարդկային բնութեանց միաւորութիւնը միմեանց հետ։

Քրիստոսի մարդեղութեան և տնօրէնութեան վերայ մարգարէից գուշակութիւնները կատարացուցանեն, որ նա արդարև իբրև զմեզ կատարեալ մարդ և իբրև կատարեալ Աստուած շրջեց երկրի վերայ. Հաւատարիմ է բանն և ամենայն ընդունելութեան արժանի, զի Յիսուս Քրիստոս եկն յաշխարհ զմեղաւորս կեցուցանել[1], խաչի և մահուամբ իւր անձն՝ մարդկանց փրկութիւն շնորհելու համար. և բոլոր մարգարէից կանխասացութիւնք սուրբ Հոգւոյ ազդմամբ կատարուեցան Քրիստոսի մարդեղութեամբ. և այսպէս՝ Յիսուս եղաւ իսկապէս լրումն օրինաց և մարգարէից. և ամենայն աստուածավայելուչ և մարդավայելուչ գործք յատուկ Յիսուսի անձին կրկներարերի. վասն զի նոյն անձն է՝ որ կատուի չարչարելի և անչարչարելի, մեռեալ և անմահ, անարգեալ

---

[1] Ա. Տիմ. Ա. 15. Ղուկ. ԺԹ. 10.

և փառաւորեալ· [illegible]
[illegible]
[illegible]
Աթանաս. Թղթ. առ Եպիսկոպոսն.

Արդ՝ երբ ի յաւիտենից սահմանեալ մարդեղութեան ժամանակըն եկաւ հասաւ [illegible] [1], սուրբ Երրորդութեան անձնաւորութենէն մին՝ Հօր Աստուծոյ էակից և փառակից միածին որդին՝ Նախամարդոյն յանցանքին ներքոյ գտնուած մարդկային բնութիւնը սրբելու և կրկին իւր առաջին անմեղութեան վիճակը վերահաստատելու համար, կամօք և գործակցութեամբ սուրբ Հոգւոյն իջաւ սուրբ կուսին արգանդը, մարդկային մարմին, հոգի և միտք առնելով. մարդկային մե-

[1] Գաղ. Դ. 4.

դանչական բնութիւնք իւր աստուածային անապական և անախտակիր բնութեան չեռ խառնելով միացուց. և եղաւ մի և անբաժանելի. միանգամայն անփոփոխ պահելով ի միաւորութեանն աստուածային և մարդկային բնութիւնք և կամքը [1]:

Ծնաւ իբրև Աստուած և մարդ կատարեալ. անշփոթ էութեամբ և անբաժանելի միաւորութեամբ. և թէ՛ Աստուած գոլով բանն՝ եղաւ կատարեալ մարդ. մարմին առնելով անձնաւոր և միտաւոր. ոչ աստուածային կամքը մարդկային կամաց կըհակառակէր. և ոչ մարդկայինը աստուածայնոյն. այլ երբեմն աստուածայինը՝ և երբեմն մարդկայինը գործ կը դնէր անձնիշխանաբար. և մարդ-

---

[1] Մարկ. ԻԱ. 41. Ղուկ. ԻԲ. 42. Յովհ. Ը. 24. 25. Զ. 38. Ը. 56. Փ. 33–38. Ընդհ. 171–175.

կայինը միշտ աստուածային կամաց կը հե-
տևէր, ինչպէս տնօրինական գործքերէն
կը յայտնուի.

Իբրև Աստուած սքանչելիքներ և նշան-
ներ կըգործէր, և իբրև մարդ կըքաղց-
նոյր, կերկնչէր, կարտասուէր և այլն. որ
մարդկային բնութեան հետևումն էր, և
այս ամէնը իբրև ի միոյ անձնաւորութենէ
զանազան ներգործութիւններ կը տնօրի-
նէր. ոչ թէ այլ էր աստուածային ներ-
գործութիւնը և այլ մարդկայինը. այլ
նոյն ինքն էր՝ որ կը ներգործէր աստուա-
ծայինը աստուածաբար, և մարդկայինը՝
մարդկօրէն. վասն զի Աստուած էր և
մարդ. — Մարմին է [illegible], որդին Աստուած
Մարդ [illegible]
[illegible]
[illegible]
Ագաթ.

Ինչպէս որ կենդանութեան միջոց,
նոյնպէս և մահուան, անբաժանելի էր

*մարմնէն և մարդկեղէն Հոգիէն. և թէ՛ խաչին վերայ, և թէ՛ մարմնով գերեզմանին մէջ եղած ժամանակ, աստուածութեամբն յերկինս ընդ աջմէ Հօր էր՝ որպէս և Հայր էր՝ ընդ նմա յերկրի.* Հայր իմ ընդ իս է, և ոչ երբեք զիս միայն, զի որ Հայր է՝ նոյն է և Որդի և Հոգի, և որ Որդի է՝ նոյն է և Հոգի և Հայր, և որ Հոգին սուրբ՝ նոյն է և Հայր և Որդի. *Ընդհ. երես* **126**.

*Որդին Աստուծոյ միածին է, բայց յորում չկայ ուրիշ մէկը ծնուած ոչ առաջ և ոչ յետոյ.* միածին զարմեալ նոյն իսկ, որպէս միայն է միայնոյ ծնեալ յԱստուծոյ *և* է Հօրէ. *Կիւրղ. Պարապ: Ճշմարիտ կերպարան և պատկեր Հօր Աստուծոյ,* որ է ներգործութեան Աստուծոյ է՛[1], *Հաւասարապատիւ և համափառ,* այս էն իմն Հօր իմոյ, զի զատուածութիւն ունի որպէս զատուածն զՀայր.

[1] Փիլիպ. Բ. 6. Կողոս. Ա. 15.

*ոչ թէ որդեգրական շնորհօք որդի, որպէս մեք եմք[1]. այլ ճշմարիտ և բնական. թէ ըստ աստուածային ծննդեան ի Հօրէ. և թէ ըստ մարդեղութեան ի կուսէն. զոր նոյն ինքն Աստուած վկայեաց,* դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ[2]. *Նաև լոյս փառաց և Նկարագիր էութեան նորա*[3]:

*Յիսուս իւր մարդեղութենէն առաջ, ինչպէս սուրբ գրքէն կիմանամք կը կոչուէր,* [illegible] *և* [illegible]. *իսկ մարդեղութենէն զկնի կոչեցաւ ըստ մարդկութեան* [illegible], *որը թէև մարդանալէն առաջ ևս ունէր ըստ աստուածու-*

---

[1] Յովհ. Ա. 13. Գաղ. Գ. 26.

[2] Մատ. Գ. 17. Յովհ. Ա. 1.

[3] Եբր. Ա. 3.

թեան[1] . այլ և Տէր՝ որովհետև իւր արեան փրկանք տուաւ և կիշխէ ամենուն վերայ կենդանեաց և մեռելոց, իւրաքանչիւրին հաղորդակից առնելով իւր փրկագործութեան[2] . Տէր-Տէր, զի ամենքը նորա խնամոց կախեալեն, և նորա հրամանաց և կամաց կըպարտին հնազանդել[3] ։ Դ————ր, որովհետև նորա հրամանին կը սպասեն ամենքը և նա է միայն մարդկանց գաղտնեաց քննողը, դատողը և վարձատրողը[4] . Թէպէտ և մարդկային փրկութեան նկատմամբ՝ աստուածային երեք անձանց կամքը մի է, և հաւասարապէս դատաւորք կը կոչուին, բայց դատաստանի իրաւունքը ի Միանաւորի որդ-

---

[1] Յով. ԺԲ. 36. Ղուկ. Ա. 32.

[2] Փիլիպ. Բ. 10.

[3] Մատ. ԻԸ. 20. Յով. ԺԴ. 34. Յակ. Դ. 12.

[4] Գործ. Ժ. 42.

ւոյն Աստուծոյ կը պաշտածի՝ զի միայն որդւոյ անձն էր որ մարմնացաւ։

Յիսուս Քրիստոս ոչ միայն Հօր և սուրբ Հոգւոյ հաւասար իրաւունք ունի արարչութեամբ բոլոր տիեզերաց վերայ՝ այլև փրկագործութեամբ ևս իրաւունք ունի՝ զի իր անձն Հօր և սուրբ Հոգւոյ հաճութեամբ փրկանք տուաւ աշխարհին, և ի կատարածին պիտի գայ դատաւոր նստի վարձատրելու և պատժելու [1]։ Գլուխ եկեղեցւոյ՝ ըստ շնորհաց՝ զոր առատօրէն կը բաշխէ իր անդամոց [2]։ Միջնորդ՝ ըստ որում՝ հաշտութեան միջնորդ եղաւ Աստուծոյ և մարդկանց մէջ, մի է միջնորդն Աստուծոյ և մարդկան մարդն Յիսուս Քրիստոս [3]։ Թագաւոր, որովհետև ինքն է որ

---

[1] Յովհ. Ե. 22. Բ. Տիմ. Դ. 1. Բ. Կորն. Ե. 10.

[2] Եփես. Ա. 22.

[3] Ա. Տիմ. Բ. 5.

կը մատուցանէ իւր անձն Աստուծոյ՝ պատարագ մարդկօրէն, և կընդունի զայն աստուածաբար՝. որի համար կասէ սուրբ Կիւրեղ, [illegible] Պարապ, [illegible] ըստ մարդկութեան, ինչպէս կիմացուի Շնորհալւոյ առ Մանուէլ կայսր գրած թղթէն, [illegible]. Ընդհ. 174,

Սուրբ եկեղեցին Քրիստոսի հետևելով սուրբ հարց և վարդապետաց ուղիղ և անստերիւր վարդապետութեան, կընդունի այն ամենը՝ ինչ որ յատուկ է Յիսուս Քրիստոսի՝ իբրև արարչի և փրկչի ըստ աստուածութեան և ըստ մարդկութեան, և կըմերժէ խապառ հե-

[1] Եբր. Դ. 14,

րնարկոնները, և նոցա մոլար վարդապետութիւնները, որոնք չարաչար զինուեցան նորա մարդեղութեան դէմ.

## ԳԼՈՒԽ Ը.

[illegible]

Յիսուս Քրիստոս աշխարհ գալով մարդկանց փրկութիւն շնորհեց, երկնքի արքայութեան ճանապարհը հեշտացուց իր մահուամբ և չարչարանօք, առատօրէն տալով իր աստուածային շնորհը. որպէս զի մարդիկ դիւրաւ հասնին ցանկացած փրկութեան. Դրաւ եկեղեցւոյ սուրբ խորհուրդները՝ որոնք առաւել ևս կընծայեն մեզ Աստուծոյ շնորհները, և իր այդ խորհրդոց մատակարարներ հա-

տուոնց եկեղեցւոյ պաշտօնեաները. որոնք ձեռնադրութեամբ և օծութեամբ նուիրուած լինելով սուրբ եկեղեցւոյ սպասաւորութեան. մինչև զօրավիգն անին զսուրբ Հոգին Աստուած՝ իրանց սուրբ պաշտամանց մէջ[1]. որը շարունակութիւն է քահանայութեան կարգին. զոր Աստուած առ Մովսիսի սահմանեց. և յառաջացուց զայն Ղևտական ցեղին. և Յիսուս նոյնը վերահաստատեց իր եկեղեցւոյ մէջ. տալով իր առաքելոց և նոցա յաջորդաց[2].

Այս քահանայական սուրբ կոչումը ազանդաւորք կը ժխտեն ասելով. թէ Մովսէսի պատարագները դադարելով. դադարեցաւ և քահանայութիւնը. բայց Յիսուս մովսիսական պատարագին տեղ. որ կը լինէր անբան անասնոց մատուց-

[1] Գործ. Զ. 6. ԺԴ. 22. Եփես. Դ. 11. Բ. Տիմ. Ա. 6—14.

[2] Գործ. Ի. 24. 28. Ա. Պետ. Ե. 1. 2.

մամբ․ իւր փրկարար մարմինը և արիւնը շնորհեց․ և Ահարոնեան հնոյ քահանայութեան տեղ՝ իւր անձնուիրեց․ ինքն լինելով միանգամայն քահանայ և քահանայապետ ըստ կարգին Մելքիսեդեկի․ և նոյն կարգը և իրաւունքը տուաւ իւր եկեղեցւոյ սպասաւորաց ձեռնադրութեամբ․ իւր սուրբ մարմինը և արիւնը պատարագելու․ և սուրբ գրոց առաջնորդութեամբ իւր ժողովրդոց քարոզելու և հովուելու [1]։

Աղանդաւորք իրենք իրենց կը տան՝ ուրանալով քահանայութեան կոչումը․ հակառակ սուրբ գրոց վարդապետութեան․ և զի չունին ինքեանք և չեն ընդունել յԱստուծոյ․ այլ յանձնէ․

Աղանդաւորք ոտնահարելով եկեղեցւոյ սրբութիւնը․ և ի փրկչէ օրինադրեալ կարգաւորութիւնը․ հաստատեցին՝ որ իւ-

---

[1] Եսայ․ ԿԲ․ 20․

բաքանչիւր որ ինքը կարդալով իմանայ և մեկնէ. հաւատալու ճշմարտութեանց հասու լինի. և երբէք այլոց վարդապետութեանց չը հետևի. այն ինչ՝ սուրբ գիրքը կը կարդան, ցանկացածնուն պէս թիւր մեկնութիւն կը տան. կը քարոզեն. կը գրեն. վկայութիւններ յառաջ կը բերեն. գլուխներ. թուահամարներ կը կուտակեն. և իրանց սխալ վարդապետութեանց յարմարեցնելով լսողները որսալու կաշխատին.

Սոցա նման շատ մոլորեցուցիչներ դարերը եկեղեցւոյ դէմ յարուցին. ինչպէս որ Պօղոս առաքելոյն ժամանակ ևս կը գտնուէին, որոնք սուրբ գրոց դժուարիմաստ խօսքերը սխալ մեկնելով՝ թիւր վարդապետութեամբ կը գայթակղեցնէին հաւատացեալները. մինչև անգամ՝ հարկը ստիպեց առաքելոյն, իւր գրութեանց մէջ տեղ տեղ՝ Պօղոս առաքելոյն գրութեանց մէջ պատահած դժուարիմաց մտքերը մէջ

*բերել ի զգուշութիւն հաւատացելոց.* Զոր օրինակ և սիրելի եղբայրն մեր Պօղոս ըստ ընդունելոյ իմաստութեանն նմա յԱստուծոյ՝ գրեաց ձեզ, որպէս և յամենայն իւր թուղթսն խօսի վասն այսոցիկ, յորս գտանի ինչ ինչ դժուարիմացք, զոր անուսումքն և յանհաստատքն խոտորեն, որպէս և զայլ գիրս ի կորուստ անձանց իւրեանց¹։

*Ծի՛ է թէ կը քարոզեն թէ՝ բացի սուրբ գրքէն, ուրիշ խօսքին պէտք չէ հաւատալ. իրանք ինչո՞ւ հակառակը կը գործեն. սուրբ գրքի վարդապետութեան տեղ՝ շատ անգամ՝ իրանց մտացածին վարդապետութիւնները կը քարոզեն, յառաջ կը տանեն, կը մեկնեն, և կը կամենան որ ամեն մի լսող այնպէս իմանայ, ինչպէս որ իրանք թիւրութեամբ կըմբռնեն, և կարգելեն հաւատ ընծայել հօգեշունչ*

¹ Բ. Պետ. Գ. 16.

մատեններից մեկնութեանց, զորս եկեղեցիք
քրիստոնէից կընդունեն իբրև թարգման
խորհիմաստ իմաստից սուրբ գրոց։

Եթէ սուրբ գիրքը բացատրութեան
կարօտ չէ, ինչպէս կը քարոզեն. ընդ-
դէ՞ր իրանք բացատրութեան կը դիմեն,
եթէ սուրբ Հոգւոյ օգնութիւնը կընդու-
նին, որպէս թէ իրանք Հոգւով ընտրած
են և Հոգւով կը խօսին, կը գրեն և կը
մեկնեն թիւրելով սուրբ գրքի միտքը,
ինչո՞ւ կուրանան Հոգւոյն սրբոյ բազմա-
պատիկ շնորհները, հերքելով սուրբ Հոգ-
ւոյ ներշնչմամբ մեկնութիւնները, զորս
սուրբ Հոգւոյ օգնութեամբ սուրբ հարք
մեկնեցին և աւանդեցին քրիստոնական
եկեղեցւոյն. վասն զի՝ Աստուծոյ ներքին
կամքը և նորա մարդասիրական բարձրա-
գոյն խորհուրդները, մարդկային տկա-
րութեան անհասանելի լինելով՝ միշտ
կը կարօտի Հոգւոյն սրբոյ շնորհաց օգ-
նութեան, ինչպէս Պօղոս առաքեալ

գիտէ. ոչ ոք զԱստուածայինն գիտէ, եթէ ոչ Հոգին Աստուծոյ[1]:

Աղանդաւորք՝ զի թէ և իրանց մոլորութիւնը ընդարձակելու համար, Հոգւոյն սրբոյ շնորհը ունիմք կասեն, բայց ընդհանրապէս մին միւսի մեկնութեան կը հակառակի, զոր օրինակ. Կալուինականք ուրիշ կերպ կը մեկնեն, Անգլիականք՝ ուրիշ, նոյնպէս և Սոկինեանք, Մորմոնեանք, Քուէյքերքը, Սուետենպորգեանք, Կրկնակնիքը, Միանձնականք և սոյա նման միւս բոլոր աղանդաւորներ առանձին առանձին իրանց մեկնութիւնները ունին. մինչ զի մարդ չը գիտէ՝ թէ որուն հաւատայ այս առանձնաշնորհութեանց արդասիքը. որպէս զի ճշմարտութեան իրապէս լինի.

Այս տարբերական պաշտօնեայ ձեւացողները կըպարծենան թէ՝ Հոգւոյն սրբոյ ընտրութեամբ տարբերական պաշտօն

[1] Ա Կորն. Բ. 11:

կը փախեն, և աւետարանը կը քարոզեն, սակայն Հակառակ Յիսուսի Հրամանին, որ ըսաց առաքելոց. Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրեւ զգառինս ի մէջ գայլոց ([illegible])[1], անՀաւատները թողած, որոնք աւետարանի քարոզութեան պէտք ունին, քրիստոնէից մէջ կը շրջին և կը քարոզեն, որոնք բնաւ կարօտութիւն չունին լսելու նոցա թիւր վարդապետութիւնները, միտքերնուն մէջ ունենալով Յովհաննէս աւետարանչի այս խօսքը, Սիրելիք, մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք, այլ քննեցէք զհոգիսն, եթէ յԱստուծոյ իցեն, զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ[2]։

Նոցա այս ընթացքը բոլորովին կը Հակառակի Յիսուսի Քրիստոսի այս խօսքին թէ, Ոչ է պէտք բժիշկ ողջոց, այլ հիւանդաց[3]. որով կը յայտնէ թէ պէտքէ

[1] Ղուկ. Ժ. 3.
[2] Յովհ. Դ. 1.
[3] Մատ. Թ. 12.

քարոզել անհաւատներուն կռամոլներուն և հեթանոսներուն *), ուր որ աւետարանի լոյսը դեռ մուտք գործած չէ, ինչպէս Պետրոս առաքեալ Երուսաղէմի մէջ ժողոված հրէից կը քարոզէր. «Ա՛րք հրէաստանեայք և որ բնակեալ էք յԵրուսաղէմ ամենեքեան, այդ ձեզ յայտնի լիցի և ունկնդիր բանից իմոց. . . . Ոմանց յօժարութեամբ ընկալեալ զբանս նորա մկրտեցան, և յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրև երեք հազարք [1]:

Աղանդաւորք իրենց մոլորութեանց տարածման բաւական չհամարելով սուրբ

---

*) Ընկերութիւնք քարոզիչներ կուղարկեն առ մահմետական ժողովուրդս եւ առ կռապաշտս Հնդկաց եւ Չինաց. սակայն սոցա կարգը մտնելով մի քանի պաստօրներ. կանցընին ի Պարսկաստան եւ ի Տաճկաստան կորսան քրիստոնեաներ. եւ կը տեղեկագրեն ընկերութեանց թէ մահմետականներ եւ եզիդիներ դարձուցած են.

[1] Գործ. Բ. 14. 41.

գրոց միտքը այլայլելը սխալ բացատրու-
թեամբ, որ աշխարհաբարի դարձնելով
ուզածնուն պէս կը փոփոխեն, և սուրբ
գրքի ուղիղ միտքը կայլանդակեն, շատ
գրքեր ևս աստուածաշնչի մէջէն պակ-
սեցուցած, դուրս ձգած են, որոնք իրանց
վարդապետութեանց չեն յարմարիր և
չեն արտայայտեր իրենց կամքը ու միտ-
քը. որպէս զի իրենց մոլորութիւնը ընդ
քօղով ծածկել կարողանան, կը գրեն թէ
բնագրին մէջ պակասէ, կամ թէ չը գը-
տանք, մինչդեռ սուրբ թարգմանիչք,
որոց սուրբ Հոգին կօժանդակէր, սուրբ
գրոց թարգմանութեան մէջ չըսխալեցան,
ոչ մի գիրք և ոչ մի նշանախեց անգամ
չը վրիպեց նոցա աչքէն և գրչէն, որոց
թարգմանութիւնները ժողովք ընդու-
նեցին և քրիստոնեայք ընդ գրկած ու-
նին, այժմ աղանդաւորաց վրիպական և
անյարմար դարձած է այդ յԱստուածոյ
ներշնչեալ մատեանք, ուրեմն ոչ թէ

չը կային՝ այլ իրենց ձեռնտու չը լինելով բառնալ հարկ համարեցին։

Որդեօ՞ք չեն կարդար գըքա՝ Յիսուսի առ Յովհաննէս տուած պատգամը սուրբ գիրքը աղաւաղողներուն և յապաւողներուն համար. [illegible] գիթէև գիտեն որ արածնին Աստուծոյ առաջ ծանր յանցանք է՝ բայց դարձեալ կը համակորին՝ մոլորութեանց մէջ մնալով՝ ահա թէ ինչ կը գրեն իրանք՝ ----

---

[1] Յայտ. ԻԲ. 15. 18. 19.

[illegible] Կան. Հաւատ. Երես. 39.

Այժմ ի՞նչ կասէք սուրբ գիրքը ազաւաղելով և կրճատելով Աստուծոյ և սուրբ գրոց վաւերականութեան դէմ չե՞ն մեղանչեր. Աստուածաշունչ սուրբ գիրքը Աստուծոյ ներշնչմամբ գրուած է. Հոգին սուրբ էր՝ որ մատենագրաց կը թելադրէր և կը շարժէր նոցա գրիչը՝ ինչպէս իրանք ևս կը խոստովանին սուրբ գրոց օգտակարութիւնը և ճշմարտապէս Աստուծոյ խօսքեր լինելը. [illegible][1]. և Թէ՝ [illegible] . . . [illegible]

---

[1] Բ. Տիմ. Գ. 16.

[illegible] ...նէ՛ն[1]. այժմ՝ թող մտածեն թէ՛ արժան է սուրբ գիրքը աղաւաղել՝ թէ նոյնութեամբ ընդունել՝ իբրև աստուածային գործ և հեղինակութիւն. և երկիւղածութեամբ փարուիլ նորա հետ[2], թէ մարդկային մտքի ծնունդ ճանաչել և ուղածնուս պէս աղաւաղել և թերատել:

Սուրբ գրքի գերազանցութիւնը կը տեսնուի իւր միութեան մէջ, որ բոլոր մատենագիրք առաջնորդուած յԱստուծոյ, նոյն հոգին և նոյն նիւթը կը մատակարարեն մեզ, և մի նպատակի կը ծառայեն: Սուրբ գրքի բովանդակ միտքը կը յայտարարէ, որ մարդիկ Աստուծոյ

---

[1] Եսայ. Ա. 2. Ա. Կորն. Բ. 13–16. Ա. Թես. Բ. 13.

[2] Ա. Կոր. Զ. 11. Եփես. Բ. 4. Ա. Պետ. Դ. 1.

հետ անքակտելի սիրով կապուած միշտ և յաւիտեան բարոյական յարաբերութեան մէջ են, և թէ բովանդակ տիեզերաց գոյութիւնը և մարդկային կացութիւնը կախումն ունի յԱստուծոյ. մանաւանդ սուրբ գիրքը կը պահանջէ մարդուց սրտի և վարուց մաքրութիւն, առանց որոյ Աստուծոյ հաճելի լինել անհնարին է, խաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին և սրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր[1].

---

[1] Եբր. ԺԲ. 14. Մատ. Ե. 8. Ա. Պետ. Ա. 15. 16.

## ԳԼՈՒԽ Թ.

### Ապաշխարութեան և Հաղորդութեան խորհուրդը։

ՅԻՍՈՒՍ Քրիստոս մարդկային փրկութեան հոգ տանելով՝ մարդասիրաբար հաստատեց ապաշխարութեան խորհուրդը՝ ըստ որում՝ մարդիկ դիւրաթեք բնութեամբ հակում ունենալով դէպի մեղանչականութիւն՝ կը կարօտին միշտ թողութեան, որ միայն կը լինի ապաշխարութեամբ և կատարեալ զղջմամբ, որով կը մերժէ մարդ իւր սրտէն ամեն չարութիւն, և կը մաքրէ իւր միտքը վնասակար խորհուրդներէ. [illegible] [1], և կուխտէ այնուհետև հե-

---

[1] Բ. Օրին. ժէ. Թ.

որ մնալ ամեն չար գործքերէ և անարատութեամբ ապրիլ ըստ Աստուծոյ։

Ապաշխարութեան խորհուրդը հին օրինաց ժամանակ ևս կը քարոզուէր, զոր Յիսուս օգտակար և կարևոր համարելով կրկին հաստատեց. ինչպէս կը տեսնուի ընդհանրապէս հին և նոր կտակարանաց մէջ. Թողցէ ամբարշտին ճանապարհս իւր և այր անօրէն զխորհուրդս իւր, և դարձցի առ Տէր, և գտցէ ողորմութիւն և առ Աստուած մեր, զի բազմապատիկ թողցէ զանօրէնութիւնս ձեր [1]։

Փրկիչը իւր հրաշափառ յարութենէն վերջ՝ իւր անձն յայտնեց սրբազան առաքելոց վերնատան մէջ, ուր ժողոված էին, և փչելով նոցա վրայ սուրբ Հո-

[1] Եսայ. ԾԵ. 7։ Սաղմ. Լ. 12։ Եզեկ. ԺԴ. Զ։ Յովէլ. Բ. 12։ Զաքար. Ա. 3։ Յոնան. Գ. 10։ Հռովմ. Բ. 4։ Բ. Կորն. Է. 9։ Բ. Տիմ. Բ. 25։ Եփեսո. Զ. 6.

գին, հանդիսաւոր կերպով շնորհեց նոցա մեղաց թողութեան իշխանութիւնը. փչեաց ի նոսա և ասէ՝ առէք Հոգի սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա, եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի [1]։ Յիսուս իր այս աստուածային խօսքով յայտնեց, որ առաքեալները և նոցա յաջորդները, որ ձեռնադրութեամբ ունին այս իշխանութիւնը [2], կարող են անզեղջ և անապաշխար մեղաւորները իրենց մեղաց պատիժներով կապել և Աստուծոյ շնորհաց հաղորդակցութենէն մերժել. իսկ զղջացող և ապաշխարող մեղաւորները՝ մեղաց պատիժներէն արձակել և Աստուծոյ ներողութեան և շնորհաց արժանացնել. և այս իշխանութիւնը ի գործ դրին առաքեալք և ցարդ կը յարատեւի նոցա յաջորդաց ձեռօք՝ ա-

[1] Յովհ. Ի. 22. 23. Մատթ. ԺԸ. 18.
[2] Գործ. ԺԴ. 22. Ա. Տիմ. Դ. 14.

մեն զար և ամեն ժամանակ. և ամեն կարգի և աստիճանի մարդիկ իրենց մեղքերը խոստովանելով ապաշխարութեան և զղջման միջոցաւ կընդունին մեղաց թողութիւն և կարժանանան հաղորդութեան փրկարար մարմնոյ և արեան Յիսուսի Քրիստոսի, [illegible] Խոստով. ի մեկ. ժամանակի.

Այս կապելոյ և արձակելոյ իշխանութիւնը կրտեսնուի յայտնապէս Պօղոս առաքելոյն յանդիմանական խօսքին մէջ, որ երբ տեսաւ թէ Եղիմաս մոգ յանդգնութեամբ կը հակառակի սրբազան առաքելոյ քարոզութեանց ի պատիժ նորա չարութեան ասաց. Ո՜վ լի ամենայն նենգութեամբ և ամենայն չարութեամբ, որդի՛ սատանայի, թշնամի՛ ամենայն արդարութեան, ո՞չ դադարես ի թիւրելոյ զճանապարհս Տեառն ուղիղս, և արդ, ահա ձեռն Տեառն ի վերայ քո, և եղիցիս կոյր՝ և

տեսանել ջուրն մինչև ի ծովակն մի'[1]

Աշանդաւորք՝ հակառակ սուրբ գրոց վարդապետութեան՝ կը մերժեն այս խորհուրդները՝ և կարևորութիւն չընծայելով խոստովանութեան, մարդկային գիւտ կը համարեն, միայն Աստուծոյ խոստովանիլ բաւական քարոզելով. որով և հերքած կը գտնեն այս հոգևոր իշխանութիւնը, զոր եկեղեցին Յիսուսէն առնելով՝ կը պահպանէ սրբութեամբ և կը մատակարարէ քահանայից ձեռօք. որի համար գեղեցիկ կը գրէ Ոսկեբերան. Քանզի զի՞նչ այլ իցէ թէ թագաւորաց զիշխանութիւն երկնաւորացն ետ նոցա (Քահանայից). զի որոց թողուցուք զմեղս, թողեալ լինի. ասէ, և զորոց ունիցիք՝ կալեալ լինի. Ասաց՝ զի՞նչ կայ այս իշխանութեան բարձրագոյն. զամենայն դատաստան ետ Հայր Որդւոյ

---

[1] Գործ. ԺԳ. 10.

[illegible] Գիրք. Գ. յաղագս քահանայութեան։

Թող չընդունեն, որպէս զի մոլորամըտութեամբ ցոյց տան թէ՝ կը հետեւին երրորդ դարու Նովատեան հերետիկոսաց աղանդին, որոնք կուրանային առելով՝ [illegible]

Խոստովանութիւնը իւրաքանչիւր քըրիստոնէի մէջ կենդանի կը պահէ աստուածպաշտութիւնը. կը մխիթարէ նորա հոգին թողութեան յուսով, կը նորոգէ նորա միտքը, և կառաջնորդէ հեռի մնալ մեղքերէն, կը հաշտեցնէ Աստուծոյ հետ և արքայութեան ճանապարհը կը բանայ նորա առջև։ Այս խորհրդոց փրկարար շնորհաց՝ բողոքականք կարեւորութիւն չըտալով ամեն ջանք և միջոց ի գործ դրին և դադարեցուցին խոս-

տուվանութեան գործադրութիւնը Նիւրեմբերգի մէջ. և այնուհետև սկսեց քաղաքը գողութեանց, յափշտակութեանց, անառակութեանց և ամէն տեսակ չարագործութեանց կենդրոն դառնալ, մինչև որ Կարլոս հինգերորդ կայսեր միջամտութեամբ վերահաստատուեց, և ապա դադարեցան ամէն չարագործութիւնք և քաղաքը սկսեց հանդարտութիւն գտնել։

Սա արդարև մի ապացոյց է, որ մարդիկ այն ժամանակ կը զգուշանան հեռի մնալ չարիք գործելէն, երբ քահանայի հոգևոր ազդու խօսքերը կը ներշնչէ իւրաքանչիւր խոստովանողի սրտի մէջ բարոյականութիւն. Երբ մեղքի ծանրութիւնը մի առ մի նկարագրելով կը ծանօթացնէ նորա վնասակար և անբարոյականացուցիչ հետեանքների հետ, և կը խրատէ այլևս չը գործել. յետ այնորիկ մարդ կը զգաստանայ ըստ ամենայնի, կուխտէ առաքինանալ առ Աստուած և սիրել աստուածա-

հաճոյ կեանք՝ մեռցնելով իր մէջ ցանկական կիրքերը՝ որ վնասակար են թէ առ Աստուած և թէ առ մարդիկ։ Ահա այս աստուածային օրինադրութեան կը հակառակին և կը մերժեն մոլորութեամբ այս մեղքերը կապելոյ և արձակելոյ աստուածային հրամանը․ որով ցոյց կը տան թէ՝ իրանք երբէք Քրիստոսի ճշմարիտ եկեղեցւոյ գաւթէն չեն և չունին փրկարար շնորհը։

Ապաշխարութեան խորհրդէն զկնի՝ երբ կատարեալ զղջմամբ կը խոստովանին իրանց մեղքերը և կառաջադրեն ուխտիւ հրաժարիլ ամեն մոլորութիւններէն, կարժանանան մի այլ մեծագոյն բարեաց—Սուրբ Հաղորդութեան, զոր Յիսուս Քրիստոս սահմանեց վերնատան մէջ, իր մատնութեան առաջին գիշեր, բաղարջակերաց տօնին՝ իր աշակերտաց հետ օրինական զատը և բաղարջը ուտելէն զկնի․ Ե. Վերջին [illegible],

առ Յիսուս հաց՝ օրհնեաց և եբեկ և ետ աշակերտացն և ասէ. Առէ՛ք, կերա՛յք, այս է մարմին իմ, և առեալ բաժակ գոհացաւ ետ նոցա և ասէ. արբէք ի դմանէ ամենեքեան, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղանի ի թողութիւն մեղաց [1]։

*Այս սուրբ խորհուրդը Հաղորդակից կ՚ընէ մեզ ոչ միայն յաւիտենական կենաց և Յիսուսի շնորհաց, այլ և նոյն իսկ Յիսուսին. Կենդանի հաւատքը կը սովրեցնէ մեզ, որ այն նուիրած խորհրդական նիւթը*—հացն *ու* գինին, *սրբագործուած քահանայի ձեռօք ի պատարագին, է ճշմարիտ իսկական* մարմին *և* արիւն *Յիսուսի Քրիստոսի ընդ տեսակաւ հացի և գինւոյ, և ոչ թէ օրինակ, կամ փոխարէն Յիսուսի Քրիստոսի մարմնոյ և արեան. ուստի կը խոստովանինք.*

---

[1] Մատ. ԻԶ. 26—28. Ա. Կորն. ԺԱ. 24. 25.

որ նոյն իսկ հացն ու գինին, զկնի սրբագործութեան իսկապէս կը փոխարկուի ի մարմին և յարիւն Քրիստոսի, որ միայն հաւատոյ աչօք կը տեսնուի, և կատարեալ հաւատով կը ճանաչուի. Բաժակն օրհնութեան, զոր օրհնեմք, ո՛չ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի, հացն՝ զոր բեկանեմք՝ ո՛չ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի [1]։

Ուստի ով որ արժանապէս կընդունէ սուրբ հաղորդութիւնը, ընդունած կը լինի ճշմարտապէս Յիսուսի Քրիստոսի մարմինը և արիւնը, որի վերայ տարակուսիլն աններելի է, իսկ որոնք անարժանութեամբ կը ճաշակեն, կըդատապարտուին ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ [2]։

---

[1] Ա. Կորն. Ժ. 16. ԺԱ. 23—25. Ղուկ. ԻԲ. 13. 19. 20.

[2] Ա. Կորն. ԺԱ. 29.

*Յիսուս երբ կափառնաումի ժողովրդանոցի մէջ կը քարոզէր, խօսքը մարդկային փրկութեան վրայ դարձնելով ասաց, որ երբէք մարմնաւոր բարիքներ խնդրելու վրայ չմտածեն, զի ինքն յաշխարհ եկած է հաւատացելոց հոգևոր և խորհրդական կերակուր տալու միայն.* Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս. Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս, և ես յարուցից զնա յաւուրն յետնում. Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է. Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ և ես ի նմա[1]:

*Այս աստուածային խօսքերուն վրայ հիմնուելով սրբազան առաքեալք, նախ*

---

[1] Յովհ. Զ. 54—57.

իրանք. սրբագործեցին և ապա նոյն սրբա
բար խորհուրդը հրամայեցին իրանց յաջոր-
դաց կատարել միշտ ի յիշատակ իւր մար-
դեղութեան և խաչին վերայ պատարա-
գելոյն. ուստի կը հաւատանք անտարա-
կոյս. որ Յիսուս Քրիստոս իւր ամենակա-
րող զօրութեամբ՝ սրբագործած հացը և գի-
նին կարող է փոխարկել ի մարմին և յարիւն
իւր։ Այնքան մեծ է այս խորհուրդը մինչև
անգամ՝ առաջին դարերու հերետիկոսք,
զի որչափ և յանդուգն լինէին, դար-
ձեալ երկիւղածութեամբ կը վերաբերէին
սորան. և չէին համարձակիր տարակու-
սանաց տակ ձգել։

Հաղորդութեան հակառակորդ Բերին-
գարիոս հերետիկոսը դարձաւ իւր մոլո-
րութենէն և զղջմամբ մեռաւ. Նոյն-
պէս Լուտէր—Մարտին ամեն բողոքա-
կանաց հայրը՝ չը վստահացաւ ուրանալ
այս խորհրդոյ ճշմարտութիւնը. Բայց
այժմ աղանդաւորք կը համարձակին

ուրանալ սուրբ հաղորդութեան խորհուրդը, և սրբագործեալ նշխարը և գինին համարել իբրև լոկ հաց և գինի ի նշանակ Քրիստոսի մարմնոյ և արեան, և ոչ ընդ տեսակաւ հացի և գինւոյ փոխարկեալ իսկապէս ի մարմին և յարիւն Յիսուսի Քրիստոսի, և այսպիսի մոլորութեամբ սուտ կը հանեն զՅիսուս Քրիստոս, որ հաստատեց թէ՝ է ճշմարիտ մարմին և արիւն իւր, իսկ սուրբ եկեղեցին իւր ամեն պաշտամունքը, այս սուրբ խորհրդոյն նուիրելով կը փառաւորէ Աստուծոյ անհուն մարդասիրութիւնը մարդկային փրկութեան նկատմամբ, երկիւղածութեամբ կը յարգէ, երկրպագութիւն կը մատուցանէ, և մինչև անգամ՝ ճշմարտութիւնը անարատ պահելու համար ամենայն ինչ կը զոհէ,

Քրիստոսի սուրբ եկեղեցին կը հաւատայ և կը խոստովանի թէ՝ Յիսուս Քրիստոս է Աստուած և Որդի Աստուծոյ և

իբրև ամենակարող՝ կը փոխարկէ թէ նիւթը և թէ տեսակը՝ մի այլ նիւթի և տեսակի. վասն զի Յիսուս Քրիստոս հացը և բաժակը ձեռքը առնելով՝ իւր այս աստուածային խօսքերով. այս է մարմին իմ և այս է արիւն իմ, յայտնեց առաքելոց, թէ պէտք է ճանաչել և ընդունել ի փըրկարար մարմին և արիւն, իբրև ճըշմարիտ կերակուր և ճշմարիտ ըմպելի. բստ որում Աստուած կարող է հրամայել և առնել ինչ որ կամենայ. և նորա կարողութեան և զօրութեան առջև անհընարին բան չը կայ ոչ յերկինս և ոչ յերկրի. զամենայն զոր ինչ կամեցաւ՝ և արար Տէր յերկինս և յերկրի, ի ծով և յամենայն խորս [1]։

Աղանդաւորք թէև կը կարդան սուրբ գիրքը. բայց դարձեալ կը յամառին ի-

[1] Սաղմ. ՃԼԴ. 5։

բանց մոլորութեան մէջ. կը գրեն, կը սորվեցնեն, թէ այս է [illegible] և [illegible] է [illegible] խօսքը չեն փոխարկեր նուիրեալ հացը և բաժակը յիսկական մարմին և արիւն Յիսուսի Քրիստոսի. ասելով թէ՝ հացն ու բաժակը նմանութիւն և օրինակ է, հակառակ փրկչի այս խօսքին, [illegible]

[illegible][1]:

Փրկչի յայտնած այս հաղուածն եթէ մերձենայ հաւատացեալը հաղորդութեան սուրբ խորհրդոյն, նորա համար՝ հացն և գինին՝ իսկապէս մարմին և արիւն Տեառն են ըստ հոգւոյն. իսկ որոնք որ այս հոգւով չեն մերձենար, նոցա համար ի դատապարտութիւն է խորհուրդը՝ ըստ Պօղոսի. Ա. Կորն. ԺԱ. 27—29. Բողոքականք՝ առանց հոգւոյ մերձեցողներէն լինելով չեն հաւատար՝ թէ իսկապէս Աստուծոյ Որդւոյն մարմնոյն և արեան կը հաղորդուին, նման այն աշակերտաց, որ փրկչի վերոգրեալ վարդապետութեան հետևորդ յանդիմանութենէն խռովեցան և յետ գնացին, և այլ ևս Յիսուսի հետ չէին շրջէր[2]:

---

[1] Յովհ. Զ. 51—64.
[2] Յովհ. Է. 67.

## ԳԼՈՒԽ Ժ.

Մկրտութեան և Դրոշմի Խորհրդոց որպիսին և զօրաւորական ներգործութիւնը ընդունողին վրայ։

ՔՐԻՍՏՈՆԷԱՅՆ հաւատը կը պահանջէ մկրտութիւն, որ կը սրբէ մարդկանց սկզբնական մեղքէն, կ'որդեգրէ Հօր Աստուծոյ և սուրբ Հոգւոյ շնորհաց ներգործութեամբ կրկին ծնունդ կը պարգևէ մկրտուածին, նոր սիրտ և նոր հոգի նորոգելով նորա մէջ կ'արժանացնէ յաւիտենական կենաց ժառանգութեան։

Այս սրբարար խորհուրդը իբրև փրկութեան մի ամենակարևոր միջոց, Յիսուս Քրիստոս ինքն սահմանեց, թէ բանիւ և թէ օրինակաւ անձին, երեսնամեայ հասակին Յորդանան գետին մէջ

---

[1] Մարկ. Ժ2. 16.

Յովհաննէս Մկրտչէն մկրտուելով սրբեց ջուրը, արաւ մկրտութեան նիւթ և պատուիրեց աշակերտաց մկրտել[1]։ Մկրտութեան նիւթը թէև լոկ ջուր է, բայց մեղքէն սրբողը Աստուծոյ խօսքն է՝ յանուն ամենասուրբ Երրորդութեան, ինչպէս Յիսուս սահմանեց[2]. որ և պատկեր է միանգամայն Յիսուսի Քրիստոսի մահուան և թաղման, որովհետև մկրտեալն ի ջուր, ըստ մեղաց կը մեռնի՝ և հաւատով ի Յիսուս Քրիստոս կը կենդանանայ, և հոգևոր նոր կեանք կը ստանայ[3]։

Մկրտութեան սուրբ խորհուրդը հաւատքէն կախումն ունի, զի երբ մէկը ցանկութիւն կ'յայտնէ մկրտուելու, անմիջապէս հաւատք կը պահանջուի նորա-

---

[1] Մատ. Գ. 13. Մարկ. Ա. 9.
Ղուկ. Գ. 23.
[2] Մատ. ԻԸ. 19.
[3] Կողոս. Բ. 12. Գաղ. Գ. 27.

նից. չափահասները իրանք կը տան իրանց հաւատոյ դաւանութիւնը, իսկ անչափահասների տեղ՝ կնքահայրը. (սկզբում չափահասները խիստ քննութեան կ'ենթարկուէին, կը քննուէր մկրտուողի վարքն ու բարքը, դիտաւորութիւնը, հաւատքը ի Յիսուս Քրիստոս, և ապա թոյլ կը տրուէր նորան մկրտութիւն ընդունել):

Այս սրբարար խորհրդէն յետոյ՝ մըկրտուածին կը տրուի դրոշմի խորհուրդը՝ որով կարժանանայ Հոգւոյն սրբոյ զօրացուցիչ շնորհաց և կը լինի Հօր Աստուծոյ շնորհական որդի և հոգևոր զինուոր Քրիստոսի, որով կը յաղթէ ամեն մոլութեանց և մոլորութեանց, և անարատ կը պահպանէ քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնը. [illegible]

Ինչ պիտոյ՝ Թէ ոք զձեզ ուսուցանիցէ, այլ որպէ-
ս նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն
ամենայնի, և ճշմարիտ է՝ և չէ սուտ, և որ-
պէս ուսոյց զձեզ՝ կացէք ի նմա[1]։

Ուրեմն պիտի հաւատանք, որ մկրտու-
թեամբ կը մաքրուինք սկզբնական մեղաց
աղտեղութենէն, և դրոշմամբ՝ Հոգւոյն
սրբոյ շնորհաց ընդունելութեան կարժա-
նանք. Հօր Աստուծոյ որդեգիր կը լի-
նինք և յաւիտենական փառաց ժառանգ.
Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մերում, Թէ
եմք որդիք Աստուծոյ. Եւ եթէ որդիք՝ ապա
և ժառանգք Աստուծոյ և ժառանգակիցք Քրի-
ստոսի[2], ինչպէս մկրտութեան խոր-
հուրդը սահմանեց Յիսուս, նոյնպէս և
դրոշմի խորհուրդը, զկնի յարութեան
աւանդեց իւր առաքելոց ասելով. Եւ ա-
հա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ ի ձեզ. և

[1] Ա. Յովհ. Բ. 20. 27.
[2] Հռովմ. Ը. 16.

դուք նստջիք ի քաղաքիդ յերուսաղէմ, մինչև զգենուցուք զօրութիւն ի բարձանց [1]։

Այս խորհուրդը առաքելոց ժամանակ կը կատարուէր ձեռք դնելով մկրտուածին գլխոյն վերայ, որով կը տրուէր աներևութաբար սուրբ Հոգին. Ինչ ձևով որ կը պաշտուէր այն ժամանակ, նոյն ձևով և այժմ կը պաշտէ Հայաստանեայց սուրբ եկեղեցին, աղօթքով, օրհնութեամբ, և ձեռնադրութեամբ կ'օծէ սուրբ միւռոնաւ մկրտուածին ճակատը և զգայարանքը ի նշան Հոգւոյն սրբոյ շնորհաց ներգործութեան, և կը կատարէ զկնի մկրտութեան իբրև ամբողջացուցիչ մասն նորա. զի և Յիսուս մկրտուելէն յետոյ անմիջապէս օծուեց սուրբ Հոգւով [2]։

Դրոշմի խորհուրդը թէ ի նորումն և

---

[1] Ղուկ. ԻԴ. 48.
[2] Ղուկ. Գ. 22.

*թէ ի Հնումն՝ կը մատակարարուէր Աս-
տուծոյ հրամանաւ՝ ինչպէս աստուածա-
շունչ սուրբ գիրքը կը վկայէ. մարգարէ-
ները կ՚օծէին օրհնած իւղով քահանա-
ները և թագաւորները՝ և Աստուծոյ Հոգին
օծեալին վերայ կը խաղայր՝ մինչև անգամ
Աստուծոյ սրբութեան նուիրուած գոր-
ծիքները և անօթները կօծուէին. Յակոբ
նահապետ օծեց իր սնարին տակ դրած
քարը՝ և արձան կանգնելով տուն Աստ-
ուծոյ անուանեց [1]. Մովսէս օծեց վկայ-
ութեան խորանը՝ տապանակը՝ սեղանը՝
աշտանակը՝ խնկոց և ողջակիզաց սե-
ղանները՝ աւազանը՝ և սրբութեան
համար պահուած բոլոր գործիքները [2].
Սամուէլ մարգարէն օծեց Դաւթին
իսրայէլի թագաւոր՝ որի վերայ կա-*

---

[1] Ծննդ. ԻԸ. 18.
[2] Ելից. Լ. 22–31. Ղեւտ. Ը. 1–12.
Սաղմ. ԺԸ. 18. ՃԼԲ. 2.

սէ սուրբ գիրքը ՝Հոգին սուրբ իջաւ [1]։ Այսպէս ահա Աստուծոյ հրամանաւ հին օրինաց մէջ ևս գործ կըգրուէր օծութեան սուրբ իւղը՝ կ՚օծուէին աստուածպաշտութեան նուիրուած սպասները՝ և կանուանուէին Սրբութիւն, որոց կարգումն ողջակիզաց սեղանը կանուանուէր Սրբութիւն սրբութեանց [2]. իսկ քահանաները և թագաւորները օծուելով յօծումն սուրբ՝ կանուանէին օծեալ Տեառն։

Բողոքականները ճշմարտութիւնէն շեղուած մկրտութեան սուրբ խորհուրդը իսկապէս չեն ընդունիր իբրև փրկութեան միջոց՝ այլ խորանաց օրինաց՝ թլպատութեան հետ հաւասար կը դասեն՝ մինչդեռ թլպատութիւնը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ հաւատացելոց և անհաւատից մէջ մի որոշող աստուածպաշտու-

[1] Ա· Թագ· ԺԶ· 12·

[2] Ելից· Խ· 9—11·

ութեան նշան, ինչպէս Աբրահամ և իւր որդիքը իբրև աստուածապաշտ և Աստուծոյ ժողովուրդ որոշուեցան անթլփատ ազգերէն և թլպատութիւնը Աստուծոյ ուխտի յատուկ նշան համարուեցաւ Աբրահամի հետ, որ շատ ազգաց Հայր եղաւ, և որից սերուեցան թագաւորներ և քահանաներ [1]։

Սուրբ գրքէն կըստուգուի որ Աստուած Աբրահամին վեց անգամ երևեցաւ, եօթանասուն և հինգ տարեկան հասակէն սկսած մինչև ութսուն և հինգ տարեկան հասակը, և ամէն անգամ զաւակի խոստումն խոստացաւ նորան [2], յայտնելով թէ իրանից եղած զաւակը պիտի լինի իւր ժառանգը, Իսկ երբ Աբրահամը իւր Սարրա կնոջ խորհրդին հետևելով առաւ

[1] Ծննդ· ԺԷ· 2· 10·
[2] Ծննդ· ԺԲ· 1—3· 7 17· ԺԳ· 14· ԺԵ· 1—13·

իւր աղախին Հագարը և ութսուն և վեց տարեկան հասակում ունեցաւ Իսմայէլ զաւակը Հագարէն, այնուհետև Աստուած չը յայտնուեց Աբրահամին մինչև նորա իննսուն և ինն ամեայ հասակը, և ապա յայտնուելով ասաց հետևեալ խօսքերը, Ես եմ Աստուած քո, հաճոյ լեր առաջի իմ և լե՛ր անարատ [1]. այս խօսքով Աստուած յանդիմանեց Աբրահամի ապօրինի զուգաւորութիւնը Հագարի հետ, և իւր ուխտը կրկնելով ասաց թէ՝ Սարրայէն պիտի ծնանի զաւակ՝ Աբրահամու ժառանգը, և թէ պիտի շատացնէ նորա որդիքը, և ժառանգութիւն պիտի տայ նոցա այն երկիրը, և այս ուխտին նշան կը սահմանէ թլփատութիւնը որ Աբրահամու սերնդին կը յիշեցնէր թէ՝ ամուսնական հաւատարմութիւնը ճիշտ պիտի պահուի.

---

[1] Ծննդ. ԺԷ. 1.

Եթէ աղանդաւորք ճշմարիտ խօսիլ կը սիրեն՝ պէտքէ որ թլփատութիւնը մըկրտութեան հետ շփոթելով իբրև խորհուրդ չը քարոզեն՝ մկրտութեան շնորհաց արդիւնքը ուրանալու միտօք. այլ պէտքէ ճանաչեն՝ որ թլփատութիւնը նշան կամ նշանակ ուխտի է. [illegible] [1]:

Սուրբ գրքի այս խօսքերէն պարզ կիմացուի՝ որ մկրտութեան սրբարար խորհուրդը երբեք կապ չունի թլփատութեան հետ, ինչպէս որ կըկարծեն, և իրանց այսպիսի մոլորութեամբ՝ [illegible] Յիսուսի Քրիստոսի այս խօսքին կը հակառակին՝ որ յաւիտենական կենաց արժանի լինելու

[1] Ծննդ. ԺԷ. 11.

*միակ միջոց միմիայն մկրտութեան սուրբ խորհուրդը ցոյց կը տայ. Եթէ ոք ոչ ծնցէ ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ*[1], *զի մկրտութիւնն է դուռըն և հիմն ամենայն սրբարար խորհրդոց, զորս Յիսուս աւանդեց սրբազան առաքելոց կատարել*[2]:

---

[1] Յովհ. Գ. 4.
[2] Մատ. ԻԸ. 19. Ղուկ. ԻԲ. 19.

## ԳԼՈՒԽ ԺԱ.

Աստուծոյ անհուն բարերարութիւնը և մարդոյ ապերախտութիւնը առ Աստուած.

ԱՍՏՈՒԾՈՅ *այս անհուն շնորհաց փոխարէն զոր կը վայելեն մարդիկ՝ ըստ ամենայնի պարտական են ճանաչել նորա մեծութիւնը, և ի սրտէ գոհութիւն մատուցանել նորան իւր անչափ մարդասիրութեան և գթութեան համար. վասն զի Աստուած՝ մեր ստեղծողը և մեր Տէրը լինելով միշտ կը խնամէ և կը գթայ մեր վերայ, իսկ մենք ծառայքս և որդիքս պարտական ենք մեր երկրպագութիւնը. և ծառայութիւնը սիրոյ և երկիւղի մեծաբանօք նուիրել նորան։ Իսկզբան խզած լինելով Աստուծոյ հետ ունեցած մեր ուխտի կապը՝ յանձն Ադամայ մեղանչելով, սկզբնական մեղաց վերայ յաւել-*

ցուցինք և ներգործականը և խսպառ պարտաւոր գտանուեցանք Աստուծոյ առջև։

Արդ՝ ուրիշ ինչ բանով պիտի կարողանան մարդիկ վճարել Աստուծոյ իրանց պարտքը՝ բայց միայն աղօթքի՝ զղջման միջոցաւ՝ և առանձինն՝ արդարութեան. սրբութեան և սիրոյ—ընկերսիրութեան գործերով՝ որ աստուածպաշտութեան ճշմարիտ բարոյական սկզբունքներն են՝ և որ արդիւնք են կատարեալ հաւատքի՝ հաստատուն յուսոյ և ճշմարիտ սիրոյ։ Աստուածպաշտութեան հոգւոյ այս կատարելութիւնը ունեցող քրիստոնեայն միշտ հնազանդ է Աստուծոյ կամաց. և երբէք չի շեղուիր նորա ճանապարհէն։

Ի հնումն աշխարհի սկզբէն՝ նախամարդն Ադամ՝ նահապետք՝ ժամանակ ժամանակ հրահանգուած յԱստուծոյ սկսան ընծայ և զոհ մատուցանել նորան։ Աբել ի հօրէ ուսեալ առաջինն եղաւ՝ որ իւր հօտի ընտիր գառները ընծայեց՝ և

Կայէն իւր աշխատանաց երկրի պտուղները, թէև առաջինը ընդունեց յԱստուծոյ, իսկ վերջինը՝ ըստ անարժանութեանն՝ մերժուեց.

Ապա հետզհետէ այս նուիրաբերութիւնն աւելի հաստատութիւն գտաւ գաղթական ազգաց մէջ. Աստուած տնօրինեց՝ հաց, գինի, երկրի երախայրիք, անասնոց անդրանիկներ մատուցանել իրան. պատուիրեց զոհեր և ցուլեր ողջակիզել, որ մի տեսակ խոստովանութիւն էր, թէ մարդիկ՝ ինչ բարիք որ կըվայելեն, այն ամենն եւս Աստուծոյ անհուն ողորմութեան և ամենախնամ տեսչութեան տուրքն էին.

Իսկ քաւութեան ողջակէզը՝ որ տարին մի անգամ՝ միայն կը մատուցուէր[1], և քահանայապետը նախ իւր մեղաց հա-

---

[1] Ղևտ. ԺԶ. 5—29.

մար կը մատուցանէր ողջակէզ, և ապա ժողովրդեան մեղաց համար երկու նոխազ կը մատուցուէր, և վիճակաւ կընտրուէր մին՝ Աստուծոյ, և միւսն արձակելոյն, որ ժողովրդեան մեղքը առած կերթար ան-կոխ ամայի անապատները, և նոցա մեղքն իրան հետ կը տանէր. այս քաւու-թեան ողջակէզն, որ և [illegible] կոչուեր, օրինակ էր այն մեծ ողջակիզին, զոր ճշմարիտ Քահանայապետը ըստ կարգին Մելքիսեդէկի՝ Քրիստոս, մատոյց Աս-տուծոյ պատարագ ընդունելի՝ իւր արիւն հեղլով փոխանակ բազմաց, և զոր ըն-դունեց Աստուած ի քաւութիւն մարդ-կան, և հաշտեցաւ մարդկանց որդւոց հետ։

Այս մեծ զոհը Յիսուս Քրիստոս ինքն է, որ միշտ կընծայենք Հօր Աստուծոյ, իբրև միջնորդ հաշտութեան և փրկութեան։ Այս մեծ խորհուրդը՝ ինչպէս ուրիշ ան-գամ ասած եմ՝ Յիսուս ինքն կարգադրեց

վերջին ընթրեաց երեկոյին, իւր մարմինը և արիւնը ի հաց և ի գինի օրինակելով բաշխեց առաքելոց և պատուիրեց կատարել ի յիշատակ իւր խաչին վերայ պատարագելոյն, և նոցա յաջորդաց. որ միշտ կըմատուցուի Աստուծոյ սեղանի վերայ քահանայագործութեամբ. զի նոյն ինքն Յիսուս է՝ որ կըմատուցանէ և կը մատչի Հօր Աստուծոյ, և նախ ինքն քահանայագործեց հացը և գինին, և նոյնը աւանդեց իւր առաքելոց և յաջորդաց նոցին պաշտել։

Սրբազան առաքեալները Յիսուսի Քրիստոսի օրինակին նման, հիմնուած սուրբ գրքի վարդապետութեան վերայ, սկսան կատարել այս սուրբ խորհուրդը, և աւանդել եկեղեցեաց, որ այնքան սուրբ և ակնածելի էր, մինչև ժամանակի հերետիկոսները, որ մեծ թշնամութիւն ունէին Քրիստոսի եկեղեցւոյ դէմ. մեծամեծ հալածանքներ յարուցանելով, յարգու-

թեամբ կըմերաբերուէին ի Սա։

Արդ՝ ի Քրիստոսէ հաստատուած և առաքեալներէն մինչև այսօր կատարուած այս սուրբ խորհուրդը և օրինակները, բողոքականք ի մի բան կուրանան և մինչև իսկ կռապաշտութիւն կոչելու չեն խղճար, ասելով թէ՝ Յիսուս մի անգամ կատարեց իւր փրկագործութեան խորհուրդը, ուստի ուրիշ զոհերի մատուցման կարօտութիւն չըկայ։

Մինչդեռ Աստուած արգելած չէ և Յիսուս կըկամենայ, որ մարդիկ մկրտութեամբ կրկին ի նոր կեանս ծնանին, կըկամենայ մեղաց թողութիւն տալ ի սրտէ զղջացողներուն և չարիք գործելէն հրաժարողներուն, կըկամենայ իրեն հետևիլ բոլոր ուժով, և միանալ իրան հետ, ի վերջոյ Յիսուս կըկամենայ իւր արքայութիւնը տալ, զի եթէ աստուածահաճոյ գործերով փոյթ կունենանք նոյնը ժառանգելու։ Զի թէև Յիսուս Քրիստոս

իւր մարմինը և արիւնը շնորհեց մեզ ի
փրկութիւն, բայց և այնպէս կըկամենայ,
որ աղօթքի, չարչարանաց և պատարագի
ողորմութեան միջոցներով իրան արժա-
նաւոր հատուցումն առնելով՝ արժանա-
նանք իւր շնորհացը։ Ուստի ոչ թէ կ'ա-
նիրաւի մարդ ըստ բողոքականաց, այլ
կըպատուէ զԱստուած, իմանալով որ ա-
ռանց արդեանց բարի գործոց կարող չէ
ընաւ արժանանալ Փրկչի շնորհաց։

Բողոքականք նենգութեամբ արհամար-
հելով պատարագի սուրբ խորհուրդը՝ ընդ-
նմին և մեր բոլոր ջանքը և բարի գործ-
քերը, կը կարծեն թէ իրանք երբէք ոչ
մի պարտականութիւն չունին կատարելու,
և անհոգ, անփոյթ իրանց փրկութեան
վերայ, կըվստահին միմիայն Յիսուսի
արդեանցը, մինչ սուրբ աւետարանը
յորդոր կը կարդայ, որ ամեն մարդ պար-
տաւոր է իւր անձի դէմ պատերազմել,
յաղթել տեսակ տեսակ մոլութեանց,

*և ի գործ դնել ամեն բարի գործ և առաքինութիւն։*

---

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Եկեղեցւոյ կարգադրութիւնը, աւանդութիւնը, և արարողութիւնը, և աղանդաւորաց մոլորութիւնը։

**Բ**ՈՂՈՔԱԿԱՆՔ *կըմերժեն Յիսուսի Քրիստոսի հաստատած հաւատոյ ճշմարտութիւնները, կարգադրութիւնները, առաքելական աւանդութիւնները, ծէսերը և արարողութիւնները. որպէս զի եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութեան խանգարումն պատճառելով՝ ժողովուրդը մոլորութեանց մէջ ձգեն։ Աւանդութիւն ասելով թող չիմանան ծերոց աւանդութիւնները, որոնք աստուածային աւանդութեանց նկատմամբ ոչինչ են, ինչպէս կըտեսնուի Յիսուսի առ Հրէայս ասած*

*այս խօսքերէն. «Անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդութեամբն»[1]. Եկեղեցւոյ աւանդութիւնները, ընաւ կապ չունին ծերոց աւանդութեանց հետ, և իսպառ կըտարբերին, որովհետև Հին և Նոր օրինաց եկեղեցւոյ պաշտօնէից ձեռօք Աստուած աւանդեց եկեղեցւոյն իւր խօսքերը և հրամանները՝ թէ գրով և թէ բանիւ, որոնք միայն իսկզբան ի գրի չ'առնուեցան. նահապետները, մարգարէները աւանդեցին միմեանց և պահուեցան հին եկեղեցւոյ մէջ. «Հարցջի՛ր զհայր քո՝ և պատմեսցեն քեզ, ծերոց քո՝ և ասասցեն քեզ»[2], և այսպէս Աստուծոյ հրամանները աւանդութեամբ ունէին. Մովսէս Յակոբ Նահապետի կենդանութեան ժամանակ ծընածներէն և տեսնողներէն լսելով աւան-*

[1] Մատ. ԺԵ. 23. Մրկ. Է. 13.
[2] Բ. Օր. ԼԲ. 7.

դապահ եղաւ Աստուծոյ Հրամանաց. Յակոբ Աբրահամի, Աբրահամ՝ Նոյի մետասներորդը ի Սեմայ, որին ժամանակակից էր. Սեմ Մաթուսաղայէն, Մաթուսաղան Ադամէն, և այսպէս իւրաքանչիւրը իւր յետագային աւանդեց աստուածպաշտութեան օրէնքը, աշխարհիս ստեղծագործութիւնը, զոհագործութիւնը, բարեպաշտական արարողութիւնները, և ժամանակի պատմական նիւթերը-ջրհեղեղը, աշտարակաշինութիւնը, Աբրահամի կոչումը, Յակոբայ յԵգիպտոս պանդխտելը, Իսրայէլացւոց յԵգիպտոսէ ելքը, և այլն. զոր Մովսէս սուրբ Հոգւոյ ազդմամբ գրեց աստուածաշունչ մատենին մէջ.

Նոյնպէս և Քրիստոսի եկեղեցին աստուածային գրաւոր և անգիր աւանդութիւնները առաքեալներէն և աւետարանիչներէն առնելով ամենայն Հաւատարմութեամբ կըպահպանէ իւր մէջ, որի Համար առաքեալները մեծ փոյթ ունէին,

որ եկեղեցին առաքելական աւանդութեանց վերայ հաստատիմ մնայ առանց շեղուելու հաստատ ճշմարտութենէն. [illegible] [1]։ Պօղոս Կորնթացւոց եկեղեցւոյն որ հաստատիմ էր առաքելական աւանդութեանց պահպանութեան մէջ՝ այս գովասանութիւնը կը տայ՝ [illegible] [2]։

Քրիստոսի եկեղեցւոյ հակառակորդք ցոյց կը տան առ երեսս թէ՝ կը յարգեն Աստուծոյ խօսքը՝ բայց այդ յարգութիւնը մի արտաքին ցոյց է. որովհետեւ Աստուծոյ խօսքը այնքան կրճատած և աղաւաղած են թիւր մեկնութեամբ՝ որ

---

[1] Գործ. ԲՁ. 4.

[2] Ա. Կորն. ԺԱ. 2

մարդ կը սոսկայ, երբ կը տեսնէ.

Աստուծոյ խօսքը ընդունեցին առաքեալները և աւետարանիչները Յիսուսէն. ինչ որ լսեցին և տեղեկացան, և նոյնը անփոփոխ աւանդեցին եկեղեցւոյն՝ գրով և բանիւ. վասն զի՝ թէ գրելու և թէ քարոզելու ժամանակ Հոգին սուրբ կը յիշեցնէր նոցա և կ'առաջնորդէր, որոնք նախ քան ի գրի առնուլ, կենդանի ձայնիւ հաւատքը սորվեցնելով մարդկային սրտի մէջ Աստուծոյ խօսքերը տպաւորեցին, և այս Աստուծոյ խօսքերն են՝ որ իբրև աւանդութիւն կը պահպանէ եկեղեցին հաւատարմութեամբ, և յարգութիւն կընծայէ միշտ.

Աւանդութիւնը առանձնապէս ունի այն մեծ առաւելութիւնը, որ սուրբ գրոց միտքը լաւ ըմբռնելուն կ'օգնէ, դժուարիմաց տեղերը կը լուսաբանէ, ուստի եկեղեցին անհրաժեշտ կը համարէ սրբութեամբ պահպանել իր մէջ. ինչպէս և

Պօղոս իւր Տիմոթէոս աշակերտին կը-պատուիրէր, որ աւանդութիւնը պահպա-նելուն մէջ զգուշ ըլլայ. [illegible][1].

Աղանդաւորք հաւատոյ հիմը սուրբ գիրքը ճանաչելով, նորա մէջ բովանդա-կածը խնկապէս Աստուծոյ խօսքն է կ՚ա-սեն, զի եթէ իրանց քարոզութեանց հի-մը սուրբ գիրքը կը համարեն, ուրեմն կը-պարտաւորին ընդունել և աւանդութիւ-նը. զոր արդարև կընդունեն՝ միայն երբ իրանց շահաւոր է. իսկ երբ կ՚ապացու-

[1] Բ. Տիմ. Ա. 13. Բ. 2.

ցուի իրանց մոլորութիւնը՝ կը հարկադրուին մերժել Դիոտրեփէս աղանդաւորի նման, որ սուրբ գրոց վարդապետութեան և եկեղեցւոյ աւանդութեան հակառակելով կը վիճէր առաքելոց հետ, և իւր մոլար աղանդին դարձնելու կ'աշխատէր հաւատացեալները. այսպէս և աղանդաւորք կը կամակորին և չեն խոստովանիլ, թէ յիրաւի առաքեալները առնելով Յիսուսէն յանձնեցին իրանց յաջորդաց և սոքա յետագայից և կը պահուի անփոփոխ և անսխալ, իբրև ժառանգական աւանդ Քրիստոսի սուրբ եկեղեցւոյ մէջ։

Մի անգամ՝ Յիսուս յանդիմանեց փարիսեցւոց, որ իրանց աւանդութիւնները կը պահեն, իսկ Աստուծոյ օրէնքները զանց կ'առնեն, բայց Յիսուսի խօսքը առաքելական աւանդութեանց համար չէր, այլ այն տգեղ սովորութեանց՝ որ ժողովուրդը աւելորդապաշտութեամբ կը կա-

տարէր Աստուծոյ օրինաց դէմ։ Ուստի Յիսուս դատապարտեց ժողովրդոց մէջ մուտ գործած զեղծմունքը, և ոչ թէ ժողովրդոց համար տրուած Աստուծոյ օրէնքը. ըստ որում առաքելական աւանդութիւնները այն ամէն ճշմարտութիւններն են, որոնք ամենայն ճշմարտութեամբ աւանդուած և ճանաչուած են սուրբ Հայրերէն և եկեղեցւոյ վարդապետներէն։

Իսկ նորա, որոնք հակառակ են Աստուծոյ խօսքին՝ կը մերժենք իսպառ. զի Աստուծոյ խօսքը սուրբ գրքէն իւր վաւերացումն ունենալով, կարող չէ հակառակել ուղիղ վարդապետութեան, և եկեղեցին աւանդութիւնը անխախտ կընդունի։ Որեմն աղանդաւորք աւանդութիւնը չընդունելով մերժած կը գտնուին և Աստուծոյ խօսքը, և չեն կարող լինել ճշմարիտ եկեղեցի Քրիստոսի։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

### Պահեցողութեան հետ աղօթք ընելն է.

ՅԻՍՈՒՍ *իւր մարդեղութեան ժամանակ անձամբ խրատուեց, որ պատերազմելով ամեն տիրող մոլութեանց դէմ, մեռցնենք մեր մէջ մեղաց աղբիւրները —հպարտութիւնը, ագահութիւնը, մարմնական ցանկութիւնները, և այն ամեն չարիքը, որոնք Աստուծոյ և մեր մէջ անջատում կը յօրինեն։ Մոլութեանց յաղթելու համար հարկաւոր է սրտի քաջութիւն. սուրբ աւետարանը կը խրատէ, որ մեր կամքը, մեր մոլութիւնները, մեր սրտի չար յօժարութիւնները, խապառ ի բաց դնենք, այն է՝ դիմադրենք մարմնական ցանկութեանց և մոլութեանց, և միանգամայն մահացնենք մեր*

մէջ մոլեկան սովորութիւնները։

Այս մասը Յիսուս Քրիստոս առանձնապէս աղօթք և ծոմ սահմանեց, որ չարը հեռացնելու միակ միջոցն է. Այս ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք [1]։ Նաև յայտնեց թէ՝ երբ փեսայն մեզանից կը հեռանայ՝ այն է երբ ինքը երկինք կը համբառնայ, պէտք է որ պահենք [2]։

Պահեցողութեան հեղինակը ի սկզբան ինքն Յիսուս Քրիստոս եղաւ, և եկեղեցին ընդունեց առաքեալներէն, որոնք շաբաթը երկու անգամ ծոմապահք սահմանեցին, չորեքշաբթիի պահքը՝ Քրիստոսի մատնութեան յիշատակին նուիրելով, իսկ ուրբաթինը՝ նորա չարչարանաց և մահուան, և քրիստոնեայք՝ այս պահքե-

[1] Մարկ. Թ. 28.
[2] Մատ. Թ. 15.

րէն զատ քառասուն օր պահք կը պահեն զատկէն առաջ՝ Քրիստոսի քառասնօրեայ պահեցողութեան օրինակը աչքի առաջ ունենալով[1]։

Ի սկզբան ընդունուած էր ծոմ և անսուաղ մնալը՝ օրը մի անգամ ուտելով՝ մինչև անգամ ընդեղինք և բանջարեղինք կը շատանային. և ողորմութիւն կը տային աղքատաց իրանց կարողութեան չափ. պահեցողութեան օրէնքը հասարակաց էր ամենուն համար. հիւանդները ևս ազատ չէին պահք պահելէն. ինչպէս կը գրէ Պօղոս առաքեալ. «Ի հաստատել շնորհօքն՝ և որ հիւանդն է բանջար կերիցէ[2]»։

Եւ որպէս զի ի ցոյց մարդկան և ի պարծանս անձանց պահած չերևնան. ինչ-

---

[1] Մատ. Դ. 2.

[2] Հռովմ. ԺԴ. 2. Գործ. ԺԴ. 22. ԻԷ—9. Բ. Կորն. Զ. 5. ԺԱ. 27.

պէս փարիսեցիք կը կեղծաւորէին՝ չէ ե-րեւեսցին մարդկան թէ պահողքն [1], այլ ուրախութեամբ կատարած լինին աստուածադիր օրէնքը և թէ փոքր բանով շատ բան արած կը համարուին Աստուծոյ առջև․ այս զգուշութիւնը արաւ Յիսուս՝ չէ թէ երեւեսցես մարդկան իբրեւ պահօղ՝ այլ Հօր քում է ծածուկ, եւ Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս [2]։

Յիսուս բնաւ պահելու պէտք չունէր՝ միանգամայն ազատ լինելով վտանգներէ և փորձութիւններէ՝ բայց և այնպէս առանձնացաւ յանապատ, ուր և քառասուն օր և քառասուն գիշեր ծոմապահութեամբ ինքն իրան օրինակ տուաւ մեզ՝ և այս հիման վերայ սուրբ եկեղեցին օրինադրեց պահքը՝ որպէս զի և քրիստոնեայք հնազանդելով աստուածա-

[1] Մատ. Զ. 16.
[2] Մատ. Զ. 18.

յին օրինաց և պատուիրանապահութեանց. Յիսուսի Քրիստոսի օրինակը ունենան յանձինս, ճնշեն իրանց մարմինը, մինչև որ մարմնական ամեն մոլութիւնք ճընշուին և անհետանան.

Ծոմապահութիւնը կամաւորապէս պահել սահմանուած էր, որը երբ հետզհետէ թուլացաւ և մարմնական ցանկութեանց հետևանքները սաստկացան, նախնի սուրբ հարք չպահող ժողովրդեան համար այժմու պահքը սահմանեցին, որ մարդու ողջախոհ բնութեան յարմար է և կազդուրիչ, և արգելեցին այն կերակուրները, որ գրգռիչ են մարմնոյ ցանկութեանց. Նախնիք այս սահմանադրութիւնները առին աստուածաշունչ սուրբ գրոց պատգամներէն. [illegible]

[illegible] [1]

*Բողոքականք որ աւետարանի ամեն մի խօսքը սուրբ կը համարեն և ծոմապահութեան փոխանակ թոյլատրուած կերակրոց խտիրն կը մերժեն, պէտք էր որ անշուշտ ծոմ պահէին ըստ օրինակի փրկչին. Բայց նոքա կը յենուին Յիսուսի այս խօսքին վրայ թէ՝* [illegible] [2]

*Ով չը գիտէր, որ այս արդարև Յիսուսի խօսքն է, բայց այս խօսքն պահեցողութիւնը չ'արգելէր. Փարիսեցիք ըստ ծերոց աւանդութեան, թէ կերակուրը ուտելէն առաջ՝ և թէ յետոյ, ձեռքերնին լուանալու սովորութիւն ունէին, իսկ Յիսուսի աշակերտները այս անօգուտ աւանդութեան հակառակ կընթանային.*

---

[1] Ծննդ. Ա. 28. 29.

[2] Մատ. ԺԹ. 11.

ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն, զի ոչ լուանան զձեռս, յորժամ զհաց ուտեն [1]. վասն զի Հրէայք այս աւանդութիւնը այնպէս կըմբռնէին, թէ արգելուած կերակուրներ ուտելը, Հոգին կ՚աղտեղէ, բայց Յիսուս նոցա այս տկար տեսութիւնը մտքերէն հանելու համար ասաց՝ կերակուրը նիւթապէս Հոգին չ՚աղտեղեր, այլ սրտի չար յօժարութիւնները և կամքը, որ հանապազ կ՚ապստամբուի և չի հնազանդիր եկեղեցւոյ օրինադրութեանց։

Ինչ միօք որ Յիսուսի խօսքը կը գործածեն պահոց օրէնքը մերժելու դիտմամբ, կարծես թէ նոյն միօք կը վարուին և Պօղոս առաքելոյն այս խօսքին հետ, որ ուտէն զայն՝ որ ոչն ուտէն, մի արհամարհեսցէ, և որ ոչն ուտէ զայն՝, որ ուտէն՝ մի դատեսցէ, քանզի զնա Աստուած ընկալաւ [2]։

[1] Մատ. ԺԵ. 2։

[2] Հռովմ. ԺԴ. 3։

Այս խօսքերով սրբազան առաքեալ՝ ոչ թէ պահեցողութեան օրէնքը լուծել կը հրամայէր՝ որ պահեցողութեան դէմ մեղանչողներուն համար կը գրէր. [illegible] [1], կամ թէ՛ [illegible] [2]. այլ խտրական օրինաց երեսէն նորադարձ քրիստոնեայ հրէից և հեթանոսաց մէջ ծագած ընդունայն վէճը դադարեցնելու համար. որովհետև հրէայք քրիստոնէութեան հետ խտրական օրէնքը պահելով (կարգէլուէր ամեն մորթուածը և չորոշուածը չուտել) կը մեղադրէին հեթանոսութենէ դարձածներուն, որոնք

---

[1] Փիլիպ. Գ. 18.
[2] Եբր. ԺԳ. 9.

խտրական օրինաց հակառակ կուռէին ամենայն ինչ անխտիր։

Տամբ և պահքը երրէք Յիսուս չը դատապարտէր ըստ կարծեաց աղանդաւորաց՝ այլ ինքն ևս կը պահէր՝ նոյնպէս և Յովհաննէս Մկրտիչ և սրբազան առաքեալք կը պահէին՝ որոնք ի Յիսուսէ գիտէին թէ արգելուած չէ. ուստի սուրբ եկեղեցին իբրև աստուածադիր օրէնք սուրբ գրքը հիմն ունենալով կընդունի և կը պահէ ամենայն սրբութեամբ[1]։ Եւ որոնք կը հակառակին աստուածահաճոյ առաքինութեանց՝ բացէ ի բաց կը մերժէ իբրև աստուածային օրինաց քակտիչներ[2]։

---

[1] Մտթ. Զ. 16. Զ. 8. 9. Յովն. Գ. 5. Դանիէլ. Ա. 16—20. Մատ. Դ. 2. ԺԱ. 18. Դ. 4. ԺԷ. 21. Ղուկ. Բ. 36.

[2] Մտթ. Զ. 5. Մատ. ԻԴ. 38. Ելից. ԼԲ. 6. Ա. Կորն. Ժ. 7. Եբր. ԺԲ. 16. Հռովմ. ԺԳ. 13. Փիլիպ. Գ. 18. 19.

Աղանդաւորք խօսակցութեան սկիզբը աւետարանի բարոյականը կը դնեն, թէ Յիսուս Քրիստոս կը պատուիրէ եղբայրասէր լինել, չարիք չը գործել, չը հայհոյել, չը դրկել, հոգով և ճշմարտութեամբ երկրպագութիւն մատուցանել Աստուծոյ, իսկ երբ կ'որսան մարդկանց, յետ այնորիկ իրանց մոլորութիւնը հրապարակ կը հանեն, այն հին հերետիկոսաց նման, որոնք տեսակ տեսակ խաբէութիւն գործ կը դնէին իրանց նպատակին հասնելու համար, ինչպէս էին բուն Որոգինէսի, Առաքելականները, Մարկիոնականները, Վաղենտինեանները և միւս հերետիկոսները, որոնք կ'աշխատէին խոնարհութեան, սիրոյ և սրբութեան անուններն պատրուակ առած իրանց մոլորութիւնը տարածել։

Միթէ՞ սուրբ եկեղեցին նոյնը չի՞ սորվեցներ մեզ. և եկեղեցւոյ պաշտօնեայք նոյնը չե՞ն քարոզեր, թէ սուտին և թէ

եկեղեցւոյ մէջ, և նոյն Յիսուսի աւետարանը չունին իրանց առաջնորդ, միթէ չե՞ն քարոզեր՝ թէ Յիսուս աշխարհ գալով փրկեց մեզ, իւր անձը հեզութեան և սիրոյ օրինակ տուաւ, և պատուիրեց չարիք գործելէն զգուշանալ. ո՞վ չը գիտեր, որ սուրբ գրոց վարդապետութիւնը ուղղուած է առ հասարակ մարդկային երջանկութեան և փրկութեան, և քրիստոնէական կրօնը կուսուցանէ թէ՝ Աստուծոյ սէրը մեր սրտին մէջ կը գտնուի, երբ իրարու կը սիրենք. երբ հայրը որդուն, որդին հօրը, եղբայրը եղբօր, ազգականը ազգականին և ամեն մի անհատ՝ իւր եկեղեցուն և ազգին ցոյց կըտայ իւր սէրը և կարեկցութիւնը. չի թշնամաներ, չի ատեր իւր մերձաւորին, և չարիք առնելէն կը զգուշանայ, որ աստուածային սիրոյ դէմ՝ մեղանչած չը լինի. ահա՛ այս է աւետարանի վարդապետութեան ոգին, որ զմարդիկ իրարու

հետ փոխադարձ սիրով կապելով առ Աստուած կը տանի. մինչև անգամ Յիսուս կը խրատէ թշնամիները սիրել և չարի փոխարէն չար չըհատուցանել։

Ուրեմն պէտք չէ հետևել օտարաձայն վարդապետութեանց և ճշմարտութենէն հեռանալով մեղանչել եկեղեցւոյ դէմ, այլ սիրել նորան և անբաժան մնալ միշտ. հաւատալ նորա քարոզած հաւատոյ ճըշմարտութեանց, պահել առաքելական աւանդութիւնները, խորհրդաւոր ծէսերը և արարողութիւնները, և արդարև այն ժամանակ մարդ կը զգայ իւր սխալը, երբ զինքը աստուածային օրինաց ճանապարհէն հեռացած կը գտնի, և իւր խղճի արդար ձայնի առաջ խոնարհելով կը դատապարտէ իւր ընթացքը։

Աղանդաւորք կը քարոզեն թէ առ Աստուած հաւատքը՝ փրկուելու համար բաւական է, և թէ ուրիշ բան պէտք չէ. մինչդեռ սուրբ գիրքը բացայայտ կը-

մարդասպանութե· թէ հաւատքին հետ ան-
շուշտ հարկաւոր է նաև յոյս և սէր, եթէ
ունիցիմ զամենայն հաւատս, մինչև զլերին-
սփոփոխելոյ՝ և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ [1]:
Հաւատքը ինքն ըստ ինքեան բաւական
չը լինելէն զատ· կը պահանջուի նաև
բարի գործքեր· որ կախուած է աստուա-
ծային պատուիրանաց պահպանութենէն,
որ ասէ եթէ ճանաչեմ զնա· և զպատուիրա-
նս նորա ոչ պահէ, սուտ է և ճշմարտու-
թիւն ի նմա ոչ գոյ [2]· վասն զի ամեն մինը
իւր գործոց համար պատիժ և վարձ
պէտք է ստանայ Աստուծոյ ատենին առ-
ջև· քանզի ամենեցուն մեզ յայտնել լինել
կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի
իւրաքանչիւր իւրով մարմնովն, զոր ինչ գոր-
ծեաց, եթէ բարի և եթէ չար [3]· զի եթէ

[1] Ա· Կորն· ԺԳ· 2·
[2] Ա· Յովհ· Բ· 4·
[3] Բ· Կորն· Ե· 10·

հաւատքը միմիայն բաւական լինէր փըրկութեան համար առանց բարի գործոց, մարդիկ հաւատոյ յուսով առաքինութեանց գործադրութեան կարեւորութիւն չըտալով, արձակ համարձակ իրանց անձն ամեն տեսակ մոլութեանց կըտային, և Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւնը ընդունայն կըհամարուէր. զի եթէ հաւատքը ինքնին բաւական լինէր, որի համար Յակոբոս առաքեալ՝ սատանան ևս կըհաւատայ կասէ Աստուծոյ, Դու հաւատաս՝ զի մի է Աստուած, բարւոք առնես, և դևք հաւատան և դողան [1], անօգուտ պիտի համարուէին ամեն առաքինութիւնք և բարեգործութիւնք մարդկանց, որոնք յանուն Աստուծոյ ամենայն ինչ զոհեցին. բայց ով կարող է հաւատալ և ասել թէ սատանան ևս փրկելու տեղ ունի.

---

[1] Յակ. Բ. 19.

Հաւատք ասելով պէտք չիմանանք միայն այն՝ որ մարդ յԱստուած և ի Յիսուս Քրիստոս ունի, այլ այն՝ որ կը հաւատայ աստուածային յայտնութեանց, այն ամեն բաներուն, զորս Աստուած իր իմաստուն տնօրէնութեամբ հաստատել է, և սուրբ եկեղեցին կը մատակարարէ հաւատացելոց՝ իբրև փրկութեան հաւատալիք, որոնք բովանդակուած են աստուածաշունչ սուրբ գրոց մէջ. զի եթէ հաւատոյ լուսով առաջնորդուած չը հետևինք աստուածային ճշմարտութեանց, չը ճանաչենք նորա մեծութիւնը, բարութիւնը և փրկարար խորհուրդները. չըկատարենք նորա հրամանները. կարող չենք յայտնել մեր ճշմարիտ աստուածսիրութիւնը և բարեպաշտութիւնը, յայսմ գիտեմք եթէ ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք [1]:

[1] Ա. Յովհ. Բ. 3.

Հաւատոյ ճշմարտութեան ապացոյցը և հաւատարիմ վկայն՝ մեր բարեպաշտական և առաքինական գործքերն են. գործքէ զուրկ հաւատքը ընդունայն է, և կարող չէ կատարեալ հաւատք ասուիլ. Զի՞նչ օգուտ է եղբարք իմ, եթէ ասիցէ ոք հաւատս ունել և գործս ոչ ունիցի, միթէ կարիցէ հաւատքն ապրեցուցանել զնա [1]:

Աղանդաւորք աստուածային յայտնութեանց հաւատ չեն ընծայեր, այլ կընտրեն և կընդունեն այն՝ ինչ որ կը կամենան, և կը մերժեն այն՝ ինչ որ իրանց մոլորութեան ձեռնտու և օգտակար չեն գտներ. եկեղեցւոյ խորհուրդներէն երկուքը միայն կընդունին և այն երկրայութեամբ. ուստի զրկուած են հաւատոյ ճշմարտութենէն:

Աստուծոյ սէրը կը քարոզեն. բայց

---

[1] Յակ. Բ. 14.

աստուածսիրութեան գործերը և եկեղեցւոյ սուրբ խորհուրդները կարհամարհեն, կը քարոզեն թէ Աստուած ամեն տեղ է, բայց կ՚անգիտանան, որ նոյն Աստուածն էր, որ հրամայեց Դաւթին Երուսաղէմի մէջ հոյակապ տաճար շինել, ուր հեռաւոր տեղերէ կը ժողովէին աղօթելու և զԱստուած փառաւորելու, և Յիսուս ինքն շատ անգամ տաճարի մէջ կը գտնուէր, կը քարոզէր և աստուածային տան վրէժխնդրութեամբ լըցուած, Աստուծոյ տաճարի անարգողները կ՚արտաքսէր ասելով, տուն իմ տուն աղօթից կոչեսցի, ահա այս աստուածային տաճարի մէջ կը մատակարարուի եկեղեցւոյ սուրբ խորհուրդները և կը քարոզուի Աստուծոյ խօսքը, Չե՞ն գիտեր որ Աստուծոյ տան մէջ ի մի խմբուելով կը ներկայացնեն այն միութեան պատկերը, զոր մի օր երկնաւոր Հօր Երուսաղէմի մէջ պիտի վայելեն:

Եւ այսպէս Հաւատոյ ամեն գործքերը գատապարտելէն զկնի՝ կ՚աշխատին այլ և այլ խօսքերով մեռցնել Հաւատացելոց սրտի մէջ՝ երջանկացնող աստուածսիրութեան բաղձանքը՝ որ միայն կը տեսնուի առաքինութեան և ճշմարիտ կրօնի առաջնորդութեան մէջ։ Կը խրատեն չհայհոյել՝ անարգ խօսք չհանել բերնէն՝ սակայն ընդ հակառակը եկեղեցւոյ ամեն սրբութիւնք և արարողութիւնք կանարգեն՝ մինչև սրբոց բարեխօսութիւնը ուրանչ կը համարեն՝ 1170 թուի Վալդեան աղանդաւորաց նման՝ որոնք թէև սուրբ գիրքը քրիստոնէական հաւատոյ աղբիւր կը քարոզէին՝ բայց կը մերժէին սուրբ խորհուրդները՝ արարողութիւնները և սրբոց յարգութիւնը։

Յիսուս Քրիստոս -ի-ն և ճշմարտութեան Ն-ա-ո-դ-ո-դ-ո-Բ-ի-ն անուանեց եկեղեցին՝ այս հաւատոյ ճշմարտութեան շահմարանը. որովհետև ի-

րաքանչիւր որ ինչպէս իւր փրկութիւնը կը գտնէ նորա մէջ. նոյնպէս և իւր կորուստը եկեղեցուց դուրս կը տեսնէ ըստ աստուածարանից, «արտաքոյ եկեղեցւոյ չիք փրկութիւն», սուրբ եկեղեցին իրան ուսուցիչ և առաջնորդ ունենալով սուրբ Հոգին՝ անսխալ է, թէ՝ հեղինակութեան և թէ՝ կանոնադրութեան մէջ ի Յիսուս Քրիստոս.

Աղանդաւորք ինչպէս ասացի, մերժելով եկեղեցւոյ ուղիղ վարդապետութիւնը, կը կամենան, որ իւրաքանչիւրոք ինքն կարդայ սուրբ գիրքը. քննէ և գտնէ նորա մէջ ծանուցեալ ճշմարտութիւնները, մինչդեռ ընթերցողի հասկացողութենէն շատ բարձր լինելով սուրբ գրոց մթին իմաստները, անհնարին է թէ՝ ինքնին կարողանայ ճշմարտութեանց հասու լինել. զի եթէ ամեն անհատ հաւատացեալ՝ ինքնին առաջնորդուելու կարող լինէր սուրբ գրոց իմաստներն հասկանալ, Հոգին չէր ուղար-

կէր զՓիլիպպոս, որ երթայ ներքինւոյն կառքը մտնէ և առաջնորդէ նորան մարգարէի գրուածքը հասկանալու [1]։ Ահա այսպէս իւրաքանչիւրի մտքի դատաստանին յանձնելով սուրբ գիրքը զանազան հերձուածողութեան պատճառ կը լինին և զմարդիկ անհաւատութեան անդունդը կը գլորեն։

Եկեղեցին անուանարկելով իրենց հետևողներու թիւը կրկնապատկել կը կարծեն, իրանց վարդապետութիւնը յենլով Յիսուսի այս խօսքին վրայ, Այլ դու յորժամ կայցես յաղօթս մուտ ի սենեակ քո, և փակեա զդուրս քո, և կաց յաղօթս առ Հայր քո ի ծածուկ, և Հայրն քո՝ որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս [2]։ Յիսուս՝ իւր այս աստուածային խօսքե-

---

[1] Գործ. Ը. 29—35

[2] Մատթ. Զ. 6.

բով ոչ թէ կ'արգելէր եկեղեցի երթալ՝ աղօթել՝ այլ կամեցաւ յանդիմանել փարիսեցւոց կեղծաւորութիւնը, որոնք փողոցների գլուխը և հրապարակների անկիւնները կեցած կ'աղօթէին ի ցոյց մարդկան։

Յիսուս՝ նոցա այս սնապարծութիւնը կ'արհամարհէ, և ոչ թէ աստուածային տաճարներու մէջ ի միասին աղօթելու բարեպաշտութիւնը։ Նաև մի այլ խօսքով ակնարկեց սամարացու վերայ, որ իւր տկար համոզմամբ՝ կը համարէր թէ այս կամ՝ այն ծանօթ լեռան վերայ աղօթել հարկաւոր է, որպէս զի աղօթքը հաճելի լինի Աստուծոյ, իսկ ի ներքս կ'արհամարհէր հրէից տաճարի մէջ աղօթելը․ առ այս Յիսուս ասաց թէ՝ ժամանակը մօտեցած է, որ ամէն տեղ աղօթք լինի, բայց և ոչ մի ակնարկ ձըգեց՝ ոչ լեռան և ոչ իսկ Երուսաղէմի վերայ, այլ թէ ամէն տեղ ի սփիւռս աշ-

խարհի հաւատացեալք պիտի աղօթեն տներու և տաճարներու մէջ, որոնք յանուն Աստուծոյ կանգնած են. ահա այսպէս Յիսուսի Քրիստոսի այս գեղեցիկ խօսքը ի չարն մեկնելով կարհամարեն սուրբ եկեղեցին, Նորա ծէսերը և արարողութիւնները, այն է եկեղեցույ տօնակատարութիւնները, հրապարակական աղօթատեղիները, պատկերաց սրբոց, Քրիստոսի սուրբ խաչի, մասանց սրբոց յարգութիւնը, ծոմը, պահքը, և մատաղը, որոնք կարգադրուած հաստատուած են առաքեալներէն, և նոցա յաջորդներէն, և դարերէ ի վեր կատարուած են ամեն ազգաց եկեղեցիներում։

## ԳԼՈՒԽ ԺԴ.

[illegible]

ՈՐՉԱՓ որ աշխատեն արատաւորել եկեղեցւոյ անունը, նորա ուղիղ վարդապետութեան դէմ՝ զինուելով. այնուամենայնիւ ճշմարտութիւնը նոցա մոլորութեան, ստութեան և խաբէութեան վերայ յաղթանակ կը կանգնէ, և առաւել եւս պայծառ կերեւայ. աղանդաւորք եկեղեցին արհամարհելու գիտմամբ՝ կըռապաշտութեան կեղտ անունը կը յանդըգնին տալ նորան, որով չարաչար կըվարուին նորա սրբութեան դէմ. Կռապաշտութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արարածոց երկրպագութիւն մատուցանել, որ միայն ճշմարիտ Աստուծոյ կըպատշաճի. Բազմաստուածեան կրօնի հե-

տեսող հեթանոսները այլ եւայլ նիւթերէ շինուած արձաններու եւ կուռքերու, իբրեւ ճշմարիտ Աստուծոյ խունկ, զոհ կը մատուցանէին, այլ եւ երկնային եւ երկրային մարմինները—լուսին, արեգակ, տարրերը եւ կենդանիք ի պաշտօն առած կ՚երկրպագէին, անարգ արարածները իբրեւ արարիչ ընդունած՝ աստուածական պատիւներ կը տային, միանգամայն մոռանալով ճշմարիտ Աստուածը, որուն միայն պարտական էին նուիրել իրանց երկրպագութիւնը երախտագէտ սրտով։

Քրիստոսի սուրբ եկեղեցին կը մերժէ իսպառ եւ կանարգէ կռապաշտից զանազան մոլորութիւնները, որոնք բազմաթիւ աստուածներ հնարելով կը պաշտէին, եւ կը սորվեցնէ երկրպագութեան պաշտօնը միմիայն միոյն Աստուծոյ ընծայել, ճանաչել զնա միայն տէր, ամենակարող, արարիչ, եւ փրկիչ եւ պաշտպան ամենայնի, եւ ծունր խոնարհել նո-

րա առջև հաւատով, յուսով և սիրով, որից կախուած է մարդկային կատարեալ երջանկութիւնը․ վասն զի Աստուած իւր անսահման բարութեամբ հաղորդակից կանէ մեզ իւր գերագոյն շնորհաց։

Սուրբ եկեղեցին թէև կը յարգէ սուրբերը և կը պատուէ նոցա յիշատակը, բայց երբէք նոցա վերայ աստուածային կատարելութիւն չի ճանաչեր, և միանգամայն կը մերժէ Արարչի՝ Փրկչի, գերագոյն յատկութիւնները ընծայել, այլ կընդունի որ Յիսուսի արդեանց շնորհիւ կը բարեխօսեն միշտ մեզ համար, ինչպէս որ մենք կենդանիքս կաղօթեմք նոցա համար, ինչպէս որ եկեղեցւոյ աղօթքները և երգերը և սուրբ գրոց վարդապետութիւնքը կը հաստատեն մեզ։

Երեմեա մարգարէն կ'աղօթէր առ Աստուած և կաղաչէր, որ իւր գթութեան և փրկութեան արժանացնէ իսրայելացւոց․ բայց Աստուած հրէից անզգջու-

թիւնը տեսնելով ասաց, եթէ կայցեն Մով-սէս և Սամուէլ առաջի երեսաց իմոց, ոչ է-ղէց անձն իմ ընդ նոսա, ի բաց արձակեա զժո-ղովուրդդ զայդ յերեսաց իմոց և ելցեն [1]: Այս խօսքերէն պարզ կերևայ որ Մով-սէս և Սամուէլ կենդանեաց համար կը-բարեխօսեն, թէև խոպակելեան ժողո-վուրդը աստուածային շնորհաց անարժան գտաւ իւր ամբարշտութեան համար։

Զաքարիա մարգարէին ի տեսլեան յայտնուեցաւ, որ հրեշտակը կը բարեխօ-սէր Աստուծոյ՝ հրէից ազգը գերութիւ-նէն ազատելու համար, զոր Աստուած ընդունեց և այց արաւ նոցա տառապա-նաց [2]: Մովսէս մարգարէն կը խնդրէր, որ Աստուած իւր Աբրահամի, Իսահակ և Յակոբի ծառաները յիշէ, և ժողովրդոց վերայ շնորհ ունենայ, յիշեա՛ զքո ծառա-

[1] Երեմ. ԺԵ. 1.
[2] Զաքար. Ա. 11. 12.

[illegible] [1]։

Այսպէս և Սողոմոն իւր Դաւիթ հայրը առ Աստուած միջնորդ ունենալով կ՚ակնկալէր Աստուծոյ մեծամեծ բարեացը[2]· և Յովբայ բարեկամները նորա փորձութեան միջոց՝ կը յորդորէին սրբոց հրեշտակաց բարեխօսութեանը դիմել[3]· իսկ Դանիէլին ի տեսլեան յայտնուեց բաբելոնի մէջ՝ որ Աստուծոյ հրեշտակները կը միջնորդէին և կը խնդրէին Աստուծոյ օգնութիւնը մարդկանց համար[4]։

Բողոքականք կենդանի եկեղեցւոյ բարեխօսութիւնը կընդունին՝ և հանդու-

---

[1] Բ· Օրին· Ժ· 27·
[2] Բ· Մնաց· Զ· 16—47
[3] Յովբ· Ե· 1·
[4] Դանիէլ· Գ· 35· 36· Ժ· 12· 13·

ցեալ սրբոց՝ որք Աստուծոյ տեսոյն արժանացած են¹, նոցա բարեխօսութիւնք չեն ընդունելի. բայց ինչպէս որ տէրը՝ Սադուկեցւոց դայթակղութիւնը - Թէ չէ յարութիւն - մերժեց հաստատելով Աստուծոյ խօսքէն թէ՝ Աբրահամ, Իսահակ, և Յակովբ Աստուծոյ համար կենդանիք են, նոյնպէս և ամենայն առաքեալք և մարտիրոսք, որ Քրիստոսի խաչն յանձն առին՝ նմա կենդանիք են, և եկեղեցին կընդունի թէ՝ նոքա կը բարեխօսեն և Աստուած կընդունի։

Բարեխօսութեան վարդապետութիւնը զոր եկեղեցին կընդունի, աղանդաւորք կը մերժեն և սուրբ գրոց հակառակ համարելով կը քարոզեն թէ՝ սրբոց միջնորդութեան դիմելու հարկ չը կայ, ինքն Յիսուս Քրիստոս է մի միայն միջնորդ Աստուծոյ և մարդկանց. զի թէև՝ սուրբ

---

¹ Բ. Կորն. Ե. 6. 8.

գիրքը կասէ՝ մի է Աստուած և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս [1], բայց և այնպէս կը պատուիրէ միշտ աղօթել առ Աստուած թէ միմեանց և թէ ընդհանուր աշխարհի համար [2].

Պօղոս առաքեալ՝ Յիսուսի Քրիստոսի և սուրբ Հոգւոյ անուամբ կը խնդրէր հաւատացելոց՝ որ միջնորդ լինին Աստուծոյ և աղօթեն իրան համար՝ [illegible] [3].

---

[1] Ա. Տիմ. Բ. 5.

[2] Եփես. Զ. 18. Ա. Տիմ. Բ. 1. 2.

[3] Հռովմ. ԺԵ. 30. 32.

Աղանդաւորք Յիսուսի Քրիստոսի միջնորդութիւնը և սրբոց բարեխօսութիւնը իրարու հետ շփոթելով իսպառ կը շեղուին սուրբ գրոց վարդապետութենէն, և սուրբ գրոյն մէկ խօսքը միւսոյն հակառակը քարոզելով, իրանց հետևողները մոլորութեան մէջ կը գլորեն. վասն զի Յիսուսի Քրիստոսի միջնորդութիւնը ըստ սուրբ գրոց վարդապետութեան՝ մարդկային ազգը յաւիտենական դատապարտութենէն ազատելու միտքն ունի, որ իւր անձն փրկանք տուաւ նախամարդոյն պատուիրանազանցութեամբ՝ Աստուծոյ և մարդկանց մէջ խզուած ուխտի կապը կրկին հաստատելու համար [1]. բայց սրբոց աղօթելը և բարեխօսելը մի միայն Աստուծոյ շնորհաց և գթութեանց արժանանալու համար է [2].

[1] Ա. Տիմ. Բ. 5–7. Եբր. Ը. 6–13. Թ. 11–28. Ժ. 24.

[2] Յովբ. ԽԲ. 8. 9.

Պէտք չէ զարմանալ, որ աղանդաւոր-ները սուրբ գրոց միտքը կը Թիւրեն, և իրանց մոլար վարդապետութեան կը-յարմարեցնեն. զի եԹէ չ'այլայլեն, չեն կարող տարածել մոլար աղանդը.

Յիսուս Քրիստոս ասաց Հրէից ազգին. [illegible] [1]. Բողոքա-կանք չարախօս բառը, ամբաստանութիւն Թարգմանած են, որպէս զի կարդացողը չարախօսելէն բարեխօսել ևս չը հեռեցը-նէ. այս աստուածային խօսքերէն պարզ կիմացուի Թէ՝ եԹէ չարախօսող կայ, կայ և բարեխօսող յերկինս. Յովհաննէս ա-ւետարանչին ի տեսլեան երևեցաւ, որ մարտիրոսները Աստուծոյ արդարուԹեան առջև կը բողոքէին, և իրանց արեան վր-

[1] Յովհ. Ե. 45.

րէժը կը խնդրէին [1]։ Նաև յայտնուեց նոյն աւետարանչին որ Հրեշտակները և սուրբերը Աստուծոյ առջև կացած կաղօթէին և կը բարեխօսէին անդադար մարդկանց փրկութեան համար, և նոցա աղօթքը իբրև անուշահոտ խունկ կընդունուէր [2]։

Քրիստոսի սուրբ եկեղեցին սուրբ գըրոց հիման վերայ սրբոց անունները տալով կը մտաբերէ նոցա գործքերը, հաւատով ճգնութիւնը, և նահատակութեան արդիւնքը, կը գովէ և կը մեծարէ ամենայն ջերմեռանդութեամբ. Պօղոս առաքեալ պարտք կը դնէ ոչ միայն սրբոց յիշատակը պատուել, այլ և կը խրատէ վարուք նոցա նմանիլ. Յիշեցէք առաջնորդները ձեր, որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ, հայեցեալ ելից գնացից նոցա, նմանողք

[1] Յայտ. Զ. 9. 10.

[2] Յայտ. Ա. 6. Գ. 11. Ե. 8. 12. Է. 9. 10. Ը. 3. 4. ԺԱ. 13. ԺԹ. 1—6.

եղերուն հաստատուն [1]։ Նաեւ կը հաւատայ, որ սուրբերը մեծ պատիւ ունին Աստուծոյ առջեւ, հաղորդակից են Քրիստոսի փառաց [2]։ Եւ Աստուած միշտ կը պատուէ զնոսա թէ յերկրի իւր շնորհաց եւ խնամոց արժանացնելով [3], եւ թէ յերկինս՝ իւր արքայութեան մէջ փառաւորելով [4]։

Ուրեմն ի զուր է աղանդաւորաց զըրպարտութիւնը եկեղեցւոյ դէմ, որ կը յարգէ սուրբերը, կընդունի նոցա բարեխօսութիւնը եւ կը պատուէ նոցա յիշատակը սուրբ գրոց եւ առաքելական աւանդութեանց հետեւելով, եւ կը հաւատայ, որ սուրբերը աղօթելու եւ բարեխօսելու պաշտօնն ունին յերկինս եւ կա-

---

[1] Եբր. ԺԳ. 7. Սաղմ. ՃԼԸ. 16.
[2] Յովհ. ԺԴ. 3. 20. Մատ. Ե. 8. Ա. Կորն. ԺԳ. 12. Սաղմ. ԼԵ. 10.
[3] Ա. Տիմ. Ե. 17.
[4] Յովհ. ԺԷ. 22. 24. Յայտ. Ե. 12.

տարեալ և յստակ տեսութեամբ դէմ յանդիման կը տեսնեն Աստուծոյ սքանչելի մեծութիւնը և փառքը Յիսուսի Քրիստոսի շնորհաց ներգործութեամբ. Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման, այժմ ծանօթ եմ փոքր ի շատէ, այլ յայնժամ ճանաչեցից որպէս և նոյն ծանեայ եմ [1]:

Աղանդաւորք սրբոց բարեխօսութիւնը չընդունելէն և նոցա պատիւ և պաշտօն ընծայելը արհամարհելէն զատ, կուրանան և սուրբ Աստուածածնայ մշտնջենաւոր կուսութիւնը և իրանց սուտ թեան փաստ՝ որ անհիմն է, յառաջ կը բերեն սուրբ աւետարանի այս խօսքը. Մինչդեռ նա ընդ ժողովրդեանն խօսէր, ահա մայր նորա և եղբարք նորա կային արտաքոյ և խնդրէին խօսել ընդ նմա [2]

[1] Ա. Կորն. ԺԳ. 12.
[2] Մատթ. ԺԲ. 46. 47. ԺԳ. 54. Մարկ. Գ. 31. 32. Զ. 3. Ղուկ. Դ. 16. Ը. 19. 20.

Սուրբ աւետարանի մէջ յիշուած եղբայրները և քոյրերը Յիսուսի մերձաւոր ազգականներն էին, և ոչ թէ ըստ կարծեաց նոցա՝ նորա հարազատներն։ Սուրբ գրքէն կը սորվինք, թէ ազգականք ազգականաց կրնան եղբայր և քոյր անուանիլ, ինչպէս Աբրահամի եղբօր Առանա որդի Ղովտ, նոյն իսկ Աբրահամին եղբայր կոչուեցաւ, և իբրև լուաւ Աբրահամ թէ գերի վարեցաւ եղբայր իւր Ղովտ . . . և զՂովտ եղբայր իւր և զամենայն զստացուածս իւր դարձոյց[1]. և Լաբան Յակոբի եղբայր անուանեցաւ, որ նորա մօր Ռեբեկայի եղբայրն էր, չէ ասէ Լաբան ցՅակոբ չէ եղբայր իմ ես դու, ոչ ծառայեսցես ինձ ձրի[2]։

Մովսէս տեսնելով, որ իւր ազգակից եղբայրները իրարու զրկանք կը հասցնեն

[1] Ծննդ. ԺԴ. 14.
[2] Ծննդ. ԻԹ. 15.

ասաց՝ արք եղբարք էք դուք, ընդէ՞ր զր-
կէք զմիմեանս[1]։ Ահա այսպիսի օրինակնե-
րով լի է սուրբ գիրքը[2]. ուրեմն սուրբ
գրքերէն կիմացուի, որ պիտի հաւատանք
թէ՝ Յիսուսի Քրիստոսի եղբարք և քորք
ասուածները, սուրբ Աստուածածնայ և
սուրբ Յովսէփայ մերձաւոր ազգական-
ներն էին. վասն զի Մարիամ Կղէոպայ՝
սուրբ կոյս Մարիամի մօրաքեռ դուստրն
էր. Եւ կային առ խաչին Յիսուսի՝ մայր նո-
րա և քոյր մօր նորա Մարիամ Կղէոպայ[3]։
Կղէոպաս Յովսէփայ աստուածահօր
եղբայրն էր, որ կին առած էր Մարիա-
մին, որու որդիքն էին Յակոբոս Տեառն
եղբայր եօթանասուններէն մին՝ Երու-
սաղէմի առաջին եպիսկոպոսը։ Այս

---

[1] Ելից. Բ. 13.

[2] Գործ. Է. 26. 37. Բ. Օրին. ԺԸ. 19.
Մատթ. ԻԱ. 29. Հռովմ. Թ. 3.

[3] Յովհ. ԺԹ. 25.

Յուստոս, Յովսէփ և կամ՝ Բարսաբայ Երուսաղէմի երկրորդ եպիսկոպոսը՝ եօթանասուններէն մին. Սիմոն Երուսաղէմի երրորդ եպիսկոպոսը. Յուդայ Թադէոս, կամ՝ Յուդայ Յակոբեան երկոտասաններէն մին. սոքա ամենքը սուրբ Աստուածածնայ մօրաքեռ դստեր որդիքն էին և աստուածահօր Յովսեփայ եղբօր որդիքը և մերձաւոր ազգականները. որոնք Յիսուսի եղբայր կը կոչուէին. և Զեբեդիայի կին Սաղոմէն՝ Յովհաննու աւետարանչի մայրը, և Յովհաննէս Մըկրտչի Եղիսաբէթ մայրը, Մարիամ՝ կուսի ազգականք՝ Յիսուսի քոյրեր կը համարուէին [1]

Ահա սոքա էին ըստ սուրբ գրոց, որ Յիսուսի եղբայրներ և քոյրեր կոչուէին, և սուրբ եկեղեցին այսպէս կընդունի և կը մերժէ խոտան աղանդաւորաց մոլորութիւնը.

---

[1] Մատ. Ժ. 20. Ղուկ. Ա. 36.

Յիսուս իր մերձաւոր ազգականներէն զատ՝ իրան եղբայր և քոյր կը կոչէ նաև սուրբ աւետարանի քարոզութիւնը լսողները և հետևողները. մինչև անգամ Հօր Աստուծոյ շնորհական որդիք կանուանէ. Զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է, նա է իմ եղբայր և քոյր և մայր [1]. և թէ՝ Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյն մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ, և եթէ որդիք՝ ապա և ժառանգք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի [2]: Ուրեմն եթէ սուրբ գրքով կը խօսին, թող սուրբ գրոց վկայութեամբ համոզուին, մոլորութիւնը ի բաց դնեն, և խոստովանին որ սուրբ կոյսը բացի Յիսուսէն ուրիշ որդիք չունեցաւ Յովսէփէն, եթէ արդարև չեն կամենար չորրորդ դարու Հեղուէտիոսի

[1] Մատթ. ԺԲ. 50.

[2] Հռովմ. Ը. 16. Գաղ. Դ. 5. Ա. Յովհ. Գ. 1. 2.

մոլորութեան հետեւիլ, որ Աստուածածնայ կուսութիւնը և աստուածամայրութիւնը կը ժխտէր. Եթէ Մարիամ ուրիշ որդի ունենար, Յիսուս խաչին վերայէն չէր ցուցնէր զՅովհաննէս, և չէր ասեր. կին, ահա որդի քո, և աշակերտին ևս չէր ասեր, ահա մայր քո. և աշակերտն իրան մօտ չէր առնուր զՄարիամ[1]։

Ի՞նչ օգուտ, կը կարդան սուրբ գիրքը, աւետարանի քարոզիչ ենք կասեն, բայց ճշմարտութեան դէմ աչք խփելով կը շեղուին. զի սուրբ Հոգւոյ առաջնորդութիւնը չունին և միշտ սուրբ գրոց հակառակը կը գործեն ըստ առաքելոյն, յամենայն ժամ ուսանին, և երբէք ի գիտութեան ճշմարտութեան ոչ հասանեն. Այլ չը պիտի հասնին, քանի որ իրանց կամքին

---

[1] Յովհ. ԺԹ. 26. 27.

յարմարեցնել կը խորհին. և սուրբ գրոց ուղիղ վարդապետութեանց միտ չեն դներ[1], զի Աստուած ապականեալ սրտերու և մտքերու հետ գործ չունի։

Աղանդաւորք իրանց մոլորութիւնը հաստատելու համար՝ ոչ միայն սուրբ գրքէն ամբողջ գլուխներ, գրքեր, հատուածներ ի բաց ձգած են, այլ և բառերը քննութեան առնելով կաշխատին մոլորեցնել, յամառելով իրանց կարծեաց մէջ, չեն կամենար խոստովանիլ ճշմարտութիւնը։ Սուրբ աւետարանը Մարիամու կուսութեան համար կը գրէ, և ոչ գիտէր զնա, մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ։ Այս խօսքը կը դնէ աւետարանիչն՝ ցուցնելու համար միայն՝ թէ Յիսուսի ծնունդն ի Յովսեփայ չէ, այլ ըստ մարգարէութեան՝ կոյսն ծնաւ. Այս խօսքէն հետեւցնել, թէ Յովսէփ՝ Յիսու-

[1] Յովհ. ԺԶ. 13. Ա. Կորն. ԺԲ. 3.

սի ծննդէն ետքն գիտցաւ զՄարիամ. որչափ որ աղանդաւորք կարողանան հետեւցնել այս հատուածէն թէ կոյս չը մնաց Մարիամ, նոյնչափ հաւանական է հետեւցնել, թէ կոյս մնաց. Ըստ որում Յովսէփ բարեպաշտ էր, և ի տեսլեան իմացաւ ի հրեշտակէն, թէ յղացեալ է Մարիամ ի Հոգւոյն սրբոյ. Եթէ աւետարանի այդ խօսքէն կարելի լինի բացարձակ հետեւութիւն հանել, թէ կոյս չը մնաց Մարիամ յետ ծննդեան Յիսուսի. սուրբ գրոց այս խօսքէն, և Մեղքողայ դստեր Սաւուղայ ոչ եղև որդի, մինչ ցօր մահուան իւրոյ՝, պիտի հետեւի, թէ մահուանէն յետոյ որդի ունեցաւ Սաւուղի Մեղքող դուստրը. Ըստ այսմ սուրբ եկեղեցին աւելի եւս կը հաւանի, թէ սուրբ կոյսն՝ ըստ որում ՚յղացաւ՝ ոչ յառնէ, այլ ի

---

՚ Բ. Թագ. Զ. 23.

Հոգւոյն սրբոյ անճառ խառնմամբ՝ ըստ այնմ՝ նորա կուսութիւնը չաւրուեցաւ և ի ծննդեան Յիսուսի՝ զի և ծնունդն անճառ էր. վասն որոյ և սուրբ եկեղեցին մերժելով աղանդաւորաց մոլորութիւնը կը խոստովանի զսուրբ կոյս Մարիամ Աստուածածին՝ կոյս՝ փառաւորեալ և օրհնեալ միշտ. Սէրն [illegible]

Շարական.

## ԳԼՈՒԽ ԺԵ.

[illegible]

Սրբոց պատկերները և նոցա մասունքները իրաւամբ կը յարգեն և կը պատուեն Հաւատացեալք. վասն զի սուրբ

պատկերները քրիստոնէից սրտի մէջ կարթնացնեն հաւատոյ ջերմեռանդութեան զգացմունք, կը յիշեցնեն նոցա ճգնողական վարքը, չարչարանքները և մարտիրոսական մահուամբ հաւատոյ ճըշմարտութեան համար վկայ լինելը. Պօղոս առաքեալ հաւատացելոց յիշեցնելով սրբոց ի Յիսուս Քրիստոս ունեցած հաստատ հաւատքը, աներկբայ յոյսը և առաքինական գործքերը, յորդոր կը կարդայ՝ որ նոցա վարուց նմանութիւնն ունենան, մեռցնելով իրանց մէջ չար կրքերը. Այսուհետև և մեք որ այսչափ շուրջ զմեօք պատեալ ունիմք զբազմութիւն վկայից, ըն- հպարտութիւն զամենայն ի բաց ընկեսցուք և զմեղս կարևորս, համբերութեամբ ընթասցուք ի պատերազմ որ առաջի կայ [1].

Սակայն այս յարգանք և պատիւ աղանդաւորաց խիստ թուելով կը խօսին,

---

[1] Եբր. ԺԲ. 1.

հակառակ ճշմարտութեան՝ քրիստոնէից ջերմեռանդութիւնը կարհամարհեն և սուրբ գրքէն մի քանի վկայութիւններ բերելով՝ աստուածպաշտութիւնը կռապաշտութեան հետ կը հաւասարեն, և աւելորդապաշտութիւն համարելով կը քարոզեն թէ այս յարգանքը Աստուծոյ պատուիրանաց դէմ՝ է. և թէ Աստուած ձեռագործ և ձուլածոյ պատկերներ շինել և երկրպագութիւն մատուցանելը արգելած է՝ հիմնուելով սուրբ գրքի այս խօսքին վերայ, Մի՛ [illegible] նմանութիւն, որ ինչ յերկինս ի վերայ, և որ ինչ յերկրի ի խոնարհ, և որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի, Մի՛ երկրպագանիցես նոցա, և մի՛ պաշտեսցես զնոսա, զի ես եմ Տէր Աստուած քո, Աստուած նախանձոտ՝[1]։

[1] Ելից. Ի. 3—5. Իէ. 13.
Բ. Օրին. Ե. 7. 8.

Արդարև Աստուծոյ հակառակ է ձեռագործ և ձուլածոյ սուտ աստուածոց պատկերներ շինել և երկրպագութիւն մատուցանել, ինչպէս Իսրայելացւոց ժողովուրդը Մովսէսի ի Քորէբ հեռանալէն յետոյ ստիպեց Ահարոնին, որ իրանց համար ձեռագործ աստուածներ շինէ, միանգամայն մոռանալով Աստուծոյ ամենակարողութիւնը, որ Եգիպտոսի դառն չարչարանքներէն ազատեց, արարին զուարակ ի Քորեբ և երկրպագեցին դրօշելոյն, և փոխեցին զփառս Աստուծոյ, ի նմանութեան որթոյ խոտակերի, մոռացան զԱստուած կեցուցիչ իւրեանց, որ արար զմեծամեծս յԵգիպտոս և զսքանչելիս իւր յերկրին Քամայ և զահ ես ի ծովուն Կարմիր ծովու [1]։

Իսկ եկեղեցին՝ ինչպէս կը կարդայ սրբոց վարքը, նահատակութիւնը, որպէս զի նմանի նոցա վարուց սրբութեան, և

[1] Սաղմ. ճե. 19.

հոգեկան արիութեան՝ մինչև զմահ արհամարհել Աստուծոյ սիրոյն համար. ճիշդ այս նպատակաւ կը թոյլատրէ հայել և սըրբոց պատկերներուն, որով անգրագէտներն ևս կուսանին նոցա նահատակութեան օրինակը, և օրինակէն կը ծանօթանան արիական հոգւոյն. Պատկերաց առջև եղած ծնրադրութիւնը՝ սուրբ եկեղեցւոյ մէջ ծնրադրութիւն է, և Աստուծոյ երկըրպագութիւն՝ և ոչ պատկերաց.

Ճշմարիտ աստուածպաշտութիւնը անարգ կռապաշտութեան տեղ դնել և ճշմարտութիւնը ստելն այս է, երբ ճըշմարիտ Աստուծոյ փառքը ձուլածոյ սուտ աստուածներու կը փոխարինեն, և երկրպագելու պաշտօնն ու պատիւը և փառքը, որ միայն Ճշմարիտ Աստուծոյ տալ պէտք է, կռոց, սուտ աստուածոց կընծայեն՝ հակառակ սուրբ գրոց վարդապետութեան. փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ ի նմանութիւն պատկերի եղծանելւոյ մարդոյ

և թռչնոց և չորքոտանեաց և սողնոց. . . որք փոխանակեցին զճշմարտութիւնն Աստուծոյ ընդ ստութեան, ծառայեցան և պաշտեցին զարարածս և ոչ զԱրարիչն [1]:

*Իսկ սուրբ եկեղեցին սրբոց պատկերները յարգելով բնաւ Աստուծոյ դէմ չի մեղանչեր, կռապաշտութեան յարած չի համարուիր, այլ կռապաշտութիւն կը համարուի այն՝ երբ մին՝ Աստուծոյ զօրութիւնը և մեծութիւնը ուրանալով Աստուծոյ ընծայելի երկրպագութիւնը նիւթականին կընծայէ, փոխանակ Արարչի՝ արարածները կը պաշտէ, ահա ըստ սուրբ գրոց՝ Աստուած այսպիսի ձեռակերտները և ձուլածոյ պատկերները կը հրամայէ յերկրպագութիւն չառնուլ. որոնք Աստուծոյ մեծութեան և ճշմարտութեան կը հակառակին՝ կռամոլութիւն համարուելով և*

[1] Հռովմ. Ա. 23. 25.

թէ՝ այլ է սրբոց պատկերաց խորհրդաւոր նկարագրութիւնն և այլ է կռապաշտից սնոտի կուռքերը։ Քրիստոսի եկեղեցին սրբոց պատկերաց և նոցա մասանց յարգութիւն ընծայելով՝ Աստուծոյ տեղ դրած չի լինիր՝ ինչպէս կը կարծեն. և ոչ պատկերաց մէջ աստուածական զօրութիւն և իշխանութիւն կը ճանաչէ. զի այն պատիւն ու յարգը՝ որ կընծայեմք բուն սկզբնատիպերուն՝ սըրբոց և կամ՝ նոյն իսկ Յիսուսին. ի սուրբսըն ներշնչած արիական հոգւոյն՝ վեր ընծայած կը համարենք՝ և այս բարեպաշտական սովորութիւնը իւր սկիզբն ունի առաքելոց ժամանակէն և միշտ կը մեծարուի հաւատացեալներէն։

Սուրբ գրքի մէջ կը տեսնուի՝ որ երբեմն ձուլածոյ և ձեռակերտ պատկերները ինքն իսկ Աստուած կը հրամայէ շինել և ի տես մարդկանց դնել. որպէս զի աստուածպաշտութեան գաղափարը

Հանապազ արձարձուի նոցա մէջ. յիշեցնէ նոցա՝ Աստուծոյ մարդասիրութիւնը, շնորհները եւ բարիքները: Իսրայէլացւոց ազգին տուաւ տապանակ ուխտին, որ իւր վերայ կը կրէր ոսկեձոյլ քերովբէներ թեւատարած, Արասցես տապանակ վկայութեան յանփուտ փայտից. . . Եւ պատեսցես զնա ոսկւով սրբով ներքոյ եւ արտաքոյ, ածցես զնա. . . Եւ արասցես երկուս քերովբէս ոսկիս ճախարակեայս՝ Եւ դիցես զնոսա ի վերայ երկոցունց կողմանց քաւութեան. . . . Եւ արասցես երկուս քերովբէս ի վերայ երկոցունց կողմանց նորա, Եւ իցեն քերովբէքն տարածեալ զթեւս իւրեանց ի վերուստ[1]:

Ինչպէս ձեռակերտ տապանակը, որ Աստուծոյ զօրութիւնը մտաբերել կը տար ժողովրդոց, նոյնպէս այն քերովբէից

---

[1] Ելից. ԻԵ. 10. 11. 18. 20. Թիւ. ԻԱ. 8. Գ. Թագ. Զ. 35. Է. 25–36. Ը. 6–8. Ժ. 19. Բ. Մնաց. Գ. 10–14. Դ. 3. Ե. 7–10.

պատկերներուն միջոցաւ կը յայտնուէր Աստուծոյ ամենակարողութիւնը և մեծութիւնը[1]․ որ հանդուցեալ էր ի քերովբէս՝ և որոյ առջև կռապաշտից արձանները կը կործանուէին[2]․ վասն զի կռապաշտութեան պատկերները մարդկանց դէպ ի կռապաշտութիւն կը տանէր, զոր փոխանակ Աստուծոյ կը պաշտէին, իսկ տապանակ ուխտին իւր քերովբէներով, Աստուծոյ զօրութիւնը կը նկարագրէր, և կը յայտնէր նորա մեծութիւնը և փառքը, զոր մարդիկ տեսնելով կը յիշեն միշտ նորա խնամքը և գթութիւնը[3]․

Սրբոց պատկերները ունէին նաև իրանց օգտակարութիւնը մի այլ կերպով․ որ բացի ջերմեռանդութեան յորդոր լինե-

---

[1] Ա․ Թագ․ Դ․ 4․ 8․

[2] Ա․ Թագ․ Է․ 3․ 4․

[3] Եբր․ Թ․ 5․

լէն կը յիշեցնեն մեզ նոցա պատմութիւնը. օրինակ փրկչական պատկերը միանգամայն կարթնացնէ մեր մտքին մէջ, թէ ի՞նչպէս Աստուծոյ միածին որդին՝ մարդկային մարմին առաւ, շրջեց աշխարհի վերայ, իւր անձն խաչի և մահու մատնեց՝ և հաշտութեան միջնորդ հանդիսացաւ Հօր Աստուծոյ և մարդկանց մէջ։ Հին և Նոր կտակարանաց պատմութիւնները մի և նոյն միտքը ունին։

Սրբոց պատկերաց գործածութիւնը իսկզբանէ ունի եկեղեցին ի սուրբ Հոգւոյ առաջնորդուած և լուսաւորած[1]։ Սուրբ պատկերները ունին և այն առաւելութիւնը, որ կարթնացնեն մեր մէջ Յիսուսի Քրիստոսի և սրբոց յիշատակը, և կը հրաւիրեն զմեզ՝ միշտ բարեխօս ունենալ առ Աստուած, կը տպաւորեն մեր սրտի մէջ Յիսուսի կենաց խորհուրդները և սրբոց

[1] Եփես. Ա. 18.

առաքինական գործքերը՝ որոնք Յիսուսի անուան համար ամեն նեղութեանց համբերեցին և նահատակեցան։

Սրբոց պատկերները նաև կարթնացնեն մարդկանց մէջ աստուածպաշտութեան սէր. վասն զի Աստուած շատ անգամ սրբոց պատկերաց միջոցաւ կամենալով փառաւորուիլ մի եկեղեցւոյ՝ կամ մի վկայարանի մէջ, իւր աստուածային շնորհները առատօրէն կը պարգևէ այնտեղ հաւատացելոց՝ որոնք ժողովուած կաղօթեն և մեծամեծ շնորհաց կարժանանան։

Սուրբ եկեղեցւոյ մէջ սրբոց պատկերաց ունենալը՝ նոցա առջև Աստուծոյ մեծութիւնը յիշելը և Աստուծոյ երկրպագելը՝ ճշմարիտ աստուածպաշտութեան նշան է. Պարտ է [illegible] և Փրկչին [illegible] [illegible]

[illegible]

Ընդհ. Երես 87.

Ինչպէս սրբոց պատկերները իրանց պատմութիւններէն առնելով կը նկարագրուին. նոյնպէս և տէրունական պատկերները նոր կտակարանէն. իսկ Հօր Աստուծոյ և սուրբ Հոգւոյն՝ սուրբ գրոց յայտնութենէն ունին. վասն զի թէ և Աստուած անտեսանելի է [1], բայց Հին

---

[1] Ելից Գ. 20. Յովհ. Ա. 18. Ա. Տիմ. Զ. 16. Ա. Յովհ. Դ. 12.

օրինաց ժամանակ յայտնուեց Աստուծոյ տեսութիւնը սրբոց՝ այլ և այլ կերպարանօք. նա մանաւանդ՝ Նոր օրինաց ժամանակ սուրբ Հոգին Աստուած՝ աղաւնւոյ նմանութեամբ երևեցաւ Յիսուսի մկրտութեան ժամանակ ի Յորդանան, և վերնատան մէջ Հրեղէն լեզուներով յայտնուեց սրբազան առաքելոց[1]. իսկ Եսայի Հօր Աստուծոյ համար այսպէս կը խօսի. Տեսի զՏէրն նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ, և լի էր տունն փառօք նորա. Սերովբէքն կային շուրջ զնովաւ . . . . և ասեմ, Վայ է ինձ, եւ այր տառապեալ [illegible] [illegible] զի մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ, և զՏէր զօրութեանց տեսի աչօք իմովք[2]. Եւ Դանիէլ մարգարէն գեղեցիկ կը նկարագրէ, տեսանէի մինչև

[1] Ղուկ. Գ. 22. Գործ. Բ. 3.
[2] Եսայ. Զ. 1—5.

[illegible] [1]։

Իսկ Հայաստանեայց սուրբ եկեղեցին կը մերժէ չորրորդ դարուն երևցած Եւնոմեանց և Արիեանց աղանդները, որոնք կասէին թէ՝ Աստուած բնական տեսութեամբ կտեսնուի և կը ճանաչուի նորա անքննելի խոկութիւնը. Նոյնպէս կը հերքէ չորեքտասաներորդ դարու Բեգուարդեանց և Բեգուինեանց աղանդը, որոնք աշխարհիս մարդկանց անմեղանչական լինել քարոզելով՝ բնական տեսութեամբ աստուածատեսութիւն կիմանային, և թէ մար-

[1] Դան. Է. 9.

դիկ երբեք աստուածային գերբնական լուսոյ շնորհաց պէտք չունին հակառակ սուրբ գրոց[1]։

Աղանդաւորք սրբոց պատկերաց յարգութեան դէմ խօսելէն յետոյ՝ կը դատապարտեն և սրբոց մասանց յարգութիւն մատուցանելը, եկեղեցին ինչ եղանակաւ կը յարգէ սրբոց պատկերները՝ նոյն եղանակաւ կը մեծարէ և կը պատուէ նոցա մասունքները՝ հաւատալով որ սուրբ Հոգւոյ շնորհները հանգած է ի սուրբ նշխարս նոցա՝ և դիմողները Աստուծոյ զօրութեամբ կը ստանան բըժշկութիւն[2]։ Մինչև անգամ սրբազան առաքելոց թաշկինակները բժշկութիւն կը պարգևէին հիւանդաց[3]. զի եթէ Պետրոսի հովանին և Պօղոսի թաշկինակը՝

---

[1] Սաղմ. Լէ. 10. Մատ. ԺԱ. 27.
[2] Դ. Թագ. ԺԳ. 23.
[3] Գործ. ԺԹ. 12.

որ նոցա անձանց հետ կապ չունէին, այլ լոկ յարաբերութիւն ունենալով սքանչելիքներ կը գործէին Աստուծոյ կամօք, ուրեմն ինչո՞ւ չը պիտի հաւատանք՝ թէ սրբոց մասունքները կարող են աստուածային զօրութեամբ՝ մեծամեծ հրաշքներ գործել և Աստուծոյ անունը փառաւորել. Սքանչելի է Աստուած ի սըրբոց իւրոց[1].

Ուրեմն աւելորդապաշտութիւն չէ սրբազան առաքելոց, մարտիրոսաց և հայրապետաց մասանց յարգութիւն և պատիւ տալը, այլ եթէ հաւատով դիմենք նոցա, Աստուած կընդունի մեր ջերմեռանդութիւնը և կը կատարէ մեր խընդիրը, Հին օրինաց մէջ ևս կը տեսնուի որ Եղիսէ մարգարէին ոսկերաց մերձեցող մեռեալը կենդանացաւ և ոտքի կանգնեց[2]. աստուածային զօրութիւնը

[1] Սաղմ. ԿԷ. 37.
[2] Դ. Թագ. ԺԳ. 21.

մեծամեծ արանչելիքներով միշտ պիտի յայտնուի սրբոց միջնորդութեամբ հաւատով ի նոսա դիմողներուն. ոչ միայն իսկզբան սրբոց կենդանութեան ժամանակ, այլև մահուանէն յետոյ՝ Աստուած նոցա նշխարաց միջնորդութեամբ շատ հրաշքներ պիտի գործէ իւր անուան փառաւորութեան համար. Ինչպէս Պօղոս առաքեալ՝ կասէր իւր անձին համար. Մեծասցի Քրիստոս ի մարմնի իմում, եթէ կենօք և եթէ մահու[1]. Իսկ թերահաւատներու և մոլորեալներու համար. Յակոբոս առաքեալ՝ այս խօսքը կասէ. [illegible][2].

Աղանդաւորք կասեն թէ սուրբ գիրքը կարգելէ գրօշեալ ունենալ. զի արդարև

[1] Փիլիպ. Ա. 20.

[2] Յակ. Դ. 12.

կայր կը համարուի այն անձն, որ կռա-
պաշտութիւնը Աստուծոյ աւելի չի ճա-
նաչեր, սակայն գիտնալու է թէ՝ Երբ,
և որո՞ց համար տրուած է, անդրի, պատ-
կերներ, չը շինելու արգելքները, Հրէ-
ից ազգը Եգիպտոսի մէջ երկար ապրե-
լով բնականաբար կռապաշտութեան հա-
կուած էր, մինչև անապատի մէջ Աս-
տուծոյ խնամոց երես դարձնելով, որ-
թապաշտութեան յարեցաւ, և շատ
դէպքերու մէջ դրացի ազգաց շաստուած-
ները պաշտեց. Հաւատաց կռոց արձան-
ներուն և պատկերներուն, երկրպագեց
իբրև Աստուծոյ և զոհ մատոյց նոցա.
Ահա այս նկատմամբ Աստուած արգելեց
արձաններ և երկնքի և երկրի վերայ
եղած իրերը ի պաշտօն առնուլ. վասն
զի ինքն է միայն երկրպագելի ճշմարիտ
Աստուածը, նոյն արգելքը դրին և մար-
գարէները որպէս զի կռապաշտութիւնը
ընդ միշտ անհետանայ ժողովրդոց միջէն.

Ինչպէս ասացի՝ սրբոց մասանց և պատկերաց յարգ և պատիւ ընծայողները շատ անգամ՝ արժանացած են աստուածային շնորհաց, և այս յարգութիւնը ի նախնեաց ունիմք առաջին դարերէն ի վեր, որը կը ստուգուի պատմութենէն. զի նախնիք ի հնումն՝ այնքան մեծ ջերմեռանդութեամբ կը յարգէին սրբոց նշխարները, մինչև աներկիւղ նոցա տանջանաց տեղերը դիմելով կառնէին մարմինները, խնամօք կը պատէին և գերեզմաններուն մէջ ամփոփելով կը պատուէին նոցա շիրիմները, կաղօթէին և նոցա տօները հանդիսիւ կը կատարէին ամէն տարի.

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Մարդոյ վարմունքը Աստուծոյ շնորհաց նկատմամբ, և վարմունքը Եկեղեցւոյ շնորհաց դէմ։

ՄԱՐԴՍ օտարի թերահաւատ խօսքերուն լսելով կը կորսնէ այն մեծ բարիքները, որ Քրիստոսի սուրբ եկեղեցին իր սրբարար խորհուրդներու միջոցաւ պարգևած է իր որդւոց։ Սկզբնական մեղքը՝ որ մարդ թշնամի դարձած էր Աստուծոյ, մկրտութեամբ սրբուած հաստատեց վերստին իր բարեկամութիւնը և եղաւ Աստուծոյ որդի. ամեն բարիքներէ զուրկ էր՝ ըստ կամս երթալոյն, ի Քրիստոս Յիսուս ունեցած հաւատոյ, յուսոյ և սիրոյ արդեամբք՝ արժանացաւ բարձրագոյն կոչման՝ որդեգրութեան Աստուծոյ, և բարի բարի գործքերով

պսակեց իւր վախճանը յաւիտենական կենաց ժառանգութեամբ, և այսպէս Աստուած առատացուց մեր վերայ իւր շնորհը, և յաւիտենական կենաց վստահութիւնը շնորհեց մեզ. ուրիշ այլ ևս ի՞նչ բան կրնայ մարդ սպասել յԱստուծոյ, բայց շահիլ այն փառքը՝ որ իր համար ի սկզբան ստեղծուած և պատրաստուած էր։

Աղանդաւորք արհամարհելով եկեղեցին և նորա սուրբ խորհուրդները, չեն ճանաչեր Աստուծոյ շնորհաց այս մեծ պարգևները, չեն ընդուներ սրբոց յարգութիւնը, որոնք եկեղեցւոյ հետ անքակտելի սիրով կապուած, Յիսուսի անուան և նորա եկեղեցւոյ փառաւորութեան համար, ամեն վիշտ և տանջանք նահատակութեամբ յանձն առին, և ըզմարդիկ ի Քրիստոս Յիսուս արդիւնաւորեցին, Կուրանան պսակի սուրբ խորհուրդը զոր Աստուած սահմանեց դրախ-

տին մէջ [1] և Յիսուս հաստատեց իբրև խորհուրդ՝ յինքն և յեկեղեցի օրինակելով. որի հետ անբաժանելի կերպով միացած է յաւիտեան, և առանձնացուց այն ամուսնութենէն, որ կը համարուէր իբրև մի լոկ դաշնակցութիւն ըստ հին օրինաց և հեթանոսաց, Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Յիսուս Քրիստոս և յեկեղեցի [2]:

Այլ և կարհամարհեն քահանայութեան կարգի խորհուրդը, զոր Յիսուս հաստատեց իւր յերկինս համբառնալոյ օրը, ձիթենեաց լերան վերայ՝ տալով իւր աշակերտաց այդ բարձրագոյն աստիճանը, իւր հօտը հովուելու և աւետարանը քարոզելու համար. և եկեղեցին առաքելոց յաջորդաց ձեռօք կը շը-

---

[1] Ծննդ. Ա. 28.
[2] Եփես. Ե. 32.

Նորհէ ընտրելոց և կը հաստատէ զնոսա ի պաշտօն իւր, Եւ նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս, ի հաստատութիւն սրբոց ի գործ պաշտաման ի շինուած մարմնոյն Քրիստոսի [1].

Այսպէս Աստուծոյ շնորհած ուրիշ ամեն բարիքներէն զրկելէն յետոյ, կը յարձակին ապաննջեցելոց դէմ, կը մերժեն նոցա համար աղօթելը, նոցա յիշատակը կատարելը և ողորմութիւն տալը, որոնք ի հնումն ևս կը պաշտուէր և կը յարգուէր ջերմեռանդ հաւատով. և այսպիսի արհամարանօք կը վիրաւորեն մարդկանց զգացմունքը, որ իրանց ննջեցելոց յիշատակը պատուելու բարեպաշտութիւնն ունին՝ յարութեան գեղեցիկ յոյսը իրանց մէջ կենդանի պահելով. Զէ՞նչ ետր.

[1] Եփես. Դ. 11. 12.

[illegible] որ վերջին [illegible] [illegible], եթէ որ-
[illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible]
[illegible] վերջին [illegible] Նոյա՛[1]: Եւ որ ոք ասիցէ
բան զՈրդւոյ մարդոյ, թողցի նմա. բայց որ
զՀոգւոյն Սրբոյ ասիցէ՝ մի թողցի նմա, մի
յայսմ աշխարհի, և մի ի հանդերձելումն[2]:

*Եթէ հանդերձեալ աշխարհում թողութիւն կայ, պարտք է կենդանի եկեղեցւոյն որ աղօթէ մեղաւոր ննջեցելոց համար։*

*Նա՛ որ մոլորութեան յարելով իւր եկեղեցին ձգած է, այլ և յոյս չը պիտի դնէ նորա օգնութեան վերայ, վասն զի ուրացութեամբ մեղանչեց այն ամեն շնորհաց դէմ՝ զորս ինքն արդէն մերժել հեռացրել է իրանից. այնպիսին միայն իւր անձին համար կորստեան վիհ չը բացաւ, այլ ուրիշները և գայթակղեցուց*

---

[1] Ա. Կորն. ԺԱ. 29։

[2] Մատ. ԺԲ. 32։

իւր չար օրինակով. ուստի կը նմանի այն մոլորամիտ Դիոտրեփեսին, որ կը թշնամանէր Քրիստոսի եկեղեցին, հակառակելով առաքելոց քարոզութեան։ Այս ազգատեաց չարը՝ իւր հեռանալը բաւ չը համարելով՝ ուրիշներուն եւ կաշխատէր հեռացնել ազգէն և եկեղեցիէն, որի համար Յովհաննէս աւետարանիչը կը գրէ Գայիոսի եկեղեցւոյն, [illegible][1]։

Արդարև մեծ յանցանք կը գործէ նա՝ որ իւր եկեղեցին կը թողու. այնպիսին կը համարուի ազգատեաց, խաբեբայ, և

[1] Գ. Յովհ. Ա. 9.

մոլորեալ. զի եթէ մեղք անգամ չունենայ, սուրբ եկեղեցւոյ և ազգի դէմ ունեցած ատելութիւնը աններելի յանցանք է. [illegible] Մեկ. ժամագ. երես 79։

Պօղոս առաքեալ ամեն պատուիրանի գլուխ և առաքինութեան հոգի՝ սէրը ճանաչելով՝ աստուածսիրութիւն և եղբայրսիրութիւն կը քարոզէ, գրելով Կորնթացւոց. բաւական չէ կասէ՝ քրիստոնեայ լինելուն համար միմիայն հաւատոյ դաւանութիւնը՝ և աստուածպաշտութիւնը, այլ հարկաւոր է եղբայրսիրութեան յօդիւ կապուած լինել միմեանց հետ. որ եկեղեցւոյ ամբողջութիւնը չը վնասուի, և իւրաքանչիւրի կատարեալ քրիստոնեայ լինելը իմացուի [1]։ Ահա այս է կատարեալ քրիստո-

[1] Ա. Կորն. ԺԴ. 1. Ա. Պետ. Դ. 8.

նէի գործը՝ որ իւր եկեղեցիէն չը բաժանուելով՝ սերտ սիրով կապուած կը մընայ նորա հետ մինչև ի մահ։ և նոյնը կը ցանկայ ամեն ուղղափառ ազգաց համար, և ոչ մէկին չի ատեր, որ հակառակ է աստուածային օրինաց և պատուիրանաց։

Մոլորութեան մէջ թակարդելու համար աղանդաւորք կը փորձեն մոլորելոյն տրամադրութիւնը, իսկզբան՝ կը զգուշանան կրօնի սրբութեան, և նորա ճշմարտութեանց դէմ խօսել, և երբ կը համոզեն և կը դարձնեն իրանց կողմը. ապա կը սկսեն քննադատել եկեղեցւոյ արտաքին արարողութիւնները, և աստի կանցնին դատապարտելու եկեղեցւոյ ներքին սրբարար խորհուրդները, զոր Յիսուս ինքն տուաւ եկեղեցւոյն։

Մոլորութեան տարածելու մի մեծ միջոց՝ որի համար մի այլ անգամ խօսած եմ, աղանդաւորաց գրքերն են, որ մի-

անդամայն աղաւաղուած և խանգարուած լինելով՝ զուրկ են ուղիղ վարդապետութենէն, որոնք ընթերցողի հաւատքը կը տկարացնեն, տարակուսութիւն և անձկութիւն կառաջացնեն նորա մէջ. կը կաշկանդեն ուղիղ հետևութիւն հանելու, և այնուհետև մահառիթ ուղի կը բացուի նորա առջև, որ կը տանէ դէպի անհաւատութիւն։

Եւ երբ այս ճանապարհաւ մոլորեցնելու դժուարութեան կը հանդիպին. դրամով խաբել կը սկսին. արտաքուստ այնպէս կերևնան ժողովրդոց, որպէս թէ կարեկցութենէ և ցաւակցութենէ ստիպուած մարդասիրութիւն կը գործեն. ահա այսպիսի, և սոցա նման խորամանկութիւններ գործ կը դնեն. հաւատացեալը անհաւատի և սրբապղծի կարգը դասելով, այսպիսիններէն էր՝ որ Պօղոս կը զգուշացնէր, շահասիրութեան դիտմամբ սրբապիղծ չը լինել՝ այլ ճըշ-

մարտութեան վերայ հաստատ մնալով ուրացութեան ոչ մի նշան ցոյց չը տալ՝ թէ արտաքուստ և թէ ի ներքուստ, զի «սրտիւ հաւատայ յարդարութիւն և բերանով խոստովանի ի փրկութիւն»[1],

Նոքա կուրանան հաւատը, որոց միտքը ուղիղ չէ՝ որոնք հաւատոյ ճշմարտութեան վերայ գաղափար չունին, որը հիմնուած է մարգարէական և առաքելական գրուածոց վերայ՝ «ապա այսուհետև ոչ էք օտարք և պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց և ընտանիք Աստուծոյ, շինեալ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, որոյ է գլուխ անկեան Յիսուս Քրիստոս»[2]։ Զի թէև առաքեալք ողջամիտ վարդապետութեամբ և ուղղափառ դաւանութեամբ կոչուեցան հիմն և վէմ հաւատոյ եկեղեցւոյ. և մարգարէք Քրիստոսի գալս-

[1] Հռոմ. Ժ. 10.

[2] Եփես. Բ. 19.

տեան և տնօրինական խորհրդոց վերայ արած մարգարէութեամբ, և եկեղեցւոյ հայրապետք և վարդապետք ըստ ուղիղ վարդապետութեան, բայց միայն Յիսուս Քրիստոս է իսկապէս գլուխ եկեղեցւոյ. ուսուցիչ ճշմարտութեան, և առաջին հիմն հաւատոյ շինութեան. իսկ հաւատացեալները նորա բարոյական մարմինը և անդամներն են. Դուք մարմին Քրիստոսի էք և անդամք անդամոց նորա[1]. Քրիստոսի եկեղեցին կը կոչուի զինուորեալ, անդրանկաց կամ յաղթական. զինուորեալ եկեղեցին երկրի վերայ եղած կենդանի հաւատացեալներն են, որոնք աշխարհային մոլութեանց և մոլորութեանց դէմ պատերազմելու համար կասուին և հոգևոր զինուոր[2]. իսկ անդրանկաց կամ

---

[1] Ա. Կորն. ԺԲ. 27. Եփես. Ե. 23.
[2] Բ. Տիմ. Բ. 3. Բ. Կորն. Ժ. 3, 4.

յաղթական եկեղեցին սրբոց հոգիներն են, որ երկնքի արքայութեան մէջ կը հանգչին[3]։

Ուստի եկեղեցի՝ ոչ միայն երկրի վերայ գտնուած հաւատացեալները կասուին, այլ և միանգամայն արքայութեան մէջ եղած սուրբ հոգիները, և Յիսուս Քրիստոս՝ է իբրև ընդհանրական գլուխ եկեղեցւոյ՝ թէ յերկինս և թէ յերկրի, և ամենքը նորա բարոյական մարմին և անդամ կը կոչուին[4]։ Ճշմարիտ հաւատը՝ բոլորովին հեռի լինելով մոլորութենէն կարթնացնէ մարդու մէջ առ Աստուած սէր և յաւիտենական կենաց ժառանգութեան հաստատ յոյս, կը լուսաւորէ մարդու միտքը, կենդանի հաւատոյ հետ կը միանան յաւիտենական բարիքները և

---

[3] Եբր. ԺԲ 22. Յայտ. Բ. 5.

[4] Եփես. Ա. 7. 10.

*վայելելու հաստատուն սէրը, որին կըսպասէ ամեն ով վստահութեամբ, և որ աշխարհիս մէջ ամենէն մեծ մխիթարութիւնը և երջանկութիւնն է։*

## ՑԱՆԿ

Գլուխ. Երես.

Ա. Քրիստոսի սուրբ Եկեղեցւոյ անշարժութիւնը, կրած հալածանքը, առաջին դարերու աղանդաւորները, և նոցա մոլորութիւնքը. . . 1

Բ. Չորրորդ դարու աղանդաւորք և նոցա մոլորութիւնք. Ջատագովք սուրբ եկեղեցւոյ ուղիղ վարդապետութեան. . 10

Գ. Լուտերի և նորա հետևողաց մոլորութիւնքը. . . 18

Դ. Եկեղեցին և կրօնը. Եկեղեցւոյ սրբութիւնը և առաքելականութիւնը. Կրօնի նշանը. Աղանդաւորաց հակառակութիւնը իրարու դէմ. . . 33

Ե. Եկեղեցւոյ և կրօնի միութիւ-

նը և գերապանցութիւնը· Ե-
կեղեցին չէ անտեսանելի ըստ
աղանդաւորաց· Եկեղեցւոյ
տարածողք· Աղանդաւորաց
անմիաբանութիւնը . . 47
Զ. Յաղթական և զինուորեալ
եկեղեցւոյ պաշտօնը· Կուսա-
կրօնութիւնը· Աղանդաւորաց
մոլորութիւնը եկեղեցւոյ դէմ· 58
Է. Մարդեղութիւնն Յիսուսի. 68
Ը. Քահանայական կոչումը· և
աղանդաւորաց թիւր ըմբռ-
նումը· Սուրբ գրքի վաւերա-
կանութիւնը . . . 78
Թ. Ապաշխարութեան և Հաղոր-
դութեան խորհուրդը. , 92
Ժ. Մկրտութեան և Դրոշմի խոր-
հրդոյ սրբարար և զօրա-
ցուցիչ ներգործութիւնը ըն-
դունողին վերայ. . . 108
ԺԱ. Աստուծոյ անհուն գթու-

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄ.

թիւնը և մարդոյ պարտականութիւնը առ Աստուած. . 119
ԺԲ. Եկեղեցւոյ կարգադրութիւնը, աւանդութիւնը, և արարողութիւնը, և աղանդաւորաց մոլորութիւնը. . . 126
ԺԳ. Պահեցողութեան հիմն սուրբ գիրքն է. . . . 134
ԺԴ. Քրիստոսի սուրբ եկեղեցին յարգութիւն կընծայէ սրբոց, կընդունի նոցա բարեխօսութիւնը և կը մերժէ կռապաշտից մոլորութիւնքը. . 156
ԺԵ. Սրբոց պատկերաց և մասանց յարգութիւնք՝ չեն հակառակ Աստուծոյ, և չհամարուիր կռապաշտութիւն ըստ աղանդաւորաց. . . . 175
ԺԶ. Մարդոյ վախճանը Աստուծոյ շնորհաց նկատմամբ, և մեղանչելը եկեղեցւոյ շնորհաց դէմ [illegible]4

ՍՏՈՒԳՎ " Ծ է 1971 Թ.